As one of my Azeri friends said, “Many countries have problems with each other, but every problem has a solution.” Our ancestors have failed to find a solution. But today’s motivated youth will not leave any stone unturned in their quest for justice, world peace, and friendship. The youth can change the whole outlook of their country. Today’s youth represent a new beginning; a new generation of open-minded people who believe nothing is impossible.

And so are you, my dear pen pal. Thank you for being open-minded and accepting. Reading our peace letters means that you are already one step ahead. Can’t wait to read your response.

Sincerely yours,

Milena

\* \* \*

Dear Milena,

I've read your letter and had mixed feelings. Among these feelings was gladness that a 16-year-old young lady is so peace-loving. On the other hand, I had a feeling of regret that you praise your nation and your people. I will now explain my feelings in this letter.

Milena, I live in Baku and I am Azerbaijani. But if you'd like to give a name to my status, I'm an internally displaced person. My family was violently expelled from their lands in the past. I don't want to speak about the reasons for that incident, because beyond my status and your being Armenian, we are human beings created by God. I want to talk about the values of peace and humanity.

I was especially attracted to your letter among others. Dreaming of peace at 16 and being willing to help the injured without differentiating between them is truly noble. If you want peace, want it with all your heart, I want to ask you for a favor. When you feel peace, just be Milena, and not a representative of the Armenian nation. I will do the same. When I wish for peace between our states and for the whole world, I become just a girl who wants to see peace and help achieve peace. Then I try to forget about national identity and past incidents. It's very pleasing that under the same blue sky, you and I wish for a happy and peaceful life for both sides and for all humanity. Let the two of us – you and I, “US” – seek peace.

All human values – like justice and humanism – are more important than egos, national identity, revenge, and hatred. I write this letter with a deep sense of responsibility, and I wish that both of us keep the value of peace in our hearts. There is one thing that I want you to remember. You are not

Armenian Milena to me. You are Milena, a 16-year-old peace advocate with a compassionate heart and good intentions, and I wish you to always stay that way.

Best regards,

Gunel – a young girl seeking peace

## **Arayik – Togrul**

Hello My Dear and Respectable Friend,

I'm a kind and peaceful young man like you. I'd like to share my story, and express my opinion about the relations of our countries and their solution.

I was born into a family from Artsakh, and my father took part in the Artsakh War. There has always been an anti-Azerbaijani mood and atmosphere in my family, which intensified during the April 2016 events when I served in the military.

After service, I visited my uncle in Moscow, and this had a great impact on my attitude. I was introduced to my brother's friend, who was Azerbaijani. Communicating with him and getting to know him, I realized that it is only at the state level that our countries dislike each other, and how propaganda is used to sow hostility among ordinary people.

None of us want victims in our families. On the contrary, you and I are lively young men with our future in our hands, and we don't need anything else but peace, so why not fight for peace? Imagine, for a moment, that we are fellow countrymen, as it was years before our birth. At that time, everything was wonderful and peaceful, as there was no barbed wire separating us. We should strive for this again, and fight with every possible peaceful means.

I encourage and persuade all my friends to fight a peaceful fight, and I am sure you will do the same and will take one more step towards a peaceful future.

With love and respect from a young Armenian man,

Arayik

\* \* \*

Hi Arayik,

How are you? How is it going? I've read your message about peace, and though we may have differences, it doesn't mean I don't want peace. Usually everyone wants peace and tranquility in their country. Is there a sister who would like his brother to die? Or is there a mother who would like to see her son's inanimate body?

Every country that wants to establish peace should first be at peace with the minority groups living within its borders, as well as with its neighboring countries.

The truth is that I too love peace. I don't want tears shed on either side, because I am a cosmopolitan. I want to tell you a secret (though before the secret reaches you, others will have read this): I owe my life to an Armenian girl. She knew that I was Azerbaijani, and though she was Armenian, she still rescued me from the Black Sea where I was drowning and gave me artificial respiration. A nation should not be judged by a few people and the regime.

With wishes of eternal peace,

Togrul

## **Diana – Writer**

Hello My Dear Friend,

I am Diana. I'm writing to you from your neighboring country: Armenia. I am 20 years old. I study at the linguistic university and want to become an English language specialist. Like others, I'm full of ideas, desires, and aspirations, but besides these, I have a big and important dream: peace. This has different meanings for different people, but one thing is certain: regardless of age, gender, and nationality, everyone wants to live under a peaceful sky.

For me, peace is the friendship between you and me, and the solidarity between our countries. Both you and I have studied the history of our countries at school, and we both know that besides animosity and war, our countries have also had years of love and friendship.

It's true that we are the bearers of our history, and it is history that has shaped – and is shaping – us, our nations, and our lifestyles. Neither me, nor you, nor anyone else, can erase or forget the many painful events that, in my opinion, have given nothing; they have only taken away many lives.

In the midst of fighting for land – win or lose – the lives of people who are so full of aspirations, goals, and a desire to live can suddenly disappear and leave us forever. Now it's my and your turn, the turn of our generation. I want our fight to differ from the rest. I want the past mistakes of our countries and the optimism of our generation to be our weapons.

Certainly it's not easy to solve the problem without conflict or weapons. But for a generation living in an age of technology, when everything is changing rapidly and information spreads in no time, it is possible and important that the issue is resolved through peaceful negotiations.

I want you, me, and all of us to pursue peace as the basis for establishing neighborly relations between our countries. The economy, education system, culture, and other important fields in both countries that are important for development suffer and are overlooked because of the tense military situation. Money spent on ammunition can instead be spent on economic development, and Karabakh can serve as a link between our countries to boost sales, tourism, and the exchange of resources and ideas.

Our countries are neighbors. We can't live apart from each other. We can lean on one another to improve the situation in both countries. Having a good ally is the best way to build a powerful and prosperous state. The time has come, and we can become allies step by step. It's our turn to fight, so let's do it with peace and solidarity.

I look forward to your letter.

With love,

Diana

\* \* \*

Dear Diana,

I'm writing from Baku, the same Baku that you know as an oil capital and a kingdom of wealth. If you have an acquaintance in your community who has been to Baku, I'd like you to tell them that Baku has changed a

lot and is more beautiful now. I hope I was able to present you the current state of Baku to some extent. I'm 20 years old, just like you. I'm going to become a lawyer. Just like you, I follow values and prioritize aspects of my identity; being a human being is the most important among them.

I do my best to contribute to the creation of an environment where a human being will live a quiet, peaceful life, and where human rights will be protected. In your letter, you describe the friendship and brotherhood between our nations in the past. In fact, it's pleasing to the ear. That's true. I've heard from my parents and teachers that there was a time when there was only "we" and it was before 1988. Now, there is "we and you." What ruined the "we" and created the "we and you" was the war. War is a terrible phenomenon, and it has left traces in our memories that can't be erased. It has cheapened the value of human life. It has made death commonplace.

Despite all this, it's very encouraging that the people, especially the youth, have hope for a peaceful settlement of the conflict. That peace should, of course, be fair. Our nations are destined to live together in peaceful neighborly relations in the near future, and this is inevitable. I believe that achieving peace in the region can lead to a breakthrough for development, and progress for both countries.

The war continues to rob us of success and brings pain through mournful stories of death. In response to the appeal for peace in your letter, I join you in being led by the principle of working towards the restoration of peace and justice.

Best wishes,

A law student always in pursuit of justice

## **Lidia – Gulshen**

Hello Dear Neighbor,

I am Lidia. Let me start my letter with a question: what do you understand by saying *peace*? The question *What is peace?* has numerous answers, and I'd like to share my viewpoint. We are now separated by hundreds of kilometers, religious beliefs, and controversial political views, but one thing is certain: the language of peace is the same throughout the world. Despite these differences, we have a major similarity: we're all HUMANS. We're humans who want to live our everyday lives free of anxiety and hostility. It's easy to be human, yet it's difficult to demonstrate human will to resolve an international conflict like this.

Let me tell you an interesting fact about Armenians. While making wishes during New Year, Armenian kids wish peace to the whole world. I've made such wishes myself. It's interesting how peace is an unrealistic wish for them, even though children are the greatest peacemakers.

The Velvet Revolution changed a lot in us, in our mindset and worldview. After a tenacious two-month fight, our youth demonstrated whose hands the future of the country is in. Now this same youth is ready to bypass the fence of hatred and spread waves of peace.

I know that the Armenian–Azerbaijani conflict will hardly be solved with one letter, but we can create a positive atmosphere for the further settlement of the situation. We can be the people who put an end to the

propaganda machine of hatred and hostility. Political interests shouldn't prevail over human relations.

If we try to go back in a time machine by a few decades, we'll see how our neighborly nations lived side by side. To this day, many remember their Azerbaijani friends. It all changed after the war.

Only war divides reality into black and white colors. But we can be the people who will break this duality. We need to look at the situation not only through a prism just true to us, but to step out of the prism to look further, beyond the constraints of comfort. We can shape our path to peace, because it is us who can change the world.

Respectfully yours,

Lidia

\* \* \*

Hello Lidia,

Thank you for your letter. I'm an advocate of peace. Both you and I know what peace is. Let's put it this way: peace is the path that leads us to prosperity. And who doesn't want peace? I believe everyone wants peace. The problem is how to get there.

I love Azerbaijan. But I also understand that our path to peace is very intricate. I don't know if you've heard about the butterfly effect. In a few words, it's about creating a huge effect with small steps. I believe that one day we will achieve peace. I believe in myself. I'll do what I can. Both sides should work in order to build a healthy peace.

More than 30 years have passed, but my relatives can't forget the horror and occupation of the lands. They can't forget; not because someone needs to leave that land, but because they have memories there and promises given to the land. Let's not forget either that it hasn't always been so, and our nations have lived together in prosperity. But there have been problems.

I feel empathy for both sides when I read about the death of soldiers in the news, when I hear about young people whose dreams will remain unrealized, when I know I can't return the martyred son to the mourning mother. I support JUSTICE for you and your friends, the kind that won't hurt either side; justice that will allow my compatriots to breathe in the scent of their land before they leave this life. You know, so many elderly people died without seeing Karabakh. But what can be done?

I don't think that achieving peace is a utopian ideal. We can live together happily in our native Karabakh again. Sometimes we need to have a deeper faith towards our common desire.

See you when peace is established, and the chains are broken on the Karabakh border.

See you soon,

Gulshen

## **Jemma–Turan**

Dear Friend,

I am writing to you with high hopes that we will meet one day.

First of all, I am Jemma, 19 years old. As you're reading my letter and trying to draw a picture of me in your mind's eye, just imagine me with curly hair. That's me, fuzzy Jemma!

I want you to know one thing. I have wonderful Azerbaijani friends and neither religion nor national identity nor hundreds of kilometers have ever hindered us from staying good friends.

I know that like me you also believe that we can live in peace. Our future depends on me, you, and other young people like us.

You know, throughout my conscious life, I have always wished to participate in a project like this, and now that I have the opportunity, I am writing to you with love and great hope. I am a young person like you, full of desire to establish peace.

I've read a lot, dug through the pages of history to understand the origin and reasons of the conflict. One simple thing I have come to realize is that this fight will never be resolved with military power. We need simple human feelings – love, conscience, compassion, an ability to listen and understand – to resolve the problem. These are human feelings and emotions possessed by each of us. As I have already said, I have great faith in myself, you, and other young people like us who want to live in

peace. Thank you for sharing my feelings. I am sure that one day we will make the barbed wire between us transform and blossom like flowers.

Jemma

\* \* \*

Hi Dear Jemma,

First of all, thank you for your letter and message about peace. My name is Turan. I major in economics. I've read your letter and the others as well, and I'm happy to get acquainted with intellectual young people like you, even from afar.

Now, let's address the main topic. First of all, there have been too many unnecessary casualties during this conflict. My cousin, Samir Aghayev, died as a result of the conflict on March 23, 2010. This was a major loss for me and my family. At first, I was, of course, overwhelmed with aggression against you, but then I realized that the death of an Armenian or an Azerbaijani man is in vain. If those young people lived, they would have their ideas, and would have brought contribution to science and society. Unfortunately, what is done can't be undone, but let it not repeat because I'm sure neither you nor we want war or human loss.

The second issue is that this conflict has been too expensive for both countries. If the resources allocated for the army were spent on education, medicine, and for the increase of welfare, our citizens would have a higher standard of living.

I want peace as you do, and I want this game between our countries to end. This game has caused much loss and expense, but enough is enough.

It's time for us to stop this game and eliminate the plans of senior officials whose aim is to fill their pockets this way.

Your nationality doesn't matter to me. I know you not as a 19-year-old young Armenian lady named Jemma, but as a peace-loving, sincere human named Jemma. I hope to meet one day, and to discuss these questions in person.

Respectfully,

Turan – a young man who wants peace

## **Shushanik – Fatima**

Hello My Dear Friend,

I'd like to share with you my thoughts on peace. Peace is the driving force of life that inspires happiness and harmony. In order to spread peace in the world, there should first be peace in people's minds. If one's mind is full of anger, then it's very difficult to achieve peace. I think we should rid ourselves of inner hatred, because war is inside of us, not outside. We can never find peace in the outside world until we establish internal peace.

We don't need any peacebuilding organizations if we can't be at peace with our own selves. There even exists a Nobel Peace Prize, but there is no peace in the world. No material value is worth a human being losing his sense of peace. Mother Teresa said, "I will never attend an anti-war rally; if you have a peace rally, invite me." So let's organize a movement that leads to peace.

Everyone sees peace in their own way. I think that this small letter has great meaning. They say it's easy to start war, but difficult to end it. Let's change the narrative and show the world that we are for peace, and only peace!

I am Shushanik and I am Armenian. I choose to trust and believe in peace only. You do too.

Shushanik

\* \* \*

Hi Shushanik,

How are you? I've read your letter about peace, and can state that many of our thoughts and ideas coincide. Yes, peace is the resolution of conflict without violence, and we know that war disturbs an improved quality of life facilitated by peaceful conditions.

Peace thrives when people are content, and not at war with each other. The heart always desires peace and quiet; that wars end, that mothers do not have to live in worry, and that frontier residents may find peace at night.

I'm against future generations who say, "They are our enemies." Instead they should say, "They are your friends, and you should share with them." I am glad that you agree with me.

From your dear friend, full of hope to live in a peaceful world.

Fatima

ՀԱՅԵՐԵՆ  
ԲԱԺԻՆ



## ԿԱԶՄԱԿԵՐՊՉԻ ՆԱԽԱԲԱՆ

*Եթե ուզում ես արագ գնալ, գնա՛ մենակ,  
իսկ եթե հեռու, ապա՝ միասին:*

Աֆրիկական ասացվածք

Մանուկները լույս աշխարհ չեն գալիս ատելությունը սրտներում:  
Ատելությունը սովորում են: Այն ուսուցանվում է: Ատելությունը  
գործիք է, որն օգտագործվում է իշխանություն ունեցողների կողմից՝  
վախ սերմանելու նպատակով: Վախեցած մարդկանց վերահսկելն  
ավելի հեշտ է, իսկ խաղաղությունը խեղաթուրվում է՝ ներկայացվելով  
որպես անարդյունավետ հարմարավետություն, մինչ, իրականում, այն  
առողջ հասարակության հիմքն է: Որպես այդպիսին, խաղաղության  
իրագործումը որոշակի համատեքստերում կարող է մեծ քաջություն  
պահանջել: Երբ հակամարտության աղմուկն այնքան է ահագնանում,  
որ մենք այնս չենք կարողանում տեսնել փոխակերպման քայլերը մեր  
առջև, խաղաղության խոսքերը կարող են որոտալ ավելի բարձր, քան  
որևէ ժամ:

2018 և 2019 թվականների «Նամակներ հանուն խաղաղության»  
ծրագրի խմբերը Հայաստանում և Ադրբեյջանում՝ 52 երիտասարդ փակ  
սահմանի երկու կողմից, արտասովոր քայլ արեցին: Չնայած երկու  
կողմի համատարած ռազմականացմանն ու ատելության խոսքին՝ այս  
անձինք այլընտրանքային ճանապարհ գծանշեցին: Նրանք  
նախընտրեցին երկխոսությունը լռությունից: Նրանք նախընտրեցին  
հույսն ատելությունից: Նրանք նախընտրեցին մարդկայինը՝ իր բնորոշ  
մարտահրավերներով, պատերազմի դաժանությունից:

Նամակները չեն լուծի այն խնդիրները, որ կարծրացնում են հարաբերությունները Հայաստանի և Ադրբեջանի կառավարությունների միջև: Մարտահրավերները բազմակողմանի են: Լեռնային Ղարաբաղի (ԼՂ) հակամարտությունը դարձել է այսերգի գագաթ, որի արտացոլանքն են տարածքային վեճերը, պատերազմը և որ ամենավատն է՝ անմեղ քաղաքացիների կորուստը երկու կողմից էլ: Վրդովմունքն ապշեցուցիչ է՝ հատկապես հաշվի առնելով այն հանգամանքը, որ արտաքին ուժերն այս ատելությունը ծառայեցնում են իրենց շահերին: Կարծես, թե՛ Հայաստանը, թե՛ Ադրբեջանը կենտրոնացած են հաղթելու, ուժ ստեղծելու ոչ թե մյուսի *հետ*, այլ՝ մյուսի *նկատմամբ*: Իրավիճակի նման զարգացման հետևանքով մենք կորցնում ենք փոխզիջման հնարավորությունը, երբ երկու կողմն էլ մի փոքր կորցնում են փոխադարձ գործընկերություն ձեռք բերելու նպատակով: Առանց փոխզիջման՝ հակամարտությունն աճում է՝ իր հետ մեծացնելով կորուստները բոլոր ներգրավված կողմերից:

Նամակները, այնուամենայնիվ, ծառայում են մի նպատակի, որը չի հաջողվել ո՛չ կառավարությունների, ո՛չ էլ զինված ուժերի մոտ, այն է՝ առաջին քայլը հակամարտության փոխակերպման ճանապարհին: Հայաստանի, Ադրբեջանի և Լեռնային Ղարաբաղի ժողովուրդներն արժանի են ունենալ միմյանց հետ շփվելու հնարավորությունը: Նրանք արժանի են հնարավորություն ունենալ նվիրվելու խաղաղությանը ճիշտ այնպես, ինչպես նրանցից պահանջվում է նվիրվել պատերազմին պարտադիր զինվորական ծառայության միջոցով: Նրանք արժանի են ունենալ կյանք, որը չի ձևավորվում ժառանգված թշնամության և միմյանց հետ վիճող վերնախավերի կողմից: Նրանք արժանի են ապրել ներդաշնակ տարածաշրջանում, միավորվել և արտահայտել այն, ինչը կրիսի այդ միասնությունից:

Ես չունեմ պատասխաններ, սակայն այն գեղեցիկ էջերում, որ գրել են ՆՀԽ-ի մասնակիցները, ցանկած են փոխակերպման սերմերը: Ես

այնքան բան եմ սովորել այս երիտասարդներից, և հավատացած եմ, որ յուրաքանչյուր ոք, ով բավականաչափ խիզախություն կունենա կարդալու նրանց խոսքներն այս գրքում, կհասկանա, թե ինչու գոյություն ունի ավելի լավ ճանապարհ: Հույս ունեմ, որ այս էջերը, սիրելի՛ ընթերցող, քեզ համար կլինեն նույնքան լուսավորող, որքան եղել են ինձ համար:

*Րաֆֆի Ձո Վարդանեան*

## ՆԱԽԱԲԱՆ (ՀԱՅԱՍՏԱՆ)

*Խաղաղությունը գին ունի*

Հայ-ադրբեջանական պետական սահմանի և շփման գծի երկայնքով 1994-ի մայիսից պահպանվող «ոչ խաղաղություն, ոչ պատերազմ» իրավիճակը գին ունի և այդ գինը վճարում են 18–20–ամյա հայ և ադրբեջանցի տղաները:

1994-ից ի վեր հազարավոր հայ և ադրբեջանցի տղաներ են դարձել դիպուկահարների ու դիվերսիաների զոհ: Ահա այսպիսի թանկ գին ենք վճարում «ոչ խաղաղություն, ոչ պատերազմ»-ի համար:

Իրականում դա գին չէ սովորական իմաստով, այլ՝ դժբախտ ընտանիքներ, որդեկորույս մայրեր, մինչև կյանքի մայրամուտ որդիներին սպասող հայրեր, քույրեր ու եղբայրներ: Ու քանի դեռ ողբերգությունը չի եկել մեր տուն, հաճախ մենք սահմաններում ընկնող տղաներին նայում ենք որպես տխուր վիճակագրություն, ցավ ենք ապրում նրանց մահվան համար, բայց կարճ ժամանակ անց մոռանում ու կրկին վերադառնում «ոչ խաղաղություն, ոչ պատերազմ» իրավիճակին, մինչև այն պահը, երբ լրատվամիջոցները մեկ տողով հայտնում են հերթական զինվորի մահը:

Ղարաբաղյան «սառեցված» հակամարտությունը, ինչպես մոլորակի այլ զինված բախում, ունի լուծում: Դրան հասնելու համար լուծում պետք է գտնել միաժամանակ երեք հարթություններում:

*Առաջին*, խոշոր տերությունները, տվյալ դեպքում՝ Միացյալ Նահանգները, Ռուսաստանը և Ֆրանսիան, որպես ԵԱՀԿ Մինսկի

խմբի եռանախագահողներ, պետք է շահագրգռված լինեն: Ճիշտ է, նրանք միջնորդներ են միայն, սակայն իրականում, նրանք կարող են շատ բան անել խաղաղության կառուցման դժվար ճանապարհին, եթե դա, իհարկե, ցանկանում են հակամարտության մեջ ներգրավված կառավարությունները:

Բայց Միացյալ Նահանգները, Ռուսաստանը և Ֆրանսիան բժիշկներ չեն, որ բուժեն մեզ: Լավագույն դեպքում նրանք մեզ կարող են տալ բուժման դառը դեղահատը և դեղատոմսը: Մենք՝ հայերն ու ադրբեջանցիները, պետք է ցանկանանք բուժվել հակամարտության վերքերից ու ապաքինվել հակամարտությանը ուղեկցող ատելության քարոզից, պատերազմի սպառնալիքից և ռազմատենչ հռետորաբանությունից:

*Երկրորդ*, լուծումն ու խաղաղությունը պետք է հետաքրքրի հակամարտության մեջ ներգրավված բոլոր կառավարություններին: Անկասկած, որևէ լուծում պարունակում է ռիսկ տվյալ վարչակարգի համար, քանի որ կարգավորման ճանապարհն անցնում է ցավալի փոխզիջումներով: Կառավարությունները և նրանց վերահսկողության տակ գտնվող լրատվամիջոցները պետք է վերջ տան ռազմատենչ հռետորաբանությանը, պատերազմական քարոզչությանը, ատելության խոսքին, քանի որ, երբ արդեն իրականում լուծում ես ուզում գտնել, քո իսկ կողմից սերմանած ու անեցրած հակահայկականությունը կամ հակաադրբեջանականությունը աշխատում է քո դեմ, որովհետև քո ժողովրդին ու հանրությանը կերակրել ես ատելությամբ, իսկ խաղաղության, հանդուրժողականության համար տեղ չես թողել:

*Երրորդ*, լուծումը պետք է ընդունելի լինի հակամարտության մեջ ներգրավված ժողովուրդների՝ հանրությունների համար:

Ահա այս երեք մակարդակներում, ընդ որում՝ միաժամանակ, պետք է հասնել լուծման ու հարմոնիայի:

Բայց կա նաև չորրորդ մակարդակը, որը տեսանելի չէ: Հայերն ու ադրբեջանցիները նախ պետք է իրենց հոգիներում, սրտերում ու մտքերում հասնեն խաղաղության: Նրանք պետք է գիտակցեն, որ խաղաղությունը ձեռնտու է և շահեկան: Նրանք պետք է հաշտվեն այն մտքի հետ, որ խաղաղության այլընտրանքը նոր պատերազմն է՝ անկանխատեսելի հետևանքներով:

Հայերը և ադրբեջանցիները, ինչպես աշխարհի բոլոր հարևան ժողովուրդները, խաղաղություն են ուզում: Բայց խաղաղությունը գին ունի, որը, սակայն, չեն ցանկանում վճարել կամ պատրաստ չեն վճարել նրանք: Իսկ երբ դու չես ուզում կամ պատրաստ չես գին վճարել, այդ գինը վճարում են 18–20–ամյա հայ և ադրբեջանցի տղաները:

Հայերը և ադրբեջանցիները համոզված են, որ աշխարհագրությունը բարեհաճ չի գտնվել իրենց նկատմամբ: Աշխարհագրությունը, սակայն, ընտրություն չէ: Հետևաբար, հայերն ու ադրբեջանցիները այլ ընտրություն չունեն, քան հաշտվել անբարեհաճ աշխարհագրության հետ: Վաղ թե ուշ հայերն ու ադրբեջանցիները հաշտվելու են այն իրականության հետ, որ նրանք հարևաններ են, իսկ հարևանները կարող են պատերազմել մեկ, տասը տարի կամ գուցե ավելի, բայց ոչ՝ հավերժ:

Հայերը հնդեվրոպացիներ են և քրիստոնյա: Ադրբեջանցիները թյուրքական լեզվաընտանիքի մաս են կազմում և մուսուլման են: Բայց կրոնը, լեզուն կամ ծագումը անհամատեղելի խոչընդոտներ չեն, եթե հարևան ժողովուրդները խաղաղություն են ուզում և պատրաստ են վճարել դրա համար: Վճարել, բայց ոչ 18–20 տարեկան տղաների կյանքի գնով:

Պատերազմի ամենաթեժ շրջանում՝ 1992–1994 թվականներին, հայերի և ադրբեջանցիների միջև պահպանվել էին շփումներ: Երբ հայկական բնակավայրի գյուղացին գերի էր ընկնում, մարդիկ ոչ թե Կարմիր խաչին էին դիմում կամ իրենց երկրի բարձրագույն ղեկավարությանը, այլ հարևան ադրբեջանական գյուղի իրենց ծանոթներին, որոնց հետ հաց էին կիսել: Նույնն անում էին ադրբեջանցիները. երբ նեղն էին ընկնում, դիմում էին իրենց հայ ծանոթներին: Բազմաթիվ են դեպքերը, երբ հարևան գյուղերը կարողանում էին հարցեր լուծել՝ օգնել միմյանց:

Այսօր այդ գյուղերում կյանքից հեռանում է այն սերունդը, որը շփվել էր հարևանի հետ: Այդ գյուղերում մեծանում է սերունդ, որը չի տեսել կենդանի հայ կամ ադրբեջանցի: Նրանք մեծանում են նոր պատերազմի սպառնալիքի ու հարևան ժողովրդի նկատմամբ ատելության քարոզի պայմաններում:

Հայ–ադրբեջանական երկխոսությունը կամ շփումը այսօր ավելի շատ պաշտոնական բնույթ ունի: Ժամանակ առ ժամանակ աշխարհի տարբեր քաղաքներում բանակցում են Հայաստանի և Ադրբեջանի ղեկավարները և արտաքին գործերի նախարարները: Ավելի հաճախ շփվում են հայ և ադրբեջանական քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները:

Ղարաբաղյան հակամարտության կարգավորումը պետք է սկսել միմյանց հետ խոսելուց: Ինչպե՞ս կարող ենք լուծել անլուծելի թվացող մի խնդիր, երբ մենք չենք անում առաջին քայլը՝ միմյանց հետ չենք խոսում: Միմյանց նամակ գրող հայ և ադրբեջանցի երիտասարդները սկսել են ճիշտ տեղից. նրանց ասում են, որ պետք է խոսել իրար հետ և սկսել են խոսել:

Գուցե նրանց օգտագործած լեզուներն ու բառապաշարը դեռ ամբողջությամբ հասկանալի չեն միմյանց, բայց պետք է շարունակել գրել նամակներ ու խոսել միմյանց հետ: Նրանց նամակները,

հատկապես դրանց բովանդակությունը, կարող են դառնալ հայ և ադրբեջանական հասարակության լայն շերտերի քննադատության առարկա, բայց քննադատությունից չպետք է վախենալ:

Անշուշտ, նամակներ գրելով կամ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների երկխոսությամբ հնարավոր չէ դարաբաղյան կարգավորման լուծումը գտնել և հասնել արժանապատիվ, բոլոր կողմերի համար ընդունելի խաղաղության: Բայց երբ պետական մակարդակով ատելություն, պատերազմական քարոզչություն ու ռազմատենչ հռետորաբանություն է քարոզվում, երբ սահմանները փակ են ականապատ դաշտերով, նամակներն ու երկխոսությունը առանձնահատուկ իմաստ ու նշանակություն են ձեռք բերում:

Սա էլ ընդունեք իմ նամակը՝ ուղղված միմյանց նամակներ գրող հայ և ադրբեջանցի երիտասարդներին:

*Թաթուլ Հակոբյան*

Թաթուլ Հակոբյանը լրագրող է և հեղինակ երկու գրքերի՝ «Կանաչ ու սև. Արցախյան օրագիր» և «Հայացք Արարատից. Հայերը և թուրքերը»: Նա աշխատում է Սիվիլնեթում և հիմնադիրն է Հայկական ուսումնասիրությունների ԱՆԻ կենտրոնի:

## ՆԱԽԱԲԱՆ (ԱԴԴԲԵԶԱՆ)

«Ոսկու կարա՛ն ծիածանի մյուս կողմում» թե՛  
«Զգտե՛լ, փնտրե՛լ, գտնե՛լ և չնահանջե՛լ»  
Լորդ Ալֆրեդ Թենիսոն, «Ուլիսես»

Վերջերս խաղաղության թեմայով աշխատանք էի կատարում և այդ ընթացքում շատ վրդովվեցի: Ցանկանում էի պարզել, թե որտեղ ենք մենք գտնվում՝ հաշվի առնելով հայ և ադրբեջանական հասարակություններում առկա թշնամանքի քարոզչության չափազանց բարձր մակարդակը: Որքանո՞վ են հաջողում պատերազմի վերաբերյալ զրպարտություններն ու մեր հասարակություններում առկա մերժողականության բարձր մակարդակը: Արդյո՞ք հնարավոր է դիմակայել դրան սահմանափակ ռեսուրսներով: Հետևաբար՝ որպես վերնագիր ընտրեցի հետևյալ բանաձևը՝ «Կոնֆլիկտի կարգավորումը խաղաղ ճանապարհով. *անհրաժեշտանալի երազանք, թե՛ ձգտել, փնտրել, գտնել և չնահանջել*»: Այսինքն՝ պայքարը հանուն խաղաղության պետք է լինի նպատակաուղղված, կանխամտածված և կազմակերպված:

Անհրաժեշտ էր անկեղծորեն պատասխանել հետևյալ հարցերին. «Արդյո՞ք մենք՝ հանուն խաղաղության պայքարողներս, թույլ ենք ավելի թույլ, քան նրանք, ովքեր պատերազմ են խաղում: Որո՞նք են մեր սխալները: Ի՞նչ կարելի է անել: Ի՞նչ է կախված մեզանից, միջազգային կազմակերպություններից և միջազգային քաղաքական գործիչներից»: Հարցերը, որոնք պատասխան էին պահանջում, անթիվ էին, և անհրաժեշտ էր պատասխանել դրանց՝ հասկանալու, թե որ կողմ գնալ: «Камо ґрадемо?» (եկե՛ղ. սլավոներեն. «Ու՛ր ես գնում»): «Quo vadis?» (լատ). այսպես է կոչվում անվանի լեհ գրող Հենրիկ

Մենկեկի խորհրդանշական գիրքը, որի համար նա Նոբելյան մրցանակի է արժանացել: Գոյություն ունի գրքի երեք էկրանավորում: Կցանկանայի, որ հանուն արդարության պայքարող յուրաքանչյուր որ կարդա այս գիրքը կամ առնվազն դիտի ֆիլմը (2001 թ.): Այստեղ նկարագրվում է քրիստոնեության տարածումը Հռոմում, և սարսափելի տեսարանները ցույց են տալիս, թե ինչպես են մարդկանց հետապնդում իրենց հավատի համար, և թե նրանք որքան խիզախորեն են պայքարում իրենց իդեալների համար: «Kamo rryademi?», «Quo vadis?», «Ո՞ւր ես գնում» հարցը, ըստ Աստվածաշնչի, Պետրոսը տվել է Հիսուսին:

«Նրանց գաղտնի գրույցներից շատերը բարիք չեն բերում, եթե կոչ չեն անում ողորմության, բարության և մարդկանց հաշտեցնելու: Նրան, ով այս կերպ է վարվում՝ ձգտելով գոհացնել Ալլահին, մենք մեծ պարգևի ենք արժանացնում» ասված է Ղուրանում (ան–Նիսասուրահ 4–114):

Եվ ահա ինձ հրավիրում են հանդիպել և գրուցել հայ և ադրբեջանցի երիտասարդների համար նախատեսված «Նամակներ հանուն խաղաղության» նախագծի ադրբեջանցի մասնակիցների հետ: Ասել, որ ես հաճելիորեն զարմացած էի, նշանակում է ոչինչ չասել: Որքա՛ն անկեղծություն, միմյանց ավելի լավ ճանաչելու ցանկություն, միմյանց ձեռք մեկնելու և իրենց ժողովուրդներին հաշտեցնելու պատրաստակամություն:

Մեզ՝ խաղաղության ակտիվիստներիս, հաճախ ռոմանտիկ–իդեալիստ են անվանում: Իսկ մի՞թե դա ավելի լավ չէ, քան քաղաքական խաղերի փորձառու խաղացող լինելը, որ երկրները տանում է դաժանության և ավերման՝ պատճառ դառնալով գերության և կորուստների, մահվան, փախստականների և վիրավորների:

Մի՞թե ուժեղ չեն խաղաղության ակտիվիստները, որոնք չեն շեղվում իրենց ճանապարհից և փորձում են նպաստել կոնֆլիկտի խաղաղ կարգավորմանը՝ անտեսելով վտանգները, համոզելու փորձերն ու սպառնալիքները: Արդյո՞ք խելացի չեն նրանք, որ, չնայած իրենց փոքրաթիվ լինելուն ու սահմանափակ ռեսուրսներին, կարողանում են դիմակայել պատերազմի հսկայական արդյունաբերությանը՝ իր անսահմանափակ ռեսուրսներով:

Խաղաղարարները պատերազմ հրահրողներին հակադրվում են իրենց անխոնջ, անվախ ու հետևողական աշխատանքով՝ հանուն հակամարտության՝ երկու կողմերի համար ընդունելի լուծման վրա հիմնված խաղաղ և արդարացի կարգավորման:

Մենք վստահ ենք՝ հակամարտության լուծումը ռազմական ճանապարհով անհնար է: Կարելի է հաղթել որևէ մրցափուլ պատերազմում, սակայն պարտվող կողմը միշտ կցանկանա ռևանշ վերցնել: Միայն փոխըմբռնման վրա հիմնված միասնական որոշումը կարող է հակամարտությանը վերջնական լուծում տալ, իսկ ժողովուրդների հաշտեցումն անհրաժեշտ հիմք է դրա համար:

Խաղաղության կողմնակիցներն ունեն հակամարտության խաղաղ կարգավորման համար երկուստեք ընդունելի տարբերակի մշակման համար անհրաժեշտ ինտելեկտուալ ներուժը: Ղարաբաղյան խաղաղ կարգավորման համար հիմք կարող են հանդիսանալ կոնֆլիկտների կարգավորման միջազգային հաջողված նախադեպերը: Դրա համար անհրաժեշտ են հայ և ադրբեջանցի երիտասարդների և հայտնի փորձագետների, միջազգային, միջկառավարական կազմակերպությունների և միջազգային ՀԿ-ների միասնական ջանքերը և համատեղ աշխատանքը: Մենք դիմում ենք բոլորին. օգնե՛ք մեզ ստեղծել նախկինում զինված, ներկայումս՝ սառեցված դարաբաղյան հակամարտության՝ խաղաղ կարգավորման նախադեպ:

Օգտվելով առիթից՝ ցանկանում եմ շնորհակալություն հայտնել «Նամակներ հանուն խաղաղության» նախագծի հեղինակներին և համակարգողներին՝ Իլկին Ալիևին և Րաֆֆի Վարդանեանին, Եվրասիա համագործակցություն հիմնադրամին և մյուս բոլոր հաստատություններին և դոնոր կազմակերպություններին՝ նման բարի նախագծին աջակցելու համար և, իհարկե, բոլոր երիտասարդ մասնակիցներին՝ այս նամակները գրելու հարցում իրենց ցուցաբերած անկեղծության և քաջության համար. դրանք, անշուշտ, իրենց նպաստը կունենան իրականում իրար այնքան մոտ հայերի և ադրբեջանցիների միջև խաղաղության հաստատման գործում:

*Արզու Արդուլանա*

Արզու Արդուլանան Հելսինկյան միջազգային ասամբլեայի Ադրբեջանական ազգային կոմիտեի (ՀՄԱ ԱԱԿ) նախագահն է, Օլոֆ Պալմեի անվան միջազգային խաղաղության մրցանակաբաշխության դափնեկիր, ԵՄ և ԱՄՆ կառավարության դափնեկիր քաղաքացիական հասարակության և ժողովրդավարության կառուցման գործում ջանքերի համար, ինչպես նաև Քաղաքացիական հասարակության մրցանակակիր մարդկային ռեսուրսների և խաղաղարար գործունեության համար Նիդեռլանդների Հելսինկյան կոմիտեի կողմից:

# **ՆԱՄԱԿՆԵՐ ՀԱՆՈՒՆ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԱՐԺԵՔՆԵՐԸ**

## **ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ**

Նամակներ Հանուն Խաղաղության (ՆՀԽ) ծրագիրը կազմակերպում է հանդիպումներ, որոնք ներառում են ստեղծագործական գրի և կոնֆլիկտի վերափոխման վերաբերյալ քննարկումներ՝ կոնֆլիկտի ազդեցության գոտում գտնվող տարածաշրջաններում երկխոսությունը խրախուսելու նպատակով: 2018–2019 թթ.ամռանը ՆՀԽ–ն շարունակեց աշխատել ընդհանուր առմամբ 52 հայ և ադրբեջանցի երիտասարդների հետ (16–32 տարեկան), որոնք երկու կողմերի միջև խաղաղ ապագայի կարևորությունն ու դրա հնարավորությունները արտահայտող նամակներ գրեցին: Հանդիպումների ավարտին յուրաքանչյուր մասնակից մեկական նամակ գրեց, որն այնուհետև թարգմանվեց և հասանելի դարձավ երեք լեզվով՝ հայերեն, ադրբեջաներեն և անգլերեն: Նամակները փոխանակվեցին հայ և ադրբեջանցի մասնակիցների միջև, ինչպես նաև հրապարակվեցին [www.lettersforpeace.org](http://www.lettersforpeace.org) կայքում և այլուր: Ծրագրի նպատակը երիտասարդների ձայների շնորհիվ խաղաղության ուղիների որոնումն է՝ ներկայացնելով հարաբերությունների այլընտրանքային տարբերակ հայերի և ադրբեջանցիների միջև տարածաշրջանում և ոչ միայն:

Երկու շաբաթ տևող վարպետության յուրաքանչյուր դասում միահյուսվում էին ստեղծագործական գիրն ու խաղաղության կոչը: Այսպիսով՝ 1) խաղաղության հաստատման, ստեղծագործական գրի և տարածաշրջանային խնդիրների թեմայով դասախոսություններ կարդացին ոլորտի փորձագետները, 2) սեմինար–քննարկումներ անցկացվեցին հակամարտությունների և ինքնության թեմաների

շուրջ, 3) ստեղծագործական գրի հմտությունները զարգացնող վարժություններ նամակների, պոեզիայի և այլ միջոցներով:

Երևանում առաջին հանդիպումը տեղի ունեցավ 2018 թվականի հուլիսին, և ուսանողները գրեցին իրենց առաջին նամակները: Բաքվում առաջին հանդիպումը տեղի ունեցավ 2018 թվականի օգոստոսին, որի ընթացքում մասնակիցները գրեցին պատասխան նամակները: ՆՀԽ–ի մասնակիցները 2018–ին գրեցին ընդհանուր առմամբ 16 նամակ: 2019 թվականին Բաքվում տեղի ունեցավ չորս վարպետության դասերից առաջինը: Այսօր հուլիսին, երկու վարպետության դաս տեղի ունեցավ Երևանում: Խմբերից մեկը պատասխանեց Բաքվի առաջին հանդիպման ընթացքում գրված նամակներին, մինչ Երևանի երկրորդ խումբը նամակներ գրեց Բաքվի երկրորդ հանդիպման մասնակիցներին: Բաքվում երկրորդ հանդիպումը տեղի ունեցավ օգոստոսին, որի ընթացքում էլ գրվեցին պատասխանները: 2018 և 2019 թթ. ՆՀԽ–ի մասնակիցները գրեցին ընդհանուր առմամբ 52 նամակ:

## **ԱՐԺԵՔՆԵՐԸ**

1. Մենք հավատացած ենք, որ երկխոսությունը առաջին, ամենաեական քայլն է՝ խաղաղության ուղին բռնելու և շարունակելու համար:
2. Մենք հավատացած ենք, որ տարակարծությունն ընդունելը դժվար, սակայն անհրաժեշտ քայլ է՝ լուծման հասնելու համար:
3. Մենք հավատացած ենք, որ կայուն վերափոխումը տեղի է ունենում ներքևից վերև:
4. Մենք մերժում ենք բռնությունը, ատելությունն ու բաժանումը:
5. Մենք հավատում ենք ապացույցներով հիմնավորված գիտելիքի և փաստերի փոխակերպիչ ուժին: Որպես երկխոսության ջատագով՝ մենք անկողմնակալ մոտեցում ենք դրսևորում բանավեճերում:
6. Մեր մասնակիցների և գործընկերների անվտանգությունը առաջնահերթություն է մեզ համար:

# ՆԱՄԱԿՆԵՐ 2019

*\* Նամակները ներկայացված են զույգերով, որոնցից առաջինը սկզբնական նամակն է, սպա՝ պատասխանը: Հեղինակներից ոմանք նախընտրել են անանուն մնալ կամ կիրառել կեղծանուններ:*

## 1-ԻՆ ԵՎ 2-ՐԴ ԽՄԲԵՐ

### Պինգվին – Ճաղիկ

Բարև՛, իմ սիրելի՛ Ընկեր,

Գրում եմ ես՝ քեզ անձանոթ, բայց քո մասին հաճախ մտածող քույրդ: Ուրախ եմ, որ հնարավորություն ունեմ խոսել քեզ հետ, կիսվել իմ մտքերով: Ասելու այնքան շատ բան ունեմ, որ ինձ թվում է՝ այս թուղթը չի հերիքի: Բայց նախ ներկայանամ: Ինձ կկոչեմ Պինգվին: Չէ՛, մի՛ ծիծաղիր, խնդրում եմ: Նախ շատ եմ սիրում պինգվիններին (այնքան գեղեցիկ թռչուններ են), հետո էլ կյանքումս ամենաթանկ մարդն ինձ այդպես է կոչում:

Ես էլ քեզ նման մի մարդ եմ՝ լի նպատակներով ու երազանքներով, անիրական ու մի քիչ էլ հմայիչ մտքերով: Ես էլ քեզ նման բազում հետաքրքրություններ ունեմ: Ուզում եմ մի փոքր դրանց մասին խոսել: (Շատ կուզեի, որ պատասխան նամակումդ մի փոքր նաև քո հետաքրքրությունների մասին խոսես:) Սիրո՞ւմ ես գիշերը աստղերին նայել: Իսկ Լուսնի՞ն: Թե՞ արևային մարդ ես: Գուցե չե՞ս փորձել գիշերը նայել աստղերին ու երազել: Լավ, մի փոքրիկ հեքիաթ կպատմեմ տիեզերքի մասին:

Լինում է չի լինում, մի աղջնակ է լինում: Նա շատ էր սիրում աստղերին նայել ու պատկերացնել իր հետագա կյանքը, որը պետք է լի լիներ ուրախությամբ ու հարազատների անգնահատելի սիրով: Բայց գիտե՞ս, եկավ մի օր, երբ աստղերին նայելիս նրա այտերին արցունքներ հայտնվեցին: Ճակատագիրը հարվածեց նրան կյանքում ամենաթանկ մարդկանց միջոցով: Գիտե՞ս, երբ տխուր էր լինում, գիշերը դուրս էր գալիս տանից, պառկում՝ գետնին ու հայացքն ուղղում դեպի վեր՝ դեպի անսահման մուգ կապույտ երկինքը, դեպի բազմաթիվ փայլող աստղերը, դեպի միակ ու անկրկնելի Լուսինը... ու սկսում էր մտածել: Գիտե՞ս ինչ էր զգում երկինք նայելիս. մուգ կապույտ երկինքը նրա համար երևակայական Կյանքն էր, աստղերը՝ կորցրած մարդիկ, որ նրան միշտ ժպտում էին ու կյանքն իրենց պայծառությամբ լցնում: Իսկ Լուսինը... Լուսնի մասին չէր սիրում պատմել ուրիշներին. դա նրա գաղտնիքն էր: Գիտե՞ս՝ ինչու էր հենց այս ամենը պատկերացնում ուրախ ու երազանքներով լի ապագայի փոխարեն: Նրա համար շատ թանկ մարդիկ տեղ էին գտել երկնքում, տուն էին կառուցել, անգամ այգում ծաղիկներ ու մրգատու ծառեր էին անեցրել: Նրանք երկնքում էին ապրում: Խաղաղության համար պայքարելու հետևանքով նրանք գնացել էին երկինք: Աղջկա երկու եղբայրներն ու ամենահարազատ ընկերը դարձել էին աստղեր ու վեր խոյացել՝ դեպի թվացյալ անսահման երկինքը: Այրիլի մեկն էր: Թվում էր՝ օրն արևային էր, պետք է անցներ նախորդ օրերի նման միապաղաղ ու միալար, բայց... աղջկա սիրտն անհանգիստ էր: Նա դեռ չէր լսել, որ սահմանագծին պայքար է ընթանում, բայց գիտեր, զգում էր, որ աղետը մոտ է: Մեկ օր առաջ էր, որ ամուր գրկեց լավագույն ընկերոջը, հրաժեշտ տվեց նրան ու նորից բանակ ճանապարհեց: Այս անգամ հուզվել էր նրան ճանապարհելիս: Ճիշտ են ասում, որ արցունքները լավ նշան չեն: Այդ գիշեր գրեթե չէր քնել: Երբ լույսը բացվեց, նա միանգամից վերցրեց հեռախոսն ու զանգեց ընկերոջը: Խոսում էր նրա հետ, լսում էր հստակ ու անհողդողո՜ ձայնը, բայց զգում էր, որ տղայի սիրտը արագ է բաբախում: Երբ աղջնակը հարցրեց՝ արդյոք ամեն ինչ լավ է, տղան

մեղմորեն պատասխանեց. «Ինձ մոտ ոչինչ չի կարող վատ լինել: Ուզում եմ իմանաս, որ ես մի բանի թուլեցիք բարձրանալու եմ դիրքեր: Հա՛, չեմ խաբի քեզ, այստեղ վիճակը լարված է: Բայց վստահ եղիր՝ այս ամենը անում եմ, որ իմ մայրը, որ սիրածս աղջիկը, որ դու խաղաղության մեջ ապրեք: Ու մի բան էլ: Եթե ինձ որևէ բան պատահի, իմացի՛ր, որ ամեն գիշեր մի Հրեշտակ հսկելու է քո անմեղ քունը: Գրկում եմ: Իսկ հիմա պիտի գնամ»: Հեռախոսն անջատվեց, ու աղջիկն այլևս երբեք չլսեց նրա ձայնը, այլևս երբեք չզգաց նրա գրկախառնության ջերմությունը, այլևս երբեք չնայեց նրա արևային աչքերին: Ընկերոջ հետ խոսելուց հետո աղջիկն անմիջապես զանգեց եղբայրներին, բայց զանգերը գնում էին, իսկ պատասխանող չկար: Առավոտվա արևային եղանակը փոխվեց մռայլ ու անդառնալի ցավի եղանակի: Թվում էր՝ աղջիկն էլ էր մահացել: Նա բաժանվել էր չորս մասի: Երեք մասերն էլ չկային, մահացել էին: Չէ՞ որ ամեն մի հարազատ մարդու մահով մեր մի մասն էլ մահանում է: Նրա մի մասն էր, որ դիմանում էր կյանքի արհավիրքներին, հաճախ էր ընկնում, բայց կորստի վամ հիշատակը ստիպում էր նրան վեր կենալ ու առաջ շարժվել: Նրա մի մասն էր, որ տեսնում էր այն Հրեշտակին, որն ամեն գիշեր գալիս ու գրկում էր նրան: Հեքիաթի վերջում երկնքից երեք աստղ ընկավ, բայց ընկնող աստղերն այդպես էլ ի կատար չածեցին աղջնակի երազանքները:

Գիտե՞ս՝ այս հեքիաթն իրական է: Իսկ հերոսն էլ ես եմ: Նրանք գնացին, որ ես ապրեմ, նրանք փակեցին իրենց աչքերը, որ ես ավելի լուսավոր ապագա տեսնեմ իմ աչքերով, նրանց ժպիտները սառեցին իրենց դեմքերին, որ ես ժպտամ՝ վստահ լինելով, որ նրանք դա զգում են: Չգո՞ւմ ես՝ ինչքան անարդար է վարվում ճակատագիրը մեզ հետ: Գիտե՞ս՝ ինչ դժվար է լայն ժպտալ, երբ ամբողջ հոգով ուզում ես լաց լինել, լռել, երբ ցանկանում ես բարձր գոռալ, որ դուրս հանես այն ամբողջ ցավը, որ կուտակվել է սրտումդ: Նրանք հերոսացան, բայց չմահացան, որովհետև Հերոսները չեն մահանում, նրանք անմահանում են:

Գիտե՞ս՝ ինչ է նշանակում քայլել փողոցով, անձրևի մեղմ կաթիլների ներքո, մտովի բռնել Չինվորիդ ձեռքն ու պատկերացնել, որ նա քեզ հետ է: Հետո դիմացից եկող Չինվորին շփոթել քոնի հետ ու վայրկյան առաջ ցանկանալ գրկել նրան: Հավատա՞ ես գիտեմ:

Գիտե՞ս՝ ինչ ցավոտ է վեր կենալ առավոտյան, ձեռքդ վերցնել հեռախոսը, հավաքել քեզ այդքա՛ն հարազատ հեռախոսահամարը, բայց այդպես էլ չսեղմել «գանգել» կոճակը՝ հասկանալով, որ սիրածդ ձայնի փոխարեն լսելու ես մի նրբանկատ աղջկա ձայն, որն ասելու է, թե հեռախոսն անջատված է: Գիտե՞ս, նրանք հիմա այստեղ՝ իմ կողքին չեն, որ ես ու դու ամեն գիշեր մեր գլուխները հանգիստ դնենք բարձին ու խաղաղության մեջ քնենք:

Բայց գիտե՞ս՝ մենք բոլորս էլ հերոսներ ենք: Հերոս ես դու, հերոս եմ ես: Հերոս են թիկունքում հավատով իրենց զինվորներին սպասող մեր ու ձեր աղջիկները: Հերոս են ամեն գիշեր իրենց որդիների համար աղոթող մեր ու ձեր մայրերը: Հերոս են ծննդատներում ամեն օր ծնվող երեխաներն ու հիվանդանոցներում բուժում ստացող ծերերը: Հերոս են: Հերոս ենք բոլորս: Արի՛ չառանձնացնենք ոչ մեկին:

Կարծում եմ՝ դու էլ, իմ սիրելի՛ Ընկեր, ուզում ես ապրել խաղաղության մեջ: Ցավոք, գիտեմ, որ նամակս հսկայական ազդեցություն չի ունենալու այս մեծ ու հայրենասեր գործում, սակայն հույս ունեմ, որ ես ու դու, որ մենք ՄԻԱՍԻՆ կարող ենք հետագա սերունդներին սովորեցնել Խաղաղ Ապրելու Նուրբ Արվեստը: Մենք ՄԻԱՍԻՆ կարող ենք մեր երեխաներին դաստիարակել խաղաղության ոգով: Մենք ՄԻԱՍԻՆ կարող ենք հարթել այն ճանապարհը, որը տանում է դեպի խաղաղություն: Եվ հանուն մեր ապագա ընտանիքի, հանուն մեր երեխաների պայծառ, անհոգ ու խաղաղ ապագայի, հանուն եկող սերունդների իմաստալից կյանքի մենք ՄԻԱՍԻՆ պետք է անենք դա:

Ես ուզում եմ շնչալ քեզ խաղաղաձայն. արի՛ մոռանանք մեր թշնամությունը և ապրենք խաղաղ ու կապույտ երկնքի տակ: Չէ՞ որ եղել է ժամանակ, երբ մենք բարեկամներ ենք եղել ու կիսել ենք միմյանց ուրախությունն ու ցավը: Արի՛ սիրենք միմյանց, սեր սփռենք ողջ աշխարհով մեկ, ցույց տանք բոլորին, որ երկու ազգ կարող են միմյանց հանդեպ անկեղծ ու անաչառ սեր տածել: Արի՛ աշխարհին սովորեցնենք Ուժեղ, Հպարտ ու Խաղաղ լինելու արվեստը: Արի՛ չթողնենք միմյանց լաց լինել թանկ ու հարազատ մարդկանց մահվան համար: Արի՛ ամեն մեկս մեր ներածին ուժերով այնպես անենք, որ երկնքին նայելիս մեր այտերին չհայտնվեն ցավի արցունքները: Արի՛ առավոտյան այլևս թաց բարձին չարթնանանք: Արի՛ այնպես անենք, որ այլևս չվախենանք բանակ գնացող ամեն մի Չինվորի կյանքի համար: Արի՛ էլ երբեք չթողնենք, որ մեր սրտերը կծկվեն կարոտի դաժան քամուց: Արի՛ չթողնենք, որ Մահը, Ցավը, Կորուստը, Արցունքն ու Կարոտը մեր հյուրերը լինեն: Արի՛ խաղաղության մի մասնիկը լինենք:

Ես գիտեմ, որ քո այտերին չհայտնվեցին արցունքի կաթիլներ: Հավատա՛, ես կարեկցանքի կարիք չունեմ: Ցավոք, շատ հպարտ եմ: Բայց հույս ունեմ, որ կարողացա քեզ փոխանցել իմ անկեղծ մտքերը, ցավոտ հիշողությունները, տխուր ապրումներն ու նաև խաղաղության հանդեպ ունեցած իմ տենչալի սերը:

Մեծագույն սիրով՝

քո ընկեր Պինգվին

Հ.Գ. Երբ մի օր նայես վերև ու տեսնես, որ Լիալուսինը ժպտում է քեզ, երբ լսես նրա զրնգուն ծիծաղը, վստա՛հ եղիր, որ դա ես եմ: Խոսի՛ր ինձ հետ այդ ժամանակ: Խոստանում եմ՝ ես կլսեմ քեզ:

Ողջուն, խաղաղասեր Պինգվին,

Ինձ Չիչեք (ծաղիկ) անունով ճանաչիր, որովհետև անունս ունի միայնակ ծաղիկ իմաստը: Ուրախ եմ և իմ շնորհակալությունն եմ հայտնում, որ նամակիդ մեջ ինձ հետ կիսվեցիր քո իղձերով, երազանքներով ու զգացմունքներով: Նաև ողջունում եմ քո խաղաղասիրությունը: Երանի՛քեզ պես միլիոնավոր խաղաղասեր մարդիկ լինեին: Մենք Երկիր մոլորակի վրա կապրեինք խաղաղության մեջ ու միասին կիրականացնեինք մեր երազանքները: Ինձ խնդրել էիր, որ իմ հետաքրքրությունների մասին գրեմ: Երբևէ լսե՞լ ես ուտոպիայի մասին: Ուտոպիստական աշխարհն ինձ շատ է հետաքրքրում, եթե ժամանակակից լեզվով ասենք, անկախ կրոնից, լեզվից, ազգությունից, ռասայից՝ մարդիկ այնտեղ ապրել են շատ երջանիկ ու խաղաղ: Թախիծը, արցունքը նրանցից շատ հեռու են եղել. տեսնես եթե ինձ և քեզ պես խաղաղասեր մարդկանցով միավորվենք, կկարողանա՞նք այդպիսի աշխարհ ստեղծել:

Շատ եմ ուզում, որ մարդիկ հանգստության ու խաղաղության մեջ ապրեն: Այլևս թող չլինեն մայրական արցունքներ, կորուստ ու դառն օրեր, թող միմյանց չնայենք դիտվ, վրեժխնդրության զգացումով, թող չքնենք ու չարթնանանք փամփուշտների ձայնի տակ:

Ի՛նչ ծանր բառ է «պատերազմը»: Դրա հետևանքով առաջացած ողբերգությունները չեն ջնջվում մարդկանց հիշողությունից, իսկ վերքերը երբեք չեն բուժվում:

Պատկերացնում եմ անցյալ ու ներկայիս սերունդների ապրածներն ու ծանր օրերը: Իմ ընկե՛ր Պինգվին, արի՛ միասին պայքարենք հանուն խաղաղության, որպեսզի երեխաները՝ մեր ապագան, կրկին չապրեն այդ սարսափելի անցյալը:

Ինձ հարցնում ես, թե որն եմ ավելի շատ սիրում՝ աստղե՞րը, լուսի՞նը, թե՞ արևը: Ես ամենից շատ արևն եմ սիրում, քանի օր այն բոլորի վրա հավասար է շողում:

Մոտ հարազատներիս, ընկերներիս հայրերի ու եղբայրների կորուստը նրանց հետ միասին ապրել եմ: Եվ հասկացել եմ, որ բոլորը ցավը հավասար են զգում: Աստծու կողմից մեզ պարգևած կյանքը ինչո՞ւ կարճ ապրենք: Որքա՞ն իղձեր, երազանքներ են կիսատ մնացել, որքա՞ն մանուկներ են անհայր մնացել:

Ես հավատում եմ, որ մեր ժողովուրդների միջև խաղաղություն է հաստատվելու և ինչպես դու ես ասում, ամբողջ աշխարհը կուրախանա դրա համար: Մեր բոլորի իրավունքն է, որպեսզի մեր հարազատների և սիրելի մարդկանց հետ ապրենք խաղաղությամբ, հանգիստ ու երջանիկ: Մենք շատ փոփոխություններ կարող ենք անել, կրկին սկսելու համար շատ հնարավորություններ ունենք: Եթե մի կողմ թողնենք ողջ ատելությունը, ապա կհասնենք խաղաղության: Մենք պետք է կարողանանք անել այդ:

Մի տեղից պետք է սկսել: Մենք նախկինում միասին ենք ապրել, հարևաններ ենք եղել, ես դա լսում եմ ավագ սերնդի պատմածներից ու հուշերից: Քո ասածի հետ ամբողջությամբ համաձայն եմ, այո՛, մենք պետք է միասին ապրենք և այս նուրբ արվեստը ցուց տանք բոլորին:

Իմ ընկե՛ր Պինգվին, արի՛ երկուսս էլ մեր ժողովուրդներին խաղաղության կոչ անենք, որպեսզի նրանք ապրեն երջանիկ, խաղաղ ու ուրախ: Երազանքս է, որ խաղաղության աղավնին, ծաղիկը կտուցին, միշտ սավառնի մեր երկնքում:

Ասածիդ համաձայն՝ նայելու եմ լուսնին ու քեզ հիշեմ:

Բարի մաղթանքներով՝

Չիչեք (Ծաղիկ)

## Լիլիթ – Զուլֆիյա

Բարև՛, իմ սիրելի՛ ընկեր,

Գիտե՞ս՝ քանի նամակներ են մնացել կիսատ, քանի գրված նամակներ չեն ուղարկվել քեզ այն ժամանակ, երբ երևի ամենից շատ քո օգնության կարիքն ունեի, երբ դու էլ ինձ կհասկանայիր, որովհետև պատերազմ էր... պատերազմ թե՛ քո և թե՛ իմ երկրում:

Գիտե՞ս, երևի երկուսս էլ մի օր խեղդվելու ենք իրար չասված բառերից, գապված արցունքներից ու չհասկացված ատելությունից: Բայց չե՛, ա՛խր ես չեմ ատում քեզ՝ իմ բախտակցին:

Գիտե՞ս, ինձ թվում է, որ ատում են միայն թույլերը, որոնք իրենց մեջ ուժ չեն գտնում դիմացինին սիրելու կամ գոնե նրա հանդեպ առանձնակի ոչինչ չզգալու համար: Ես վստահ եմ, որ դու էլ ինձ չես ատում, այդպես է չե՞:

Վա՛յ, կներես, այսքան գրեցի, բայց դեռ չեմ ներկայացել: Ես Լիլիթ Մելիքջանյանն եմ: Մի ամսից կլրանա իմ քսանը, բայց ես չեմ սիրում իմ ծննդյան օրը: Գիտե՞ս, որ հիշում եմ՝ հասակակիցներս պիտի իրենց քսանը նշեին, բայց ինչ–ինչ պատճառներով զոհ են դարձել, դա չի թողնում ինձ ուրախ նշել:

Ես ապրում եմ Հայաստանի հյուսիսային մարզերից մեկում՝ Լոռիում, 18 տարի ապրել եմ Ստեփանավանի Ազարակ գյուղում, իսկ հիմա ուսման նպատակով տեղափոխվել եմ Վանաձոր, որը հնում Դարաքիլիսա է կոչվել: Ես, ճիշտ է, կարոտում եմ իմ գյուղը, բայց նաև

հասկանում եմ, որ ուսումն անհրաժեշտ է: Դու լսե՞լ ես Լոռվա մասին: Եթե ոչ, կխնդրեմ գուզում փնտրես և տեսնես, թե ի՞նչ հրաշք բնություն ունենք:

Գիտե՞ս, լոռեցիներին միամիտ են համարում, որովհետև շատ անկեղծ ու բարի են: Մեր բարբառով ասած՝ ՇԱՇ են: Իսկ դու կպատմե՞ս ինձ քո քաղաքի կամ մարզի մասին. ինձ շատ հետաքրքիր է: Ես մեծ սիրով քեզ կհրավիրեի և ցույց կտայի մեր բոլոր տեսարժան վայրերը:

Հա՛, ի դեպ, կրկին մոռացա ասեմ. դու կարող ես վստահ լինել՝ քեզ հմուտ գիդ կուղեկցեր, որովհետև ես ուսումնասիրում եմ հենց տուրիզմ ու սպասարկում: Հիմա երևի կմտածես, թե ինչ եմ չե՞ր կար–բարակ գրում, ինչու եմ Վանաձորից ամեն օր հասնում Երևան, ինչ է այս մի նամակը գրեմ քեզ: Գրում եմ այս նամակը, բայց հավատա՛ւ՝ սրա հետ ուղարկում եմ նաև բազում տարիների գրված, բայց չուղարկված նամակները:

Գիտե՞ս ես ունեմ և՛ եղբայր, և՛ քույր: Իսկ դու քույր, եղբայր ունե՞ս: Չգիտեմ, եղբայր ունես թե ոչ, բայց որ քո շրջապատում կլինեն տղաներ, որոնք գնում են սահմանները հսկելու, հայրենիքը պաշտպանելու, դա հաստատ է: Նրանց համար վախենում ես չե՞: Ես էլ եմ վախենում իմ եղբայրների համար: Ես չեմ ուզում կորցնել նրանց և քաջ գիտակցում եմ, որ քո հարազատները ևս թանկ են քեզ համար: Գիտե՞ս՝ որքան դժվար է նայել զինվորիդ նկարին ու հասկանալ, որ խրամատի սառը գիշերը ծանրացած է նրա կոպերին: Դու հասկանում ես, չե՞, ինձ: Իսկ ինչու՞ գոնե մենք խաղաղ չապրենք, արթնանանք ամեն օր առանց վախի զգացման, առանց օդ շոշափելու ու հոտոտելու ցանկության, առանց պատերազմի կանխագագցման: Խորթ զգացում եմ ուզում: Ուզում եմ արթնանալ ու բարեկամության շունչ զգալ: Ուզում եմ համախմբվենք, մի բուռ դառնանք ու միասին լուծենք այս անլուծելի թվացող խնդիրը: Ես ու դու ուժեղ ենք, մենք կարող ենք, ես վստահ եմ: Ես գիտեմ, որ դրսում ապրող մեր հասակակիցները

Ծանոթանում են, շփվում, նույնիսկ ընկերանում: Միթե՞ նրանց պատիվ չի բերում ուրիշի հողի վրա հակամարտելը: Այդ դեպքում ինչո՞ւ են սահմանները մեզ ստիպում թշնամանալ, եթե սահմաններից դուրս մենք կարողանում ենք համատեղ ապրել: Իսկ գուցե մե՞նք ենք մեր սահմանները գծում: Երբևէ մտածե՞լ ես՝ ով է երկրագնդի՝ մեզ և ձեզ բաժին ընկած հատվածի չափը որոշել և արդյո՞ք նա դրա իրավունքն ուներ: Նա, բնականաբար, որոշել է մեր երկուսի փոխարեն:

Ա՛խր ոչ ոք չի կարող որոշումներ կայացնել իմ փոխարեն, դու այդպես չե՞ս կարծում:

Որքան էլ ցավոտ լինի, երկուսս էլ խամաճիկ ենք դարձել մի ողջ պատմության ձեռքին, որը մեզ անդադար խաբում է: Ո՞վ է գծել այդ թափանցիկ սահմանները, և իսկապես, խնդիրը միայն այդ սահմանների մեջ է: Ինձ հետաքրքիր է, դու կցանականա՞ս միմյանց հետ սկսել տնտեսական կապեր, թեկուզ դեռևս կապված միայն տուրիզմի հետ: Ես շատ կցանկանայի: Հուսամ, դա երազանք չի մնա, և ես մի օր կծանոթանամ քո երկրի զբոսաշրջային գանձերին՝ ծանոթացնելով քեզ իմին: Իսկ եթե մենք փորձենք դիմել կառավարություններին ու նրանք այս գաղափարը հավանե՞ն: Մենք կարող ենք լինել առաջինը: Դու համաձայն ե՞ս: Արի՛ մտածենք ու քննարկենք, լա՛վ:

Ուրիշի հողի վրա հակամարտելը մեր պետություններին պատիվ չի բերում, իսկ արդյո՞ք մեր երկրներում պատերազմելը նրանց համար անպատվաբեր չէ: Թատերաբեմ լինի, կարծես, որտեղ դրված է մրցանակը՝ Ղարաբաղը, իսկ նրա շուրջը նստած են գերտերությունները՝ որպես հանդիսատես: Դե՛, մենք ու դուք էլ մրցում ենք իրար դեմ, թե ով ավելի լավ դերասանական խաղ ցույց կտա և ամենից լավ կխոնարհվի: Ես խոնարհվելուց հոգնել եմ, գիտեմ՝ դու էլ: Ես պատերազմներից էլ եմ հոգնել, իսկ դո՞ւ:

Գիտե՞ս, սարսափում եմ, երբ հիշում եմ 2016 թ.–ի ապրիլը. աչքերս լցվել են կարմիր գետով. սիրելիներիս, հայրենակիցներիս արյունից ստեղծված գետը հոսում է ուղիղ աչքերովս՝ ստիպելով ինձ քաջ լինել: Բայց ամիսը գիտեմ, որ աչքերիս արյան այդ գետը միացել է քոնին: Որքան արյան գետեր են հոսել աչքերիցս վար, արցունք կոչվելով, խառնվել իրար, դարձել մեկ ընդհանուր և հատել սահմանն ու ազատ հոսել – հոսել:

Հերի՞ք է: Պիտի վերջապես փակենք այդ գետի հունը: Պիտի հողով լցնենք գետի ամբողջ տարածքը և այնտեղ անմոռուկներ ցանենք, հիշենք նահատակներին, հարգանքի տուրք մատուցենք՝ անմոռուկներին խնամելով, նրանց մարած աստղերը վառ պահենք, բայց էլ չլացենք, արցունքով անձրևի ցող չստեղծենք: Վե՛րջ տանք արցունքներին ու արյանը: Հերի՞ք է: Ես լացելուց հոգնել եմ:

Գիտե՞ս, չգիտեմ՝ ինչ կզգաս նամակս կարդալիս, չգիտեմ, կցանկանա՞ս պատասխանել իմ նամակին, բայց միևնույնն է, իմացի՛ր, որ դու ինձ շատ օգնեցիր, դու ստիպեցիր ինձ ճանաչել ինձ ու իմ ակունքները, դու ստիպեցիր ինձ հաղթահարել դժվարությունները, ստիպեցիր սովորել գնահատել, որի համար շնորհակալ եմ քեզ: Ե՛կ երկուսս էլ մտածենք քառակուսիներից ու սահմաններից դուրս ու լուծում փնտրենք: Դե գիտես՝ ով փնտրում է, նա անպայման գտնում է: Արի՛ լինենք Բաբա ու Հաջ: Թող Աստված միշտ քեզ ուղեկից լինի:

Սիրով՝

Քո Լիլիթ

Բարև, Լիլիթ,

Շնորհակալ եմ հրաշալի նամակիդ համար: Շատ հետաքրքիր էր կարդալ մտքերդ: Դու շատ անկեղծ էիր, ինչը շատ կարևոր է ինձ համար: Դու համառոտ տեղեկություն էիր տվել քո մասին և նշել, որ ցանկանում ես իմ մասին ինչ-որ բան իմանալ: Ես 20 տարեկան աղջիկ եմ, որը մեկ ուրիշ քաղաքից տեղափոխվել է մայրաքաղաք՝ սովորելու նպատակով: Ինձ թվում է՝ ես նամակ եմ ստացել մի մարդուց, որի կենսակերպը շատ նման է իմին: Ես շատ չեմ կարոտում այն քաղաքը, որտեղ ապրում էի ընտանիքիս հետ, և իրոք սիրում եմ այն քաղաքի ճարտարապետությունը, որտեղ ապրում եմ հիմա: Ես ավելի քան երջանիկ եմ համարում ինձ: Ի տարբերություն իմ շատ հասակակիցների՝ ես կարող եմ այցելել իմ ծննդավայր, երբ ցանկանամ: Որոշ մարդիկ երբեք չեն տեսել այն վայրերը, որտեղ իրենց ծնողները ժամանակին ապրել են: Ես գիտեմ, որ դուք էլ եք ծանոթ այս իրավիճակին և գուցե նման ծանոթներ ունեք: Այնուամենայնիվ, դու նշել էիր, որ հիմա զբոսաշրջություն ես ուսումնասիրում: Ինչպիսի՞ գուգադիպություն. ես էլ զբոսավար եմ: Ես ուղեկցում եմ զբոսաշրջիկներին քաղաքի կենտրոն, ինչպես նաև մերձակա տարածքներ, ինչպիսին են Գորուստանը, Աթեշգահիր: Բաքուն հրաշալի է: Հին քաղաքը, Շիրվանշահների պալատը, Մեյդանի աշտարակը և այլն: Այստեղ նաև հայկական եկեղեցի կա: Այն ավերված չէ, և մեր կառավարությունը պահպանում է այն մինչ օրս: Իմ հիմնական մասնագիտությունը բոլորովին այլ է: Ես այս գործն անում եմ որպես հորբի: Ես սիրում եմ իմ գործը, որովհետև հաճույք եմ ստանում տարբեր երկրներից ժամանած մարդկանց հետ խոսելուց: Հավանաբար իմ աշխատանքն է օգնել, որ ես այսքան հանդուրժող լինեմ: Մենք երկուսս էլ շատ բախտավոր ենք այս առումով: Ես գտա քո ծննդավայրը Google-ում: Շատ գեղեցիկ վայր է, և հրաշալի է, որ հպարտանում ես քո հայրենիքով: Ես նույնպես տեղափոխվել եմ փոքր

քաղաքից, որի անունը Գյոյչայ է: Այն գտնվում է իմ երկրի կենտրոնական հատվածում և հայտնի է իր նռներով: Այնտեղ նման 40 տեսակ կա, որոնք հայտնի են ոչ միայն մեր, այլև՝ հարևան երկրներում: Ես նաև հարազատներ ունեմ Գաբալայից (մենք այս վայրը աղբբեջանական Շվեյցարիա ենք անվանում): Այն իմ սիրելի վայրն է՝ հատկապես ամառային արձակուրդներին: Դու կարող ես նայել յուսանկարները Google-ում, եթե ցանկանում ես ☺ :

Կարծում եմ, սա քո առաջին խաղաղության նախագիծն է: Հավանաբար դու առաջին անգամ ես կապ հաստատում որևէ Ադրբեջանցու հետ: Ես հպարտ եմ դրա համար: Թեև չեմ ճանաչում քեզ, ես կարողացա կոտրել քո որոշ կարծրատիպերը, քանի որ դու ասացիր, որ ես փոխել եմ քեզ: Իմ հերթին, սա իմ առաջին ծրագիրը չէ: Ես մասնակցել եմ նման ծրագրերի նախկինում: Ես մի քանի անգամ եղել եմ Վրաստանում խաղաղության կառուցման ծրագրերի համար և շատ ծանոթներ ունեմ Հայաստանից: Նրանցից ոմանց հետ մենք անգամ կարող ենք որոշ խնդրահարույց հարցեր քննարկել՝ առանց որևէ խնդրի, որովհետև հասկանում ենք միմյանց, որովհետև հանդուրժող ենք միմյանց հանդեպ: Հուսով եմ, մենք էլ կհանդիպենք և հնարավորություն կունենանք ճանաչելու միմյանց: Դու պատկերացնել չես կարող, թե որքան նմանություններ ունենք մենք: Մեր մտածելակերպը, համոզմունքները, կարծրատիպերը, անգամ ԱՄՈՒՄՆՈՒԹՅԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ:

Հուսով եմ, որ ես ու դու կարողանալու ենք որևէ բան փոխել: Դա այնքան էլ հեշտ չի: Ես վստահ եմ, որ դու էլ ես հասկանում դա: Այնուամենայնիվ, ես կփորձեմ ինչ-որ բան փոխել, քանի որ փոքր բաները մեծ փոփոխությունների են բերում: Դժվար է, քանի որ մենք հասարակության փոքր մասն ենք, որն այսպես է մտածում: Ահա թե ինչու մենք պետք է ավելի շատ աշխատենք և չհանձնվենք: Ես գիտեմ, որ դու էլ փոփոխություններ անելու խանդավառություն ունես: Ես լավ նորություն ունեմ: Դու արդեն ինչ-որ բան փոխել ես քո

հասարակության մեջ: Դու ինքդ փոխվել՝ ես: Դա ամենամեծ քայլն է քեզ համար: Հիմա մենք պետք է ազդենք մյուսների վրա:

Դու նշել էիր, որ անհանգստանում ես եղբայրներիդ և մոտ մարդկանց համար: Հավատա՞ ինձ, ամեն տեղ է այդպես: Ոչ մեկ պատերազմ չի ուզում: Ոչ մեկ մահացածներ չի ուզում տեսնել: Ոչ մեկ չի ուզում լսել լուրեր այն մասին, որ շատ մարդիկ են մահացել: Ես եղել եմ Թարթարում (շփման գծում) վերջերս և գրույց եմ ունեցել տեղաբնակ երեխաների հետ: Նրանք ասացին, որ 2016 թ. պատերազմի ժամանակ մեկ ամիս չեն կարողացել դպրոց հաճախել: Դու չես կարող պատկերացնի նրանց դեմքերը, երբ նկարագրում էին դա: Համարյա ամեն օր նրանք կրակոցներ են լսում: Նրանք դեռ փոքր երեխաներ են, բայց արդեն ծանր կենսափորձ ունեն:

Ես կարծում եմ՝ բոլորը գիտեն, որ մենք պարզապես գործիք ենք այս պատերազմում: Մենք կարողացած կլինեինք լուծել այս հակամարտությունը, եթե այստեղ միայն երեք կողմ լիներ: Ե՛վ Հայաստանի, և՛ Ադրբեջանի համար մեծագույն խնդիր է, որ մենք սահմանակից ենք մեծ երկրների: Օրինակ, այսօր Իրանում ապրում է շուրջ 30 մլն ադրբեջանցի, այն դեպքում, որ իմ երկրում այդ թիվը 10 մլն է: Այդ մարդիկ անգամ ինքնավարություն չունեն այնտեղ: Մենք նաև անբախտ ենք, որովհետև Խորհրդային միության մաս ենք եղել: Վստահ եմ, դու էլ ես գիտակցում դա: Մյուս հետխորհրդային երկրներն էլ են առերեսվում այս նույն խնդրին: Վրաստանում, Ուկրաինայում և այլն: Ես շատ նմանություններ եմ նկատում: Օրինակ՝ Օսիան և Աջարիան ողջ Վրաստանի 18 տոկոսն են, ինչպես Լեռնային Ղարաբաղը և հարակից շրջանները Ադրբեջանում: Դոմբասում պատերազմ է եղել ապրիլին, և մենք էլ ենք ապրիլին պատերազմել:

Սա մենձ խնդիր չէ, եթե մենք գորբալ նայենք: Մենք կարող ենք լուծում գտնել: Հազարավոր իրավիճակներ կան աշխարհում, երբ մարդիկ կարողացել են նման հակամարտություններ հարթել:

Գուցե դու լսել ես Ֆինլանդիայում գտնվող Ալանդ կղզու մասին: Նրանք նույնպես նման խնդիր են ունեցել 1917թ.: Դու գիտն՞ս, նրանք այդ հակամարտությունը լուծել են 4 տարում: Կարո՞ղ ես երևակայել: Մենք տառապում ենք դրա համար արդեն 30 տարի: Խաղաղությունն իրոք հնարավոր է: Մենք կարող ենք անել դա: Ես խորհուրդ եմ տալիս քեզ ուսումնասիրել Ալանդի դեպքը: Դա ճիշտ նույն դեպքն է, ինչ Լեռնային Ղարաբաղինը: Նրանք լուծել են այս խնդիրը: Այսօր Ալանդ կղզու տեղաբնակները ամբողջ Ֆինլանդիայի ամենահարուստ մարդիկ են: Հիմա նրանք երջանիկ են: Այս տարածքը տարեկան միլիոնավոր զբոսաշրջիկների է գրավում և խաղաղ ու ապահով վայր է բոլորի համար: Ես կարող եմ շատ օրինակներ բերել, որտեղ երկրները թշնամիներ են եղել, բայց այսօր սերտ գործընկերներ են:

Հիմա գիշերը 2:43 է, և ես քեզ գրում եմ այս նամակը դաշնամուրային երաժշտության ներքո: Ես սիրում եմ գրելիս առանց բառերի երաժշտություն լսել: Նման երգերը բառեր չեն պարունակում, բայց շատ բան են ասում: Նրանք մեզ շատ բաներ են հիշեցնում: Նրանք ստիպում են մեզ լռել կամ դարձնում են ագրեսիվ: Օրինակ, երգերը կարող են օգտագործվել մարդկանց թշնամի դարձնելու համար. մեր դեպքում Սարի գելինը (Սարի աղջիկը): Ինչո՞ւ մարդիկ պարզապես չեն լսում այս երգն ու շարունակում իրենց կյանքը՝ վիճելու փոխարեն: Ինչո՞ւ ենք մենք ապացուցում ինչ-որ մեկին, թե ով է այդ երգի տերը: Ես նաև խորհուրդ եմ տալիս քեզ նամակս կարդալ քո սիրած երգի ներքո ☺ :

Ինչպես դու էիր նշել, ես էլ եմ հոգնել տխուր լուրեր լսելուց: Մենք կարող ենք շատ ուժեղ կովկասյան երկրներ լինել, քանի որ դրա համար շատ հնարավորություններ կան: Կովկասը շատ հարուստ է բնական

ռեսուրսներով, և եթե մենք պատերազմի մեջ չլինեինք, չեմ կարող  
պատկերացնել, թե որքան ուժեղ կլինեինք: Մենք կարող ենք շատ  
այլընտրանքներ ստեղծել ապագա սերունդների համար, մեր  
ապագայի համար և մեր երկրների ապագայի համար: Ինձ համար  
մարդկային կյանքերը կարևոր են: Մենք պետք է մտածենք ապագա  
սերունդների համար: Ես կարեկցում եմ հարազատներ կորցրած  
մարդկանց և հասկանում նրանց դժվարությունները: Հենց այդ  
պատճառով մենք պետք է դադարեցնենք թշնամանքը: Ինչպես դու էիր  
գրել, մենք շատ ուժեղ ենք և կարող ենք հաղթահարել այս  
դժվարությունները: Մենք առավել ուժեղ ենք միասին:

Սիրով,

Զուլֆիյա

Հ.Գ. Նամակս գրել եմ անգլերեն, որպեսզի քեզ հասանելի լինի  
նամակիս բնօրինակը: Գուցե դու ցանկանաս կարդալ այն առանց  
թարգմանության: ☺

## Թաթուլ – Իլկին

Բարև՛, իմ հարևան՛,

Ասում եմ հարևան, քանի որ ապրում եմ հայ-ադրբեջանական սահմանից 2 կմ հեռավորության վրա: Անունս Թաթուլ է, 32 տարեկան եմ, մասնագիտությամբ աշխարհագրագետ եմ, ծառայել եմ բանակում:

Չնայած փոքր եմ եղել, բայց հիշում եմ պատերազմը, մութ ու ցուրտ տարիները. օրերով տան նկուղում փակված լինելը, գիշերով ոտքով գյուղից փախնելը, մի խոսքով՝ պատերազմի մեջ է անցել ամբողջ կյանքս մինչև 1994 թ.-ը ակտիվ, իսկ դրանից հետո ո՛չ պատերազմ, ո՛չ խաղաղություն, որը պակաս վտանգավոր չէ: Յուրդա՛շ ջան, սա պատմում եմ քեզ, որպեսզի իմանաս՝ ով եմ ես, իսկ թե ինչ եմ մտածում, հիմա կասեմ:

Չնայած այս ամենին՝ ես քեզ թշնամի չեմ համարում, այլ՝ մարդ, որը կհամաձայնի ինձ հետ ու այս պահից առանց նախապայմանի, առանց մեղավորներ փնտրելու կմտածի միայն խաղաղության մասին: Ես քեզ խաղաղության ձեռք եմ մեկնում ու առաջարկում փոքր-փոքր քայլեր անել՝ հանուն ապագայի լուսավոր ու խաղաղ օրվա: Սկսե՛նք մեր ընտանիքներից՝ ատելության փոխարեն խոսելով բարեկամությունից: Խոսե՛նք ընկերների հետ պատերազմի փոխարեն խաղաղությունից, խոսենք զենքը գրիչով փոխելու անհրաժեշտության մասին:

Բարեկա՛մս, նկատեցի՞ր, որ մենք ունենք մի ընդհանուր նպատակ. դա խաղաղությունն է, և մենք ունենք դրան հասնելու շատ նման մոքեր: Գիտե՛ս, հաճախ եմ լինում Մառնետուլի քաղաքում, որտեղ ունեմ ադրբեջանցի դոստեր. շատ հանգիստ շփվում ենք, առևտուր անում:

Դուստերս ինձ չայ են հյուրասիրում, ես՝ հայկական սիգարետ ու երկար խոսում ենք մեր նմանությունների մասին՝ նման երաժշտություն, կուլինյա, արտաքին տեսք:

Յուրդա՛շ ջան, մի առաջարկ ունեմ. արի՛ հանդիպենք Վրաստանում, նայենք իրար աչքերի մեջ, ձեռք սեղմենք ու խոսենք խաղաղության մասին:

Քո հարևան՝

Թաթուլ

\* \* \*

Ողջու՛յն, Թաթու՛լ,

Երբ կարդացի նամակդ և տեսա, որ ինձ դիմում ես որպես «հարևան», չեմ կարող նկարագրել, թե ինչ զգացմունքներ ունեցա: Մի պահ կարծեցի, թե քաղցր ու սիրալիր տոնով ինձ են դիմում հարազատ թաղամասիս հարևանները: Իսկապես, շատ հազվագյուտ հարևաններ կան, որ կարողանում են այսքան մոտ, բայց միևնույն ժամանակ այսքան հեռու լինել միմյանցից, փաստորեն մենք էլ նրանցից մեկն ենք: Սակայն վաղ թե ուշ այդ հարևաններն սկսում են տեսնել, որ իսկապես միմյանցից այդքան հեռու մնալն անիմաստ է, և սերն ու միասնության ուժը կարող են երկու կողմերին էլ տանել բարգավաճման: Ես մեզ պես հարևաններին կտրականապես չեմ ուզում այսպես տեսնել: Իմ տեսած հարևանները միշտ արժևորել են համերաշխությունը, հարգանքը, անկեղծությունը, ծիծաղը, միասին ուրախանալը, սիրելն ու սիրվելը, հարևանությունն անելը: Այդպիսին էինք մենք ժամանակին, տարիներ առաջ: Սակայն դեռ ուշ չէ:

Անունս Իլկին է: Ես 20 տարեկան եմ: Ապրում եմ Բաքվում:

Մասնագիտությամբ տնտեսագետ եմ, սակայն որպես սիրողական մասնագիտություն՝ զբաղվում եմ դերասանությամբ: Սոցիալապես ակտիվ երիտասարդ եմ: Խաղաղարարության թեմայով մասնակցել եմ մի շարք դասընթացների, ինչպես նաև այդ թեմայով դերախաղ եմ ունեցել:

Վրաստանում տարածաշրջանային երկրների հետ միասին մի նախագծում առաջին անգամ հնարավորություն ունեցա շփվել հայաստանցի երիտասարդների հետ: Ծանոթացա շատ անկեղծ և սիրալիր երիտասարդների հետ: Դասընթացի ժամանակ հասկացա, թե որքան նմանություններ կան թե՛ կենցաղային մակարդակում և թե՛ մեր բնավորությունների մեջ, և դա ինձ համար հաճելի էր:

Այո՛, ավելի առաջադեմ, սիրով լեցուն, ավելի բարեկեցիկ ապագայի համար պետք է խաղաղարարության ուղղությամբ գոնե ինչ-որ բաներ ձեռնարկենք մեր շրջապատում: Այս հակամարտության ձգձգումը ոչ մեկին օգուտ չի բերում, այլ միայն սարսափելի վնասներ է հասցնում: Ատելությունը սպանում է, իսկ սերը՝ ապրեցնում:

Ինչո՞ւ պետք է թշնամիներ լինենք՝ միմյանց այսքան մոտ լինելով հանդերձ: Ինչո՞ւ չենք կարողանում այցելել միմյանց երկրներ: Ինչո՞ւ լավ ապագայի համար համատեղ նախագծերում չաշխատենք: Ախր մենք շատ հնարավորություններ ունենք, որոնք կարող ենք միասին արժևորել: Հողը, երգը, ուտելիքը, ավանդույթները, սահմանները, հարստությունները կարևոր չեն: Կարևորը մարդն է: Կարևորը սերն ու զգացմունքներն են: Ապրել և ապրեցնելն է:

Վրաստանում հանդիպելու վերաբերյալ առաջարկդ ընդունում եմ սիրով:

Իլկին

## **Գոհար Թ. – Նագրին**

Ողջուն՝ն, սիրելի՛ ընկեր,

Ես Գոհարն եմ՝ ապագա բժշկուհի, որն աշխարհն ուզում է տեսնել սիրով լեցուն:

Նամակը գրում եմ ու միաժամանակ պատկերացնում, որ տարիներ անց գուցե հանդիպենք միմյանց սուրճի սեղանի շուրջ, ժպիտով հիշենք, թե ինչպես ծանոթացանք և ինչպես դարձանք խաղաղության աղավիններ:

Այս ամենը տեսնելու ու զգալու մեծ ցանկությամբ հիմա ամեն բան թողել եմ մի կողմ, վերցրել եմ թուղթն ու գրիչը, մոռացել մնացյալ խնդիրների ու առօրյա մտածմունքների մասին:

Անձանոթ ենք դեռ, բայց մի բան հաստատ է, որ երկուսս էլ ապրում ենք նույն աշխարհում: Երկուսիս համար էլ արևը մեկն է, երկինքը, լուսինը, աստղերը նույնն են: Երկուսս էլ բանական մարդիկ ենք, որոնք սիրտ ունեն, հոգի, սիրել գիտեն, ում աչքերն ու ականջները միայն խաղաղություն են ուզում տեսնել ու լսել:

Դեռ օրորոցում ես արդեն ազատության կռիվ էի տալիս, թևերս արձակել էի ուզում: Գիտեմ, բոլորս էլ ձգտում ենք ազատության, սակայն չպետք է մոռանանք խաղաղություն պահպանելու մասին:

Դարերով փոխանցվող թշնամանքը միլիոնավոր կյանքեր է խլել, ինչի պատճառով սերը պակասել է մեզ շրջապատող աշխարհում:

Հասունացել է այն պահը, երբ ինձ ու քեզ պես մարդիկ կգտնեն այն կորած երազը, որտեղ միայն խաղաղությունն է ապրել:

Գիտե՞ս, ես ինքս ունեմ թուրք և ադրբեջանցի ընկերներ և ուզում եմ՝ համոզված լինես, որ ինչպես նրանց, այնպես էլ քո ու քո ընկերների և հասակակիցների հանդեպ լցված չեմ թշնամանքով: Երազում եմ, որ մի օր ինչպես այլ ազգի մարդիկ, այնպես էլ դու հյուր գաս ինձ Հայաստանում որպես հարևան երկրի բնակիչ, այլ ոչ թե թշնամի, և հենց այստեղ ծանոթանաս մեր մշակույթին, ավանդույթներին և պատմությանը: Իմացի՛ր, որ այս ամենն անկեղծ է, այլ ոչ թե ուղղակի ասված խոսքեր:

Վստահի՛ր ինձ ու տո՛ւ՛ր ձեռքդ, և թո՛ղ մենք լինենք այն սերունդը, որը կկարողանա ազատվել անցյալի կապանքներից և սիրով ու համերաշխությամբ լեցուն ապագա կառուցել:

Թո՛ղ մենք լինենք այն երիտասարդները, որոնք վերջնականապես կհաղթեն իրենց մեջ ապրող ատելությունը, որպեսզի խաղաղությունն վերագտնելու ճանապարհին այլևս ոչ մի արգելքի չհանդիպեն:

Իսկ դու՞, դու ի՞նչ երազանքներ ունես, և ինչպիսի՞ն են քո պատկերացումները խաղաղության մասին:

Ուրախ եմ, որ նման հնարավորություն ընձեռվեց, և կարողացա իմ սրտինը փոխանցել քեզ: Հուսով եմ, որ քո նամակում ևս կգերակշռի անկեղծությունը: Շնորհակալ եմ նամակս ընթերցելու համար, ի՛մ բարեկամ:

Քո նամակին անհամբեր սպասող՝

Խուճուճ Գոհար

Բարև՛, իմ սիրելի՛ ընկեր Գոհար,

Սրտանց ողջունում եմ քեզ նամակիդ համար, ինչպես նաև շնորհակալությունս եմ հայտնում ցուցաբերած անկեղծությանդ համար: Ես էլ կփորձեմ իմ նամակի մեջ քեզ ցույց տալ նույն անկեղծությունը: Դու շատ ճիշտ ես նշում, որ մենք մի նոր աշխարհում ենք ապրում, նոր մի տիեզերք ենք կիսում: Դարեր ի վեր մեր ժողովուրդներն ապրել են բարեկամական հարաբերությունների պայմաններում և եղել են հարևաններ: Ես էլ, որպես մի խաղաղասեր երիտասարդ, դատապարտում ու քննադատում եմ պատերազմը, որովհետև պատերազմը կորուստ է, ցավ, մայրական արցունքներ, մահ, հիվանդություն: Դա սարսափելի մի բան է: Ես էլ եմ կորցրել մի քանի բարեկամ, որոնք զոհվել են պատերազմում կռվելիս, անկասկած դու էլ նման բարեկամներ ու ծանոթներ ունես:

Անխոս, մեր՝ երիտասարդ սերնդի առջև ծառացած առաջին պարտականությունն է փորձել վերջ դնել պատերազմին և հասնել շահավետ խաղաղության: Հատկապես Հայաստանի և Ադրբեջանի պես երկար տարիներ բարեկամական հարաբերություններ ունեցած պետությունների համար սա շատ կարևոր է: Իմ ծնողները, ավագ սերունդը միշտ պատմում են հայերի հետ մոտ ու հարազատ կապերի մասին:

Տառիկս նշում է, որ տարիներ առաջ հարևաններից մեկը հայ է եղել, և նրա հետ շատ սիրալիք հարաբերություններ են ունեցել, հաճախ միմյանց տուն հյուր են գնացել, օգնել միմյանց:

Հայրս և մայրս նշում են, որ նրանց դասընկերների մի մասը հայեր են եղել, և նրանց համար որևէ տարբերություն չի եղել: Կարծում եմ, այստեղ զարմանալու ոչինչ չկա: Բաքուն ԽՍՀՄ կազմում եղած

Ժամանակ բազմազգ քաղաք էր, և այստեղ կարելի էր հանդիպել տարբեր ազգերի ներկայացուցիչների: Իրականում, եթե մեր ժողովուրդները չենթարկվեին երրորդ կողմի միջամտությանը, մեր միջև ծագած այս տարածքային խնդիրը կարելի էր ավելի շուտ կարգավորել:

Ես կարող եմ քեզ լիովին վստահեցնել, որ ես քո ժողովրդի, ինչպես նաև քո հանդեպ ատելություն չեմ տածում, քանի որ կարծում եմ, որ մարդու հանդեպ զուտ նրա ազգության պատճառով ատելություն տածելը դեմ է մարդասիրական սկզբունքներին: Ճիշտ չէ ատելություն տածել ու մեղադրել ժողովրդին որևէ անհատի հանդեպ պատերազմի կամ հակամարտության պատճառով: Ես վստահ եմ, որ մեզ նման երիտասարդները կողմ չեն, որ պատերազմը շարունակվի ու ձեր ազգակիցները զոհվեն տարածքային վեճերի պատճառով. հավատա՛, որ ես էլ եմ այդ գաղափարը կրողներից մեկը: Շատ կուզեի ճանաչել ինձ այս գեղեցիկ նամակը գրած աղջկան, նրա հետ երկար–երկար զրուցելի, ինչպես դու ես նշել նրա հետ միասին նստելի թեյի սեղանի շուրջ: Ցավոք, մեր եկրների միջև առկա թշնամանքի հետևանքով դա հնարավոր չէ: Բայց ես սրտանց հավատում եմ, որ այդ օրը գալու է: Մեր տարածքային հակամարտությունը հենց խաղաղ ճանապարհով է լուծվելու, պատերազմին վերջ է դրվելու, և մեր ժողովուրդը հանգիստ կարողանալու է այցելել ձեր տարածքներ, դուք էլ՝ մեր տարածքներ: Ահա այդ ժամանակ ես քեզ հյուր կկանչեմ իմ տուն, կծանոթացնեմ մեր պատմությանը, ավանդույթներին ու մշակույթին: Ընդհանրապես, այն ամենն ինչին կծանոթանաս, քեզ այնքան էլ օտար չեն թվալու, քանի որ մենք Կովկասի ժողովուրդներ ենք, և մեր ազգային արժեքները նման են միմյանց:

Ինձ հարցրել էիր, թե ինչպես եմ պատկերացնում խաղաղությունը: Ըստ իս, խաղաղությունը բարեկամությունն է, եղբայրությունն է, երկու երկրների հարաբերությունների՝ բարձր ու հիմնալի մակարդակը: Ընկերս, իմ կարծիքով խաղաղությունը պետք է սկսվի

Ժողովուրդներից ու նրանց միջև հարաբերություններից: Այն պետք է սկսեն, շարունակեն ու պահպանեն մեզ պես երիտասարդները՝ երկու կողմից էլ: Եթե խաղաղության հասնելը դժվար է, ապա այն պահելը, դրան տեր կանգնելն ավելի դժվար է:

Ես քաղաքագիտություն եմ ուսումնասիրում և արդեն 3–րդ կուրսում եմ: Ապագայում հիմնական նպատակս է այս հակամարտությունը լուծել խաղաղ ճանապարհով և վերջ դնել կորուստներին, ցավին, երկու կողմից ցավ ապրող մայրերի հառաչանքներին: Հույս ունեմ՝ կհասնեմ այդ երազանքիս, որովհետև դա իմ գերագույն նպատակն է: Ես շատ ուրախ եմ, որ ծանոթացա քո մտքերին ու տպավորություններին: Հույս ունեմ, որ խաղաղության հասնելուց հետո քեզ հետ միասին կհպարտանանք միասին կատարած մեր այս քայլով: Մեկ անգամ ևս ցանկանում եմ երախտիքս հայտնել նամակիդ համար: Լա՛վ եղիր, ընկերս: Դժվար, սակայն պատվաբեր ուղում քեզ հաջողություն եմ մաղթում:

Մեր երկիր հյուր գալուդ օրվան անհամբերությամբ սպասող՝

Խաղաղասեր Նազրին

## Մերի – Ֆիրա

Բարև՛, ինձ այդքան մոտ, բայց միևնույն ժամանակ այդքան հեռու ապրող, սիրելի՛ բարեկամ:

Ես Մերին եմ՝ Չինվորի քույր: Հուսով եմ՝ գիտես, թե ինչ է նշանակում լինել զինվորի քույր, եղբայր կամ բարեկամ: Ես չեմ ուզում գիշերը քնել այն վախով, որ առավոտյան կարող եմ վատ լուր լսել սահմանից: Ես չեմ ուզում ամեն անգամ եղբորիցս զանգ ստանալիս լսափողում կրակոցի ձայներ լսել, որի պատճառով ընդհատվում է մեր խոսակցությունը: Ահա այն գլխավոր պատճառը, որ ես գրում եմ քեզ այս նամակը: Եվ գրում եմ մեծ ուրախությամբ ու ոգևորությամբ, քանի որ գիտեմ, որ հարևան երկրում կա ինձ լսող, իմ մտքերը կիսող մարդ: Հնարավոր է՝ դու չհամաձայնես իմ որոշ մտքերի հետ, բայց հավատա՛ կարևորն այն է, որ մենք երկուսս համախմբվել ենք մեկ նպատակի համար. հասնել հակամարտության խաղաղ կարգավորմանը:

Ի՞նչ է խաղաղությունը: Խաղաղություն տերմինը յուրաքանչյուր ոք կարող է բացատրել յուրովի, բայց և կարծում եմ, որ գրեթե բոլորի մտքերը հանգեցնում են մի գաղափարի:

Մենք բոլորս էլ լավ գիտենք մեր պատմությունը: Մենք շատ բաներ կորցրել ենք, գուցե որոշ բաներ՝ ձեռք բերել, բայց այդ ձեռքբերումները արժեցել են մարդկային կյանքեր: Ես չեմ կարծում, որ աշխարհում կա մի որևէ նյութական բան, կոնֆլիկտ, շահ, որը թանկ արժի և վեր է դասվում մարդկային կյանքից:

Մենք մեղավոր չենք մեր նախնիների արարքների համար, բայց որպես նրանց սերունդներ՝ պատասխանատու ենք այդ արարքների համար: Գուցե և նրանք, ինչպես մենք, չեն ցանկացել պատերազմ, բայց եղել են հանգամանքներ, միգուցե մարդիկ, որոնք նրանց դրդել են պատերազմելու:

Այն, ինչ լինելու է կամ կարող է լինել ապագայում, մենք ենք դրա պատասխանատուն. մենք ենք որոշելու, թե ինչ է լինելու հետագայում: Ուրեմն՝ ինչու՞ չանել բարին, ինչու՞ չլինել բարի:

Մենք մեր նախնիներից ժառանգել ենք պատերազմ, բայց ես վստահ եմ, որ դու էլ չես ուզի, որ մենք մեր երեխաներին ժառանգություն տանք այդ դաժան պատերազմը: Եվ եթե փորձը ցույց է տվել, որ կարող ենք ապրել խաղաղությամբ, ինչու՞ չանել այդպես:

Խաղաղության հասնելու առաջին և կարևոր քայլը արդեն մենք արել ենք. մենք պատրաստ ենք լսել միմյանց, դա ամենակարևորներից մեկն է:

Երկրորդը՝ անցյալում թողնել անցյալը և ապրել ներկայով: Չնայել հետ, չփնտրել մեղավորներ: Ես վերևում նշել եմ, որ մենք մեղավոր չենք մեր նախնիների կատարած քայլերի համար, բայց եթե մենք հիմա էլ անենք այն, ինչ նրանք են արել առաջ, մենք նույնքան մեղավոր կլինենք: Մենք պետք է նայենք առաջ, լինենք լավատես և մշակենք նոր ծրագրեր, որ մեզ քայլ առ քայլ կտանեն խաղաղության:

Երրորդ կարևոր քայլն այն է, որ պետք է մաքրենք սահմանները: Եթե երկնքում չկան փակ սահմաններ աստղերի միջև, ապա ինչու՞ են մարդիկ սահմանները փակում երկրի վրա՞ պետությունների միջև: Բայց նախքան սահմանազծերը քարտեզի վրայից մաքրելը, մենք պետք է բացենք մեր հոգու և սրտի միջև եղած սահմանները, որպեսզի սերը, բարությունը, խաղաղությունը սփռվի աշխարհի վրա: Ուստի՝

արի՛ լինենք այն խաղաղության աղավնիները, որ բարություն կտարածեն ոչ միայն սահմաններից ներս, այլև՝ դուրս: Եվ հետո ոչ հեռու ապագայում, երբ ես կլինեմ հյուր գեղեցիկ Ադրբեջանում կամ դու՝ գեղեցիկ Հայաստանում, մենք կխոսենք երկար: Հպարտությամբ կհիշենք խաղաղության հասնելու համար արված մեր քայլերը: Եվ օրինակ կծառայենք նոր սերնդին և ինչու՞ չէ նաև՝ պատերազմող սերնդի ներկայացուցիչներին և կապացուցենք, որ խաղաղության կարող ենք հասնել առանց զենքի:

Լավագույն խաղաղասիրական մաղթանքներով՝

Քո ընկեր Մերի

\* \* \*

Բարև՛, սիրելի՛ Մերի,

Ես Ֆիրան եմ, սա իմ անվան կրճատ ձևն է: Ոգևորությամբ սպասում էի նամակիդ և նույն ոգևորությամբ էլ կարդացել եմ այն: Ուրախ եմ, որ նույն զգացմունքներն ունենք: Այնքա՛ն ճիշտ արտահայտություններ ես օգտագործել, որ նամակդ ինձ վրա մեծ ազդեցություն է թողել: Անհավատալի զգացողություն ունեմ, քանի որ գիտեմ՝ կարդալու ես խոսքերս: Եղբորդ հետ կապված վախերդ ու անհանգստություններդ ես էլ եմ ապրում: Այնքան իրավացի ես, քանի որ իմ հայրն էլ է զինվորական, շուտով նաև եղբայրս է բանակ գորակոչվելու. լավ չէ, որ զինծառայությունը պարտադիր է: Ճիշտ է, սահմանամերձ գոտում չեմ ապրում, բայց այնտեղ տեղի ունեցող ամեն բան միշտ անհանգստացնում է ինձ, և սա առաջին դժվար քայլն է, որը ես անում եմ: Խաղաղության վերաբերյալ մեր մտքերը միմյանց շատ նման են, և դա շատ ուրախալի փաստ է ինձ համար: Ինչպես դու ես նշել. «Մենք մեղավոր չենք մեր նախնիների արարքների համար»:

Գուցե մենք մեզ հրամցված «իրականությանից» զատ ոչինչ չգիտենք: Ինչ էլ լինի, արդյունքում ամեն բան նորից մարդկային կյանքի գնով է լինում: Մինչ այժմ տեղի ունեցածները ոչ մի կողմին չի գոհացրել, սակայն համատեղ ապագայի համար մենք կարող ենք ինչ–որ բան անել և դա կլինի իրական հայրենասիրություն: Թեև ասում են, որ պատերազմ չկա և ամեն ինչ լավ է, սակայն դեռ մեր սիրելիները, հայրենակիցները զոհվում են: Հույս ունեմ, որ համապատասխան անձինք առանց պատերազմի, առանց կորուստների և զենքի համատեղ որոշման կհանգեն: Գիտեմ, թե որքան հարագատ ժողովուրդներ ենք եղել պատմության ընթացքում, սակայն պատերազմից տարիներ են անցել, և առաջընթաց չունենք: Իսկ մեր հայրենակիցները հանուն ինչ–որ բաների փոխվում են: Ես միայն դրա համար եմ ցավում: Գիտե՞ս, ՄԵՐԻ, իմ երագանքը ճանապարհորդ դառնալն ու աշխարով մեկ շրջելն է: Դեռևս իմ երկրում եմ շրջագայում, բայց կուզենայի մի օր էլ Հայաստան գալ: Երբեմն Google Earth–ով նայում եմ Ղարաբաղը. ես արդեն ուզում եմ ծնողներիս պատմածների ու հուշերի փոխարեն ինքս տեսնել այդ ամենը: Հույս ունեմ, որ մի օր ես և դու կհանդիպենք որպես հարևաններ: Եվ այդ ժամանակ այս ճանապարհին միավորվելու համար հպարտանալու ենք այս նամակով: Առայժմ ցտեսություն եմ ասում, որովհետև եթե մենք կանք, նշանակում է հույս ևս կա...

Քո խաղաղասեր ընկեր՝

Ֆիրա

## Մարիանա – Նագիմ

Բարև՛, իմ ծանոթ և անծանոթ բարեկամ,

Ես Մարիանան եմ: Գրում եմ քեզ մի երկրից, որտեղ դու չես եղել, բայց մեծ հույս ունեմ, որ իմ այս նամակը կարդալիս կցանկանաս տեսնել ինձ ու իմ երկիրը, քանի որ ես ցանկանում եմ տեսնել քեզ և իմանալ, թե ինչպիսին է ինձ այդքան ծանոթ և անծանոթ բարեկամը:

Իմ այս նամակը, որն ուղղված է քեզ, հնարավորություն է տալիս կոտրել այն կարծրատիպը, թե երբեք հնարավոր չէ կապ հաստատել քո պետության քաղաքացու հետ, առավել ևս՝ խոսել խաղաղության մասին, որը մեր ժամանակների գերագույն խնդիրն է:

Գիտե՞ս, խաղաղությունն այն է, որ դեռ փոքր երեխան չգիտակցված, բայց իր երազանքների մեջ անպայման տեղ ունի դրա համար, և խաղաղություն է ցանկանում ողջ աշխարհին՝ չիմանալով, որ կան թշնամանալ, ատել հասկացությունները, քանզի դա խորթ է նրա մանկական, պարզ մտքին:

Արի՛ մենք, տես, չեմ ասում ես և դու, այլ մենք կերտենք մեր ապագան, մի կողմ թողնենք ատել և թշնամի բառերը և օգտագործենք բարեկամը, ընկերը, հարազատը:

Ես ունեմ իմ մտքերն ու կարծիքները խաղաղության վերաբերյալ, օրինակ՝ խաղաղությունն ինձ համար սահմանում չունի, որ սահմանենք և առաջ անցնենք: Այս հարցի շուրջ մտորելիս հասկացա, որ խաղաղությունը շատ տարբեր կերպ կարելի է ընկալել, և կարևորն այն է, որ բոլոր տեսակի խաղաղությունները փոխկապակցված են: Եթե երկիրդ խաղաղ է, խաղաղ ես դու, խաղաղ է հոգիդ և երկինքը:

Լավ է չէ՞, երբ ներսդ խաղաղ է, իսկ ինչքան լավ է, որ խաղաղ է երկիրդ: Ինձ համար խաղաղության գույներն էլ են տարբեր լինում, օրինակ՝ պատերազմն ունի իրեն բնորոշ գորշ գույները՝ մթություն, փոշու ամպ, արյուն, իսկ խաղաղություն ասելիս հասկանում եմ ճերմակ, կապույտ երկինք, պայծառ արև, ժպիտ: Հուսով եմ՝ կհամաձայնես ինձ հետ:

Գիտե՞ս, ինձ միշտ հետաքրքրել է՝ թե դու, քո ընկերները, հարազատները ինչպես եք մտածում և ինչ ճանապարհ եք տեսնում խաղաղության հասնելու համար: Ես առիթ չեմ ունեցել այցելել ձեր երկիրը, խոսել այդտեղի բնակիչների հետ, լսել նրանց կարծիքները: Բայց վստահ եմ՝ առողջ մտքի տեր մարդը, հասարակության անդամը, պետության քաղաքացին ցանկանում է իր երկիրը տեսնել խաղաղ և տեսնել երկու ժողովուրդ, որ ապրում են մեկ երկնքի տակ և հենց այդ մեկ երկնքով էլ համերաշխ լինել երկրի վրա:

Հիմա քեզ կպատմեմ մի պատմություն, որտեղ մեր ժողովուրդները հաշտ են եղել, և որ հաշտ լինելը մեր ներսում թաքնված է, ուղղակի հիմա շատ բայցեր կան մեր միջև, որ պիտի ջնջենք:

Տատիկս իր ծնողների հետ ապրել է Ադրբեջանի Շամխորի շրջանում 20 տարի, այնուհետև ամուսնացել է և եկել Հայաստան: Իսկ ծնողները 1992 թ. շարժման ժամանակ տեղափոխվել են: Տատիկս պատմում է, որ այդ տարածքում ապրել են նաև իր պապու պապերը, և չեն կասկածել, թե այդ տարածքը կարող են լքել: Մեր ժողովուրդներն այնքան հաշտ են ապրել, որ գիշերները տան դուռը չէին փակում, քանի որ վստահություն կար նրանց միջև: Տատիկիս հայրիկի ընկերների մեծ մասը ադրբեջանցիներ են եղել և մի ընկերը, որի անունը Մահար էր, այնքան հարազատ էր դարձել, որ նրան անվանում էին Մահար դայի:

Գիտե՞ս, տատիկիս ցանկությունն է, որ տեսնի իր հայրական տունը այսքան տարի անց, իսկ եթե չհասցնի, ապա դա պատգամել է իր թոռնիկներին:

Մտածում եմ, հանգամանքները ուժեղ գտնվեցին և բորբոքեցին թշնամական խարույկը, որը թեժացնում է պատերազմ տանող ուղիները, բայց հիմա հերթը մերն է՝ ինձ նմանների և քեզ նմանների հերթը. մենք այդ հանգամանքներից ավելի ուժեղ պետք է լինենք: Պատկերացրո՛ւ՝ որքան հրաշալի կլինի, որ այցելես մեր երկիր, ես քեզ ցույց կտամ քո փնտրած տարածքը, իսկ դու՝ իմ տատիկի բնակավայրը: Եվ միասին կհիշենք մեր այս նամակները, ու կասենք՝ ինչքան բան է փոխվել: Եվ մեր նամակները կարդալիս մի կուշտ կծիծաղենք, թեկուզ դա լինի այս պահից մի տասը կամ քսան տարի հետո: Եվ մենք մեր խաղաղասիրական ոգով կողողենք մարդկանց, նրանց հոգու, ցավի մութ անկյունները կլուսավորենք մեր լավատեսությամբ, առողջ դատողություններով և կլինենք լավագույն օրինակը:

Նաև ասեմ, որ սովորում եմ Երևանի պետական համալսարանի Հայ բանասիրության ֆակուլտետում և իմ մասնագիտությունից ելնելով ասեմ, որ հայերենում խաղաղություն բառը պարզ ածանցավոր է, բայց իր մեջ ամփոփում է վեհ գաղափարներ, մարդուն հասցնում կատարելության, կատարսիսի՝ մաքրագործման:

Ես չգիտեմ իմ նամակը կարդալիս՝ ինչ կզգաս, բայց հուսով եմ կարտահայտես դրանք ի պատասխան: Կներես, որ այսքան երկար գրեցի, ուղղակի չկարողացա կարճ գրել: Իմ նամակը փոքրիկ կոչ է, որ գալիս է մարդասիրությունից դրդված:

Սիրով՝

Մարիանա

Հ.Գ. Փոքր են քայլերս, բայց հստակ...

Բարև՝ սիրելի՛ ընկեր Մարիանա,

Ես Նազիմն եմ, խաղաղության վերաբերյալ քո մտքերը կարդալիս շատ գեղեցիկ զգացողություններ ունեցա: Միանում եմ խաղաղության մասին քո մտքերին և ուզում եմ քեզ կարճ պատմել խաղաղության վերաբերյալ իմ պատկերացումների մասին: Ես 20 տարեկան, շրջագայել սիրող մի երիտասարդ եմ: Ինձ համար խաղաղ աշխարհն այն է, որտեղ կարող եմ այցելել ցանկացած երկիր: Ցավոք, այսօրվա իրավիճակում ո՛չ ես կարող եմ այցելել քո երկիրը, ո՛չ էլ դու կարող ես այցելել իմ երկիրը:

Երբ կարդում էի քո տատիկի՝ Շամքիրում և դրանից հետո ապրած կյանքի պատմության մասին, մեկ անգամ ևս համոզվեցի, թե որքան նման են մեր կյանքերն ու ճակատագրերը:

Պապիկս և նրա ընտանիքը 1965 թ. Ճամբարակից (Կրասնոսելսկ) տեղափոխվել են Բաքու: Երբ ես փոքր էի, նա ինձ հաճախ էր պատմում իր հայաստանցի դասընկերների, ծառայակից ընկերների մասին: Պատմում էր միասին խաղացած խաղերի, ճաշակած ուտելիքների մասին: Թեև հայրս ծնվել է Ղուբադուի շրջանում, 1992 թ. որպես ներքին տեղահանության ենթարկված անձ՝ ստիպված էր հաստատվել Սումգայիթում: Անգամ այս նամակը գրելիս նա պատմում էր, թե ինչպես էին Հազարի գետի ափին հայաստանցի ընկերների հետ խորոված պատրաստում: Սա ինձ համար ոգևորող պատճառ է, որպեսզի հակամարտությունը շուտ կարգավորվի՝ խաղաղ ճանապարհով:

Ես էլ կցանկանայի հակիրճ ներկայացնել ինձ: Ուսանող եմ. ապագա միջազգայնագետ: Այս գործընթացը գուցե 50 տարի հետո լինի, սակայն եթե երկու ժողովրդի միջև դիվանագիտական

հարաբերություններ հաստատվեն, ես կլինեմ այն անձանցից մեկը,  
որը սիրով կաշխատի ապագա դեսպանատանը:

Գուցե մտքերս չկարողացա արտահայտել երկար և հարուստ  
նախադասություններով, սակայն ուզում եմ՝ իմանաս, որ ես էլ  
խաղաղություն եմ ուզում նույնքան, որքան դու:

Մնաս խաղաղությամբ՝

Նազիմ

## Գոհար Հ. – Անանուն

Բարև՛, բարեկա՛մս,

Անունս Գոհար է։ Ես 18 տարեկան եմ, ապրում եմ Հայաստանում։  
Քեզ հպարտությամբ ձեռք եմ մեկնում. ուզում եմ խոսել  
խաղաղության վերահաստատման մասին։

Մենք երկուսս էլ ապրում ենք բարդ իրավիճակում, երբ ամեն օր լսում  
ենք սահմանի ցավալի դեպքերի մասին։ Իհարկե, ոչ մեկս էլ դա չենք  
ցանկանում, բոլորս էլ մարդ ենք և ուզում ենք ապրել խաղաղ երկնքի  
տակ։ Մենք ուզում ենք հասնել խաղաղության, իսկ որո՞նք են դեպի  
խաղաղություն տանող ճանապարհները։ Մենք չենք կարող անվրդով  
ու անմասն մնալ այդ իրադարձություններից, երբ գիտենք, որ մեր  
տարիքի երիտասարդներն են փորձում պահել այդ խաղաղությունը։  
Բայց, ցավոք, դա բավարար չէ։ Խաղաղությունը, իհարկե, պետք է լինի  
երկխոսությամբ։ Ես համոզված եմ՝ ինչպես ես, այնպես էլ դու չես  
ցանկանում պատերազմ, սիրելի՛ ընկեր։

Իմ խաղաղասե՛ր ընկեր, ե՛կ խաղաղություն սփռենք ողջ աշխարհում  
և խաղաղության յոթներանգ ծիածան կապենք մեր երկրների  
երկնակամարում։ Գիտե՞ս, ես նույնիսկ պատկերացրել եմ՝ ինչ կլինի  
խաղաղության հաստատումից հետո.

*Անամայ երկինք,*

*Խիհնդ ու ուրախություն,*

*Չորս աչքեր,*

*Խաղաղ սիրտ ու ուրախ մանկություն,*

*Որդուն տազնապով չսպասող մայր և անխռով քուն,  
Խաղաղ սահմաններ, զինվոր, որի սրտում տազնապ չկա,  
Եվ վերջապես՝ արարում ու բարգավաճում:*

Մենք՝ ես ու դու, գիտակցում ենք պատերազմից բխող արհավիրքները, այդպես չէ՞. խեղված ճակատագրեր, կորսված կյանքեր, մի՞թե սա է մեզ հարկավոր...

Ուրեմն, սիրելի՛ս, ե՛կ մի պահ շեղվենք, մի կո՛ղմ թողնենք ամեն բան, դու՛րս գանք այն օդակի միջից, որն արդեն քանի տարի է՝ մեզ ամուրի իր մեջ է պահում: Ե՛կ ձեռք ձեռքի տանք, կոտրենք մեր մեջ այն կարծրատիպը, որ անհնար կլինի շփվել սովորական մարդկանց պես: Ե՛կ ընկերներ դառնանք: Դառնանք այն շարժիչ ուժը, որը կփոխի մեզ ու մեր երկրները: Սիրելի՛ս, մենք ենք մեր վաղվա օրն ու ապագան: Արի՛ ապրենք կողք-կողքի ու սիրով: Արի՛ քայլ անենք, որ այն շարժառիթ դառնա, այլ ոչ թե շարժառիթը երևան գա, և այդ քայլը հետո արվի: Հասկացի՛ր, բարեկա՛մս, լավագույն ստեղծագործությունը անկախ ու հանգիստ ապրելն է երկրի վրա:

Արի՛ միշտ հիշենք, որ սխալը սխալ է այնքան ժամանակ, քանի դեռ այն չենք ուղղել: Արի՛ փորձենք սովորել մեր սխալներից: Չիջենք միմյանց, որ երջանիկ լինենք: Սիրենք միմյանց, որովհետև չկա աշխարհում ավելի գեղեցիկ զգացմունք, քան մարդկային սերը: Ես սիրում եմ իմ երկիրը, ինչպես դու քո հայրենիքն ես սիրում: Ես ուզում եմ քեզ տեսնել այստեղ: Նորի՛ց կարդա անունս. ես Գոհարն եմ, արի՛ ու գտիր ինձ:

Քո հայաստանցի ընկեր կամ մտերիմ ընկեր՝ Գոհար, ինչպես որ կցանկանաս...

Բարև՛, սիրելի՛ Գոհար,

Ուրախացա, որ ինձ արժանացրել ես «ընկեր» պատվավոր կոչմանը: Կարդալով ձեր նամակը՝ հասկացա, որ նույն մտածելակերպն ունենք, ու մեր ցանկությունը նույնն է՝ խաղաղություն: Դուք արդեն նշել եք, որ խաղաղության հաստատումից հետո մենք կարող ենք հասնել խաղաղ երկնքի, ուրախության, երջանկության ու բարգավաճման: Աղոթեջանն ու Հայաստանը հարևան երկրներ են: Նման դժվար քաղաքական իրավիճակում գտնվող ժողովուրդը գուրկ է մի շարք «արտոնություններից»: Մենք չենք կարողանում շրջագայել: Հայաստանն ու Աղոթեջանը շատ գեղեցիկ վայրեր ունեն, որոնք տեսնել է պետք: Մեզինից ոմանք չեն կարողանում տեսնել անգամ իրենց ծննդավայրերը:

Մենք գրկվում ենք նաև ընկերներից: Այժմ որոշ հանգամանքների բերումով թշնամու աչքով միմյանց նայող մարդիկ մի ժամանակ ընկերներ են եղել և ապագայում կարող են կրկին ընկերներ լինել: Մինչ մենք կկարողանանք միմյանց վստահել, կանցնեն տարիներ: Ես մի փոքր շրջանից եմ, որտեղ Խորհրդային միության շրջանում հայեր էլ են ապրել: Բնակչությունը խաղաղ է ապրել, սակայն 90–ականների դեպքերից հետո ատելություն ի հայտ եկավ: Հայերը լքում էին աղոթեջանական հողերը, թողնում ու լքում էին այն տները, որտեղ տարիներ շարունակ ապրել էին, սակայն ոչ բոլորը, ոմանք դրա հետ չհամակերպվեցին, փոխեցին իրենց անուններն ու մնացին իրենց հարազատ հողում:

Մայրիկիս դպրոցական նկարները նայելիս մի քանի նկար գտա, որտեղ երեխաների դեմքերը պատռված էին: Հետո իմացա, որ մայրիկիս դասարանում հայ երեխաներ են սովորել և ժամանակին որպես ընկեր ընդունած երեխաներին փորձել է հանել իր կյանքից ու հուշերից: Դա

տեղի է ունեցել 1989–1990–ականների դեպքերի պատճառով, սակայն փոխվեց դեռահաս պատանու միտքը, ճանաչած մարդկանց մասին կարծիքը, այլևս նրանց նկատմամբ վստահություն չկար:

Քանի որ պատերազմական իրավիճակում ենք, կորցնում ենք նաև գիտելիքների առումով: Փորձի փոխանակումը ամենալավ ճանապարհն է, սակայն աշխարհագրորեն ու էթնիկակապես մեզ մոտ կանգնած երկրի հետ չենք կարողանում կիսել մեր գիտելիքները:

Չենքի և սահմանների պաշտպանության վրա շատ գումար ենք ծախսում: Եթե այդ միջոցները ՉԵՆՔԻ վրա չծախսենք, դժվար չէ պատկերացնել, թե ինչպես կարող են փոխվել բժշկությունը, կրթությունը և այլ ոլորտներ:

Ո՞ր ճանապարհներն են տանում դեպի խաղաղություն: Այս հարցը կար ձեր նամակում, սակայն դրա պատասխանը գտնելը դժվար է: Կարծում եմ՝ գլխավորը բնակչությունն է: Առաջին ճանապարհը մենք կառուցեցինք, և վստահ եմ, որ ձեզ ու ինձ պես մարդիկ քիչ չեն: Դուք նշում եք կարծրատիպերի մասին: Ցավոք, դրանք կոտրելը շատ դժվար է: Ընկերոջս հայրը Քելբաջարը լքած վերջին մարդկանցից է: Նրա քույրերն ասել են, որ չեն քելու հայրենի հողերն ու բարձրացել են սարերը. նրանց մասին դեռևս ոչ մի տեղեկություն չկա: Այդ ընտանիքն ինչպե՞ս կոտրի իր կարծրատիպերը, ինչպե՞ս հավատա խաղաղությանը: Քելբաջարը քելուց հետո իրենց տներում 20 տարի ապրող մարդուն (հային) ինչպե՞ս վերաբերվի ընկերաբար: Այդ մարդիկ դեռևս պահում եմ Քելբաջարի իրենց տան բանալիները՝ հույսով, որ մի օր կվերադառնան իրենց տները: Այդ մարդկանց համար խաղաղությանը հավատալը, նրանց խաղաղություն քարոզելը շատ դժվար է:

Վստահ եմ, որ նմանատիպ պատմություններ ձեզ մոտ էլ շատ կան, սիրելի՛ ընկեր: Կարծրատիպերը ոչնչացնելը, միմյանց համակերպվելն

ու վստահելը մեր առջև դրված ամենաբարդ գործն է: Դա ժամանակատար է լինելու, և վստահ եմ՝ մենք կկարողանանք պատվով կատարել այն: Հաջորդ սերունդը ստիպված չի լինելու իր մտքերն արտահայտել նամակների միջոցով, այլ ամեն բան կարողանալու են ասել անձամբ:

*Խաղաղությունը խուքի, մոքի, շարժման ազատությունն է:*

*Խաղաղությունը հաշտություն ու հանդարտություն է:*

*Խաղաղությունն ուրախություն է:*

## Սոֆյա – Լաման

Ողջուն՛ն, իմ սիրելի՛ հարևան,

Ես Սոֆյան եմ՝ մի երիտասարդ ուսանող, որն արդարության կողմնակից է։ Ես ինքս լավատես մարդ եմ։ Լավատեսորեն եմ մոտենում կյանքին և գրեթե բոլոր իրավիճակներին։

Գիտե՞ս, սկզբում մտածում էի՝ շատ բարդ կստացվի քեզ նամակ գրել։ Մտածում էի՝ ներսումս կխառնվի ամեն բան, հետ կգնամ, տարիների պատմությունները կհիշեմ, ինչ–որ տազնապ կլինի։ Մտածում էի ճիշտ բառեր գտնեմ, որ հանգիստ մտքով գրելս հենց քեզ հասնի, որ դու ընթերցես նամակս՝ ամենակարևորը զգալով խաղաղության շունչը։ Բայց հասկացա, որ հիմա գրելիս չկա ոչ մի լարվածություն կամ ցավ, միայն ու միայն խաղաղություն զգալով՝ թղթին եմ հանձնում մտքերս։ Նույնիսկ նոր գրիչ եմ գնել, որ ավելի հաճույքով գրեմ։ Կցանկանայի՛ դու էլ կիսվելիք քո զգացողություններով ու անձնային հատկանիշներով։

Առաջին հիշողություններս հորս հետ եմ կապում, որը պատմել է, որ անհաշտություններ ենք ունեցել, որ փակ սահմաններ ունենք, ու չենք կարող ազատ շփվել, ելումուտ անել։ Պատմել է Երասխում մասնակցած կռիվների մասին, բայց երբեք ատելություն չի սերմանել կամ վատ տրամադրվածություն չի ունեցել, այլ՝ հակառակը։ Ասում էր, որ ձեզ ատելով չէ, որ գնացել է կռվի՝ դեպի սահման։ Պատերազմ չեն գնում ատելով, այլ պատերազմը ինքնավերկության ձև է, որը հրահրում են իշխանությունները։

Ինչպես ինձ շրջապատող շատ մարդիկ, այնպես էլ ընտանիքիս անդամները պատմում են, որ ապրել են նույն գյուղում՝ կողք-կողքի, նույն դպրոցն են գնացել, ունեցել են լավ ընկերներ, լավ հարաբերություններ:

Երևի ԶԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ է այն երրորդ անձը, որը խանգարում է բացել սահմանն ու երկու երկրների միջև հաշտություն հաստատել:

Ես զգում եմ, որ մենք մեծ առաքելություն ունենք այս կյանքում: Մենք պետք է մի գաղափարի շուրջ միավորվենք ու կազմենք խաղաղության մեր սիմվոլը, աշխարհին ապացուցենք, որ անհնարին ոչինչ չկա: Հարկավոր է միայն ցանկություն, կամք ու միմյանց լսելու ունակություն:

Հուսով եմ, որ դու էլ չես ցանկանա, որ այս իրավիճակը շարունակվի, ու օրինակ՝ մոտ 20 տարի անց հեռուստացույցի առջև նստած՝ լսես սահմանի լարված իրավիճակի մասին: Եվ անընդհատ շարունակվող այս հարցի շուրջ հենց մենք պետք է լինենք նախաձեռնողները որևէ բան փոխելու մեր կյանքում, ազդելու քաղաքական որոշումների կայացման վրա:

Ես հավատում եմ, որ մեր այս փոքր քայլերով՝ նամակներ գրելով, որոշակիորեն հնարավոր է հասնել խաղաղության հաստատմանը:

Երևի թե այսքանը: Ամենայն անկեղծությամբ եմ գրել նամակս, ենթատեքստեր էլ չկան: Միրով և անհամբերությամբ կսպասեմ քո նամակին:

Շնորհակալություն լսելու համար:

Հարգանքներով՝

Սոֆյա

Բարև՝ սիրելի՛ հարևան Սոֆյա,

Նախ շնորհակալություն եմ հայտնում նամակիդ համար: Անունս  
Լաման է: Ձեզ գրում եմ Բաքվից: Ես լրագրություն եմ  
ուսումնասիրում: Ձեզ և ձեզ պես խաղաղության, արդարության  
կողմնակից մյուս երիտասարդների նամակներն ընթերցեցի մեծ  
հաճությամբ: Որոշ առանձնահատկություններ ունես, որոնք գրեթե  
համընկում են, իսկ նամակում նշածդ մտքերի հետ համաձայն եմ:  
Ուրախության և խաղաղության զգացողություններ ունեցա այն  
հանգամանքից, թե ինչպես եք այսպիսի ոգևորությամբ լեցուն նամակ  
գրում անձանոթ մեկին, որին գուցե երբեք չեք էլ հանդիպելու:

Ինչպես դուք եք նշել, այս կյանքում խաղաղության, անդորրի,  
հանգստության, մշակութային բարգավաճման համար մեր առջև կա  
մեկ նպատակ: Պետք է համախմբվել մեկ գաղափարի շուրջ ու հասնել  
խաղաղության: Ցանկացած խաղաղասեր ժողովրդի, բոլոր  
մարդկանց, հատկապես երեխաների իղձն է, որ աշխարհում  
հաստատվի խաղաղություն, անդորր, արդարություն և  
անվտանգություն:

Արդարամիտ հասարակությունը ձգտում է մարդկության համար  
հավիտենական խաղաղության, և այս գաղափարը մարդու միտքն  
անհանգստացնող, նրան միշտ մտահոգող ամենահիմնական  
խնդիրներից է: Խաղաղություն նշանակում է կյանք, առողջ սերունդ:  
Ազատության, հավասարության ու արդարության հետ մեկտեղ  
խաղաղությունն այն գաղափարներից մեկն է, որի մասին ամենաազատ  
է երագում հասարակությունն ու ընդհանրապես մարդկությունը: Այս  
ամենը միասին վերցրած՝ նշանակում է առանձին երկրներում,

աշխարհում շարունակական բարգավաճում ու փոխադարձ  
համագործակցություն:

Ես պատերազմ չեմ ուզում և գիտեմ, թե ինձ պես քանի-քանի  
ադրբեջանցի ու հայ երիտասարդ պատերազմ չեն ոզում. մենք  
ցանկանում ենք գտնել ընդհանուր դիրքորոշում ու կրկին ապրել  
համատեղ: Ես, որպես Ադրբեջանի քաղաքացի, ցանկանում եմ այցելել  
Հայաստան ու զբոսնել այնտեղ, ինչպես դա անում եմ Վրաստանում:  
Ես ցանկանում եմ, որ Կովկասը լինի մի վայր, որտեղ երկու երկրների  
քաղաքացիները կապրեն հավասար միջավայրում:

Անկեղծ սրտով՝

Լաման

## Սուսաննա – Խաղաղության ջատագով

Ողջուն, հարգելի՛ս...

Ես Սուսաննան եմ՝ 16 տարեկան, հարևան Հայաստանից: Նամակս գրելիս մի պահ կարկամեցի, հուզմունքս խեղդում էր կոկորդոս, ցավը՝ սրտիս, վիշտը՝ հոգուս մեջ, բայց գիտակցությունս՝ սթափ:

Գիտեմ, որ դու էլ ինձ պես երիտասարդ ես, ով նպատակներ ունի և չի ցանկանում օգտագործել և լսել «թշնամի» բառը: Տարիներ շարունակ մեր ազգերը ապրել են համերաշխ, որպես հարևաններ: Տատիկս պատմում է, որ Իջևանի շուկայում մեծամասամբ աղբբեջանցիներն էին ապրանք վաճառում, և մենք լավ հարևաններ էինք, ձեր լեզվով ասած՝ յուրաքանչյուր հայ ընտանիք ուներ իր դոստը՝ բարեկամը:

Պատերազմ բառը լսելիս մարմնովս դող է անցնում: Ես չեմ փորձում գտնել մեղավորներ և պարզել, թե մեզնից ով սկսեց այն: Երկու կողմերն էլ ունեցան անդառնալի կորուստներ, չէ՞ որ պատերազմը փշրում է մարդկանց անկատար երազանքները, ամայացնում է երկրներ, որբացնում երեխաների, որդուն խլում է մորից, սիրող մարդկանց բաժանում է իրարից, և որ ամենավատն է՝ թշնամություն ու ատելություն սերմանում անմեղ մարդկանց հոգում: Պատերազմը խլում է մեզնից ամեն ինչ:

Պետությունը պետք է խուսափի պատերազմից այնպես, ինչպես նավավարը խուսափում է նավաբեկությունից: Բայց երկուսիս դեպքում էլ պետությունները խթանում են թշնամությունն ու պատերազմը: Մորը, որը թաղում է իր որդուն, ում սիրտը կտոր–կտոր

է լինում ցավից, տառապանքից, ում հոգեկան աշխարհում փոթորիկ է, պետք չեն պատվոգրեր կամ հերոսի կոչում, նրան միայն պետք է վերստին տեսնել, գրկել որդուն, ապրել ու շնչել նրանով:

Ես և դու մեր ազգերի ապագան ենք, մենք մեր սերունդներին պետք է հավաստիացնենք, որ պատերազմը մեզ ոչինչ չի տա: Պետք է թույլ չտալ, որ մեր ժողովուրդները նորից ունենան զոհեր: Մեր երեխաները պետք է ապրեն խաղաղ ու ապահով երկրում, որտեղ տիրում է սեր, համերաշխություն և պայծառ ապագա: Զսանմեկերորդ դարը պետք է լինի խաղաղության և համերաշխության դար:

Ես ցանկանում եմ, որ մեր երկրներն ապրեն բաց սահմաններով, որ մեզնից յուրաքանչյուրը կարողանա այցելել իր բարեկամի գերեզմանը, չէ՞ որ երկու կողմն էլ տարբեր տարածքներում թողել են իրենց հարազատների գերեզմանները:

Ապրիլյան պատերազմը մեզնից խլեց բազմաթիվ երիտասարդներ, անկատար մնացին բազմաթիվ երագանքներ, նպատակներ. դրանք հոդս ցնդեցին: Ես ուզում եմ հանգիստ խղճով գլուխս դնել բարձին, ես ուզում եմ, որ մեր ազգերը ապրեն առանց ատելության: Ե՛կ միասին հենց այսօրվանից մեր ուժերի ամբողջ լարումով մեր շրջապատում, ընկերական միջավայրում աշխատենք տարածել այն գաղափարը, որ պետք չէ պատերազմել, որ քսանմեկերորդ դարը քաղաքակրթության դարաշրջան է, որ մենք այլևս չենք կարող տառապել, սգալ, արտասվել:

Թող Աստված մեզ և ձեզ սթափ դատելու միտք, խաղաղություն և սեր, համերաշխություն և հարգանք տա:

Երիտասարդությունը հզոր ուժ է, և ես համոզված եմ, որ հենց մենք՝ երիտասարդներս, կարող ենք թերթել «Պատերազմ» կոչվող գրքի վերջին էջը և գրել մի նոր գիրք՝ «Խաղաղություն» վերնագրով:

## Հարգանքներով՝

Խաղաղության կողմնակից Սուսաննա

\* \* \*

Բարև՝,

Ես 20 տարեկան եմ: Շնորհակալ եմ քեզ՝ զգացմունքներդ այդքան գեղեցիկ ներկայացնելու, ինչպես նաև հարցի խաղաղ կարգավորման կողմնակից լինելու համար: Ասածդ մտքերի հետ համաձայն եմ:

Քո ծնողների պես իմ ծնողներն էլ են ինձ բացատրել այն ժամանակվա իրավիճակը, պատմել՝ երկու ժողովրդի բարեկամական հարաբերությունների մասին: Մայրիկս մանկության տարիներին հայ ընկերներ է ունեցել, տատիկս ու պապիկս հայ ընկերներ, ծանոթներ են ունեցել, և սա ցույց է տալիս, որ երկու ժողովուրդը լավ հարաբերություններ են ունեցել և չեն ցանկացել, որ պատերազմ լինի:

Սակայն իրավիճակի թելադրանքով նման ողբերգական դեպքեր են տեղի ունեցել, որն էլ շատ լուրջ ազդեցություն է ունեցել ժողովուրդների հարաբերությունների վրա: Մի ժամանակ լավ հարաբերություններ ունեցող ժողովուրդներն այժմ թշնամական հարաբերություններ ունեն:

Ոչ մի մարդ չի ցանկանա, որ պատերազմ լինի. ես նույնպես չեմ ցանկանում: Իմ հարազատները, նույնպես, պատերազմի ժամանակ գոհվել են, վիրավորվել, և դա ինձ վրա շատ ծանր ազդեցություն է գործել: Ապրիլյան կռիվները ցույց տվեցին, որ պատերազմն ընդհանրապես լավ ելք չէ: Մեծ թվով մարդիկ են գոհվել և այդ մարդկանց ընտանիքները վատ իրավիճակում են հայտնվել:

Շատ կուզեի, որ տեղական հայկական ուժերի կողմից օկուպացված տարածքներում վերջ դրվի օկուպացիոն ռեժիմին, մարդիկ կրկին հավասար պայմաններում ապրեն, ես էլ գնամ այդ տարածքները տեսնելու:

Պապիկս ծնվել է Լաչինի շրջանում և հաճախ է այնտեղի գեղեցկության մասին պատմում ինձ: Դա ավելի է ինձ ոգևորում, որպեսզի գնամ ու տեսնեմ այդ տարածքները: Շատ կուզեի, որ ծնողներս այցելեն իրենց հարազատների գերեզմանները, տեսնեն իրենց հայրենիքը: Սա ինձ նման յուրաքանչյուր ադրբեջանցու իղձն է:

Անկախ նրանից, թե ինչպիսին է մեր այսօրը, մեր վաղվա օրը պետք է խաղաղ լինի: Անցյալի եղելությունների համար մենք՝ երիտասարդ սերունդս, չպետք է զոհ դառնանք: Ես շատ կցանկանայի օգնել իմ ժողովրդին, պետությանը, սակայն ժողովրդի հանդեպ ունեցած պարտքը չպետք է վճարել պատերազմով: Մեզնից՝ երիտասարդներիցս է կախված ապագան: Եթե մենք մեր ուժերը կենտրոնացնենք ոչ թե պատերազմելու, այլ խաղաղության, կրթության, բարգավաճման վրա, ապա ավելի օգտակար քաղաքացիներ կլինենք: Մենք պետք է անենք ամեն բան, որպեսզի այս հարցը կարգավորվի խաղաղ ճանապարհով:

Հարգանքով՝

Խաղաղության ջատագով

## Մեզի – Անանուն

Բարև,

Ես՝ Մեզին եմ՝ Հայաստանի քո ընկերը: Գիտե՛ս՝ ինչու եմ քեզ համարում ընկեր, քանի որ գիտակցում եմ, որ ո՛չ դու, ո՛չ էլ ես մեղավոր չենք, որ հիմա մեր պետությունները թշնամացած են միմյանց դեմ: Նախ քեզ ուզում եմ պատմել իմ մասին: Ես ապրում եմ Հայաստանում, Արմավիրի մարզի Սարդարապատ գյուղում: Ուսանող եմ, սովորում եմ Երևանի Կոմիտասի անվան Պետ. Կոնսերվատորիայում, մասնագիտությամբ դասական երգչուհի եմ, այս տարի որակավորում ստացա որպես օպերային երգչուհի: Շատ–շատ եմ սիրում երգել, ու երազանքներիցս մեկն աշխարհահռչակ օպերային երգչուհի դառնալն է: Ի դեպ, ճանաչում եմ աղբյուրների մի տեղորի, շատ հայտնի է, անունը՝ Յուսիֆ Էյվազով, շատ լավ է երգում, ամուսնացած է աշխարհահռչակ օպերային երգչուհի Աննա Նետրեկոյի հետ, ինստագրամով հետևում եմ նրանց, ու իմ ընկերները շատ հանգիստ են վերաբերվում այդ փաստին: Գիտե՛ս, շատ եմ ուզում նաև լինել ձեր՝ Բաքվի օպերային թատրոնում. նկարներով տեսել եմ, շատ գեղեցիկ թատրոն ունեք: Կուգեմ իմանալ՝ դու ինչ նախասիրություններ ունես, որտեղ ես սովորում, ինչ մասնագիտություն ունես:

Եվ այսպես, անցնեմ բուն թեմային. ես շատ եմ եղել Հայաստանի և Ղարաբաղի սահմանամերձ գյուղերում, խոսել եմ տեղի բնակիչների հետ ու նրանց հարց եմ ուղղել. ի՞նչ կուզեիք, պատասխանը հետևյալն էր՝ խաղաղություն, որ երբեք չլսեն կրակոցներ, հանգիստ իրենց տներից դուրս գան ու բակում շրջեն՝ չվախենալով, որ մի գեղեցիկ օր աղբյուրների ինչ–որ զինվորի մեկ փամփուշտով կարող է ընդհատվել

իրենց կյանքը, որ իրենց որդուն բանակ ճանապարհելիս արցունքներով չճանապարհեն, այլ՝ ուրախությամբ, որ գիշերները խաղաղ քնեն, որ իրենց հոգում և մտքում բույն չղնի սարսափը:

Ձեր և մեր մայրերը ուզում են, որ իրենց զավակները, մեկնելով բանակ, անվնաս վերադառնան հայրենի տուն: Ես վստահ եմ, որ քո հայրենակիցները, որոնք ապրում են սահմանամերձ գյուղերում, նույնն են ուզում՝ խաղաղություն: Մենք պատերազմ չենք ուզում, մենք խաղաղ ժողովուրդ ենք: Գիտեմ՝ կորուստները մեծ են. և՛ ես, և՛ դու ունենք սահմանում զոհված ընկերներ, եղբայրներ, և հենց կորստի ցավից չենք կարողանում իրար ներել: Եթե շարունակենք այսպես, հնարավոր է վերսկսվի նոր պատերազմ, ու կունենանք հազարավոր զոհեր, և կորուստն ավելի մեծ կլինի:

Ես հասկանում եմ, որ անհնար է ուժով խաղաղություն պահպանել: Խաղաղությունը հաստատվում է փոխըմբռնման շնորհիվ, ու քանի դեռ խաղաղություն չենք հաստատել մեր իսկ ներսում, ապա չենք կարող խաղաղություն գտնել արտաքին աշխարհում: Եթե դու իմ նամակը կարդում ես, ուրեմն՝ մեկ քայլ առաջ ես գնացել ու ուզում ես նույնը, ինչ՝ ես:

Ծնողներս միշտ պատմում են, թե ինչպես ենք ժամանակին եղել բարեկամներ, իրար տուն հյուր ենք գնացել, հաց կիսել, մեր և ձեր երեխաները՝ իրար հետ խաղացել: Եթե ժամանակին լավ բարեկամներ ենք եղել, ուրեմն՝ հիմա էլ կարող ենք լինել: Ես հրաժարվում եմ ընդունել այն տեսակետը, որ մարդկությունը այնքան սերտորեն է կապված պատերազմի անաստղ կեսգիշերին, որ խաղաղության պայծառ արշալույսը երբեք չի կարող իրականություն դառնալ: Ես հավատում եմ, որ անգլեն ճշմարտությունն ու սերն են որոշիչ դեր խաղալու:

Խաղաղությունը ժպիտից է սկսվում. արի՛ ժպտանք ու ասենք՝ ներել ենք:

Անհամբերությամբ սպասում եմ նամակիդ:

Սիրով՝

Քո ընկեր

\* \* \*

Ողջուն,

Համալսարանն ավարտել եմ անցյալ տարի: Մասնագիտությամբ սոցիալ–հոգեբան եմ: Ինձ հարցրել էիր հետաքրքրություններիս մասին. սիրում եմ գրքեր կարդալ, ֆիլմեր դիտել ու մասնագիտությանս առնչվող ուսումնասիրություններ կատարել:

Կարդացի նամակդ: Քո նախադասություններից մեկում ընդգծել էիր, որ եթե կարդում ես նամակս, ուրեմն դու էլ ես մեկ քայլ դեպի առաջ արել և ուզում ես այն, ինչ ես եմ ուզում: Իրականում, այս նախագծին միանալն արդեն նշանակում է, որ այդ քայլերից մեկը կատարել եմ:

Ելնելով իմ մասնագիտությունից՝ ես ամբողջ մանրամասնությամբ հասկանում եմ պատերազմի հոգեբանական ազդեցությունը, դրանից առաջ եկած բարդությունները: Ցավ, արցունքներ, դառնություն, մահ, բաժանում, վախ. ահա սա է Պատերազմը:

Գիտեմ՝ ո՛չ դու, ո՛չ էլ ես մեղավոր չենք, որ մեր երկրները թշնամիներ են: Որպես երկու երկիր՝ շատ կորուստներ ու զոհեր ենք տվել: Ինչպես դուք չեք ուզում, որ մի գեղեցիկ օր ադրբեջանցի զինվորը կրակի հայ զինվորին, նույն կերպ մենք չեք ուզում, որ հայ զինվորը սպանի

երիտասարդ աղբրեջանցի զինվորին: Որքան հարազատներ, ընկերներ ունենք, որոնք ծառայում են առաջնագծում և ամեն օր նրանց ընտանիքները անհանգստանում ու վախենում են նրանց համար: Մեզ խաղաղությունն է միավորում: Մենք պետք է միավորվենք այս կարգախոսի ներքո: Որովհետև և՛ ձեր, և՛ մեր ուզածն էլ այն է, որ մարդիկ ապրեն առանց վախի ու հանգիստ՝ հանուն առողջ երեխաների, երջանիկ ընտանիքների ու հանգիստ կյանքի: Այդ հարցում քեզ հասկանում եմ:

Պատերազմական շրջանում չեմ ծնվել, սակայն կարդածաց գրքերից, դիտածս ֆիլմերից, ուսումնասիրություններիցս ու լսածներիցս ելնելով՝ պատկերացնում եմ պատերազմն իր մանրուքներով:

Պապիկս իր ընտանիքը կորցրել է պատերազմում, որը նրա հոգեբանության վրա բացասական հետքեր է թողել: Պատերազմի ժամանակ տեղի ունեցած սարսափելի մի դեպքի պատճառով պապիկս դաժան մարդ է դարձել: Նրա մեջ առաջ են եկել ատելությունն ու վախը: Պատմում էր, որ որբ է եղել և ցամաք հաց ուտելով է մեծացել, սակայն, այնուամենայնիվ, ապրել է: Մի ժամանակ գավակներին, թոռներին պատկերավոր պատմում էր պատերազմի սարսափների ու իր վերապրածների մասին, այնպես էր պատմում, որ ինքդ քեզ վրա զգում էիր այդ ամենը: Մարդկանց հոգին վիրավորողի, հարազատներից զրկողի անունը պատերազմն է:

Ես էլ գիտեմ, որ մենք բարեկամներ ենք եղել: Միասին հաց ենք կիսել: Նշանակում է, որ հիմա էլ կարող ենք լինել: Պատմության ընթացքում շատ բաներ ենք վերապրել: Թե՛ տարածքային, թե՛ մարդկային կորուստներ ենք տվել: Գիտեմ, գուցե դժվար է, սակայն չի կարելի կենտրոնանալ միայն թշնամանքի, պատերազմի վրա ու մոռանալ, որ մարդիկ խաղաղություն են ուզում: Մի ծրագրով այցելել էի առաջնագծին մոտ շրջաններից մեկը ու հանդիպել այնտեղի երեխաների հետ: Լսել եմ պատերազմի, պատերազմի հետևանքների

ու դառնությունների մասին նրանց մտքերը: Նրանք հուզված էին և չէին կարողանում հարցերին ամբողջությամբ պատասխանել, նրանց վրա նաև իր ազդեցությունն էր գործել այն, որ քաջատեղյակ էին իրենց հարազատների վերապրածներին:

Եթե պատերազմի մասին միայն լսել ես կամ կարդացել, ու քեզ համար դժվար է խոսել այդ մասին, ապա այն վերապրած, տազնապի ու վախի մեջ, հարազատներին կորցրած մարդկանց համար ավելի բարդ է գրել այդ ամենի մասին: Գիտեմ, որ առանց մեր մեջ խաղաղություն ստեղծելու, առանց այդ կարգախոսը մեր շրջապատում տարածելու ոչինչի չի ստացվի: Վտանգավոր գոտիներում ապրողներն ամեն օր վախի մեջ են ապրում: Որքա՛ն մայրեր կան, որոնք ապրում են պատերազմի սարսափները, տազնապը ու անհանգստանում են իրենց զավակների համար: Այսուհետ նրանց չենք կարող փոխել, սակայն կարող ենք քայլեր կատարել, որպեսզի չլինեն այդ սարսափները:

Մենք ուժեղ ենք միասին...

Միրով

### 3-ՐԴ ԵՎ 4-ՐԴ ԽՄԲԵՐ

#### Սադեթ – Ալեքս

Ողջուն՛ն,

Քեզ այս նամակը գրում եմ կրակի հայրենիք, նավթային երկրից՝ գեղեցիկ Ադրբեջանից: Ճիշտն ասած՝ այս նամակը գրելն ինձ համար և՛ դժվար է, և՛ խորհելու տեղիք է տալիս: Առաջին անգամ է, որ խաղաղության (շարժառիթ) մասին նամակ եմ գրում:

Յուրաքանչյուրի համար խաղաղությունը տարբեր նշանակություն ունի: Իմ կարծիքով՝ խաղաղությունը մարդկանց միջև համերաշխության հաստատումն է, անվտանգությունը, զարգացումը, բարգավաճումն ու ազատությունը: Այնտեղ, որտեղ կա նավթ, որտեղ առկա են հակամարտություններ և մարդիկ ապրում են պատերազմական իրավիճակում, այդտեղ կա՛մ նման հասկացություններ չկան կա՛մ էլ կիսատ են արտացոլված: Բոլորին հայտնի է մեր երկրների միջև առկա հակամարտությունը, պատմության ընթացքը և այսօրվա իրականությունը: Անմեղ կոտորածներ, սպանդ, անթիվ–անհամար կորուստներ ու ավերումներ, իրենց բնօրրանից արտաքսված քաղաքացիներ, արցունքներ, թախիծ ու ցավ:

Այս ամենը սարսափելի է, այնպես չէ՞: Գուցե սարսափը տեսածների տեսանկյունից անընդունելի է, որ այդ ողբերգությունն ապրած Ադրբեջանն այսօր բանակցում է խաղաղության շուրջ: Սակայն ես ցանկանում եմ, որ առանց պատմության կրկնության, առանց նույն ողբերգությունը ապրելու ավարտվի Լեռնային Ղարաբաղի խնդիրն ու

Ժողովուրդների միջև թշնամանքը: Ուզում եմ, որ սոցիալական ցանցերում այլևս չլինի ատելության խոսք ու անտեղի մեղադրանքներ: Ուզում եմ, որ այսօր մեր երկրներում պատերազմին, բանակին հատկացվող միջոցները հատկացվեն կրթությանը, առողջապահությանն ու մնացած այն ոլորտներին, որոնք սպասում են իրենց զարգացմանը: Բարձրացնենք համերաշխության ու հանդուրժողականության մակարդակը: Ես ուզում եմ, որ Ադրբեյջանի քաղաքացին փոխադարձաբար Հայաստանի քաղաքացու կողքին զգա իրեն անվտանգ ու հանգիստ, ինչպես մյուս երկրների քաղաքացիների դեպքում է: Ուզում եմ, որ շատերի կողմից ուստպիստական վերաբերմունքի արժանացած խաղաղություն հասկացությունն ու արդարությունը իրականություն դառնան: Որպես սոցիալական աշխատանք կատարող ուսանող՝ բարձր եմ գնահատում մարդասիրության ու խաղաղության գաղափարախոսությունը և ձեզ խաղաղության կոչ եմ անում, այլ ոչ թե ատելության:

Սադեթ

\* \* \*

Ռոջու՛յն, Սադե՛թ,

Դու շատ գեղեցիկ անուն ունես: Ես որոնեցի այն համացանցում, և պարզեցի, որ այն նշանակում է «ուրախություն»: Այստեղ շատ շոգ է: Կարելի է ձու տապակել ասֆալտին: Վստահ եմ՝ այդտեղ նույնպես շատ շոգ է: Ահա թե ինչու եմ ցուրտ եղանակն ավելի շատ սիրում. հայրս միշտ ասում է, որ ցուրտ եղանակից միշտ էլ կարելի է խուսափել՝ տանը մնալով կամ ավելի տաք հագնվելով: Իսկ ի՞նչ կարող ես անել շոգի դեմ. մե՛րկ ման գալ, թե՞ օդորակիչ կապել մեջքիդ:

Ինչևէ, ես Ալեքսն եմ քո հարևան երկրից՝ Ճափ կողմից: Նախ, շնորհակալություն նամակիդ համար: Հրաշալի է լսել մեկին, ով

ապրում է սահմանից այն կողմ, և հասկանալ քո տեսակետը կոնֆլիկտի վերաբերյալ: Ես կարդացել եմ նամակդ և համաձայն եմ բոլոր գրածներիդ հետ խաղաղության և մարդկային կյանքի արժեքի վերաբերյալ:

Ես շատ ուրախ եմ, որ դու կիսում ես երկու երկրների միջև խաղաղության և ներդաշնակության վերաբերյալ իմ ցանկությունը, ինչպես նաև ցանկանում ես դադարեցնել արյունահեղությունն ու արցունքները: Եվ մինչ պատմությունը երբեք չի կարելի մոռանալ, մենք չպետք է կառչենք դրանից, այլ՝ դասեր քաղենք՝ ավելի լավ ապագա կառուցելու համար: Հայերը, նույնպես, սա լավ գիտեն: Ուրեմն, արի՛ մի կողմ թողնենք այն պատմությունը, որի մեջ իմ և քո մատը խառը չէ, և կենտրոնանանք այն պատմության վրա, որը մենք կարող ենք կերտել:

Ի միջի այլոց, ես 23 տարեկան եմ, սովորում եմ համալսարանում: Սիրում եմ խմել և զվարճանալ ընկերներիս հետ: Իմ ամենասիրելի ուտեստը խինկալին է, և ես շատ ուրախ եմ, որ մենք հարևաններ ենք այն երկրի հետ, որը պատրաստում է դրանք: Դու սիրո՞ւմ ես վրացական խոհանոցը: Իսկ դուք վրացական ռեստորաններ ունե՞ք այդտեղ: Խնդրում եմ, համաձայնի՛ր ինձ հետ, որ խինկալին աշխարհի ամենալավ բանն է: Հետաքրքիր է, որ մենք ավելի շատ ավանդական վրացական ռեստորաններ ունենք այստեղ, քան հայկական: Իսկ այդտե՞ղ: Գիտե՞ս, մենք սիրում ենք բամբասել իրարից, այդ թվում նաև՝ վրացիներից, սակայն դա չի խանգարում մեզ վայելել նրանց ուտելիքը, այնպես չէ՞:

Ողջ մանկությունս արտասահմանում եմ ապրել: Ես շատ ընկերներ ունեի՝ տարբեր տարիքի, «ձևերի և չափերի» և, իհարկե, ծագման: Իմ լավագույն ընկերն աղբբեջանցի էր: Ես նրան հանդիպեցի, երբ 11 տարեկան էի, և մենք լավ ընկերներ դարձանք: Մենք շատ ժամանակ էինք անցկացնում միմյանց հետ՝ անելով ամենահիմար բաները, որ

կարելի էր երևակայել, և շատ խնդիրներ էինք ունենում այդ ամենի պատճառով: Բայց մենք շատ ժամանակ էինք անցկացնում միասին և երբեք չէինք թողնում, որ կոնֆլիկտը հայտնվի մեր ընկերության միջև: Երբեմն վիճում էինք, բայց ոչ Լեոնային Ղարաբաղի կոնֆլիկտի վերաբերյալ, այլ օրինակ՝ թե ինչ ֆիլմ դիտել կամ ինչ խաղ գնել կամ թե ումն էր հավի վերջին թևիկը (նա ինձանից մի փոքր ավելի խոշոր էր և այն միշտ նրան էր բաժին հասնում): Այնպիսի բաներ, որոնց շուրջ միայն հիմար պատանիները կվիճեն: Այնպիսի բաներ, որոնց շուրջ, հավանաբար, դու, նույնպես, վիճել ես այդ տարիքում:

Վերջիվերջո, անկախ մեր ազգությունից, մաշկի գույնից, մայրենի լեզվից, նախընտրած երաժշտությունից և անկախ մեր ուղեղները սնուցած քարոզչությունից, մենք ընդամենը երեխաներ էինք, որոնք պարզապես ուզում էին ընկերներ լինել:

Սակայն արդեն 7 տարի է, ինչ նրան չեմ տեսել: Մենք դեռ կապի մեջ ենք, բայց դա նույնը չէ: Ընկերոջս հետ վերջին անգամ տեսնվելուց և Հայաստան գալուց ընդամենը 3 տարի անց գորակոչվեցի ծառայելու բանակում: Ես երկու տարի անցկացրի՝ վերապրելով միևնույն օրը և հետհաշվարկ անելով 730 օրը, 104 շաբաթը կամ 24 ամիսը: Եթե բարեկամ կամ ընկեր ունես, որը ծառայում է բանակում, կարո՞ղ ես հարցնել նրան, թե ինչպես են հաշվում օրերն այդտեղ: Մեր տղաները, սովորաբար, հեռախոսի մարտկոց էին նկարում իրենց գոտիների վրա և ժամանակի հետ աստիճանաբար լցնում այն: Իսկ երբ մարտկոցը լցվում էր, գորացրվելու ժամանակն էր:

Բանակն ինձ վրա մեծ տպավորություն է գործել, և ես մինչ օրս վառ հիշողություններ ունեմ այնտեղից: Ես դեռ հիշում եմ բոլոր լավ օրերը, սակայն, դժբախտաբար, վատ օրերը միշտ ավելի առատ են: Իրականում, քանի որ ես կլառնետ եմ նվագում, ինձ տարբեր իրադարձությունների էին տանում որպես երաժիշտ, որոնցից 7–ը զինվորական թաղումներ էին, որտեղ նվագում էի զինվորական

նվազախմբի հետ: Ձայներից մեկը, որ դեռ հնչում է ականջներումս, լացի ձայնն է: Հատկապես ծնողների լացի ձայնը: Մինչ ես կասկածամիտ վերաբերմունք ունեմ լացի հանդեպ՝ այն համարելով շոու, չկա ավելի սրտակեղեք ձայն, քան ծնողների լացն իրենց մահացած երեխայի համար:

Նրանք լացում էին՝ աղաչելով դեղնած դիակին կյանք վերադառնալ, հրաժարվելով գերեզման իջեցնել նրան: Հիշում եմ նաև այն սարսափազդու հայացքը, որով նայում էին մյուս զինվորներին: Ես միշտ կարծել եմ, որ անարդար է կորցնել երեխային մի կոնֆլիկտում, որը նրանք չէին սկսել: Պատկերացնում եմ, որ նույնը տեղի է ունենում քո երկրում: Իսկապես, անարդար է խլել կյանքը նրանց, ովքեր անգամ երկու տասնամյակ անգամ չեն անցկացրել այս աշխարհում: Եվ եթե կա պատճառ կոնֆլիկտի խաղաղ կարգավորման, ապա դա բոլոր թաղումներին և լացին վերջ տալն է:

Ես երբեք չեմ սիրել թաղումներն ու լացը: Լացի ձայնն ազդում է նյարդերիս վրա: Փոխարենը, սիրում եմ ծիծաղի ձայնը: Իրականում, ես կարծում եմ, որ ծիծաղելն ամենամարդկային բանն է, որ կարելի է անել:

Լավ, վե՛րջ տանք զգացմունքայնությանը: Ահա մի կատակ, որը ես ու աղբրեջանցի ընկերս պատմում էինք իրար. մի հայ, վրացի և աղբրեջանցի մտնում են բար: Բարմենն ասում է. «Կորե՛ք էստեղից»:

Ալեքս,

Հ.Գ.

Եթե կցանկանաս կապի մեջ մնալ և էլի ծիծաղելի կատակներ լսել, ահա իմ էլ. փոստի հասցեն՝

## Զավիղան – Աննա

Ողջու՛յն, հարգելի՛ հարևան,

Անունս Զավիղան է: Ես ապրում եմ Կովկասի ամենամեծ քաղաքում՝ Բաքվում: Շատ զարմանալի է՝ ես նախկինում ևս հայեր տեսել եմ, որքան գիտեմ, այսօր անգամ Ադրբեջանում ավելի քան 20 հազար հայ է ապրում մեծամասամբ՝ Բաքվում և Սումգայիթում: Նախկինում Թուրքիայում և արաբական երկրներում էլ եմ հայերի հանդիպել: Սակայն այսօր առաջին անգամ Հայաստանում ապրող մեկին, այսինքն՝ քեզ, նամակ եմ գրում:

Ինչպես գիտես, արդեն ավելի քան 30 տարի մեր միջև հակամարտությունը շարունակվում է: Պատերազմ սկսելը շատ հեշտ է, ավարտելը՝ շատ դժվար: Կցանկանայի մի հարց տալ քեզ. աշխարհում կա՞ ավելի սարսափելի բան, քան (զավակի կողմից) ծնողների կորուստն է: Կամ ի՞նչը կարող է լինել ավելի սարսափելի, քան բնակավայրի կարոտը, որտեղ ծնվել ես ու մեծացել: Հայտնի արաբ փիլիսոփա Իբն Հալունդինը մի հայտնի խոսք ունի. «Աշխարհագրությունը ազգերի ճակատագիրն է»: Մեր ժողովուրդները դարեր ի վեր ապրել են կողք կողքի: Հայտնի հայ բանաստեղծ Սայաթ-Նովան գրել է և՛ հայերեն, և՛ թուրքերեն:

Հարգելի՛ հարևան, կցանկանայի քեզ մի քանի հարց տալ: Ժամանակը չէ՞ արդյոք վերջ տալ այս հակամարտությանը, որը ծագել է մեր նախնիների միջև ու փոխանցվել մեզ: Արի՞ մի վայրկյան կողքից դիտենք, թե այս հակամարտությունից ով է շահում և ով՝ կորցնում: Վստահ եմ՝ դու էլ ինձ պես կտեսնես, որ այս հակամարտությունը

երկու կողմերին էլ վնասում է: Ուրեմն, եթե այդպես է, ինչո՞ւ վերջ  
չտանք դրան ու չհաշտվենք: Իհարկե, մեր ազգերին հաշտեցնելը հեշտ  
չի լինելու, սակայն պետք է ինչ–որ տեղից սկսել, որպեսզի մեր  
երեխաներն անհայր ու անմայր չնեծանան, որպեսզի մեր երկրները  
չկողոպտվեն, որպեսզի խաղաղություն լինի:

Միթե՞ չպետք է փորձենք նախ սկսել միմյանց բարեւել, ապա միմյանց  
տեսնելիս ժպտալ ու իրար տուն հաճախել և նախկինի պես կրկին  
ապրել համերաշխ:

Օրինակ՝ իմ տատիկը Հայաստանի Սյունիքի մարզի Սիսիան քաղաքից  
է, տատիկս Ադրբեջան է եկել 60 տարեկանում: Ընկերներիցս շատերի  
նախնիները Ղափանից, Սիսիանից, Մասիսից են եկել: Նրանք ամեն  
անգամ ինձ պատմում են Սևանի և թվարկածս մյուս բնակավայրերի  
գեղեցկության մասին: Ես, իհարկե, շատ եմ ուզում տեսնել իմ  
ընկերների պատմած վայրերը: Արտասահմանում գտնվելիս բազմիցս  
հանդիպել եմ Ադրբեջանում ապրած հայերի, ամեն անգամ նրանք  
հարցնում են Բաքվից կամ Գանձակից և հայտնում են, որ ուզում են  
վերադառնալ:

Նամակիս վերջում մաղթում եմ առանց պատերազմների, խաղաղ ու  
առաջադեմ աշխարհ:

Ջավիդան

\* \* \*

Բարև՛, սիրելի՛ Ջավիդան,

Ես Աննան եմ՝ հարևան Հայաստանից: 20 տարեկան եմ: Սովորում եմ  
լեզվաբանական համալսարանում: Երրորդ կուրս եմ փոխվել: Շատ  
ուրախացա՝ ստանալով նամակդ և էլ ավելի ոգևորվեցի ու նաև

գարմացա՝ կարդալով քո մտքերը հայ-ադրբեջանական  
հակամարտության առնչությամբ: Ինձ համար էլ է սա առաջին  
անգամը, որ նամակ եմ գրում ադրբեջանցի երիտասարդի:  
Արմատներով Հայաստանի հյուսիսից եմ Լոռու մարզի Վանաձոր  
քաղաքից:

Գիշերվա ժամը երեքն է հիմա: Մայրս ու եղբայրս երկուսն էլ խորը  
քնած են: Արթուն եմ միայն ես: Նստած եմ համակարգչի առաջ՝  
ձեռքերս ստեղնաշարին ու պատրաստ եմ սկսել նամակս:  
Սովորությանս համաձայն՝ ականջակալով եմ ու հենց այս պահին  
ականջներումս «Սարի աղջիկ»-ն է հնչում կամ ինչպես դուք եք ասում  
«Sari Gelin»-ը: Լինի այն հայկական, թե ադրբեջանական, մեկ է՝ շատ  
եմ սիրում: Իսկ իրականում ի՞նչ կապ ունի, թե ով է ստեղծողը: Մի բան  
հաստատ է. տաղանդավոր է ու հրաշք երգ է ստեղծել: Վերջին  
տարիներին շատ եմ հետաքրքրվում Հարավային Կովկասի երկրների  
մշակույթով, մասնավորապես՝ երաժշտությամբ: Այնքան  
նմանություններ ունենք, որ չենք էլ պատկերացնում: Իհարկե, ամեն մի  
ժողովուրդ իրենն ավելացնում է, հարստացնում զանազան  
գործիքներով ու մելիզմներով: Ասեմ, որ մեր բակի կիսատ-պռատ  
երաժիշտ, բայց համով-հոտով պապիկները մինչև հիմա ամբողջ  
սրտով ձեր Չեյնեփին են երկրպագում՝ Չեյնեփ Խանյարովային:  
Կոշկակար Համլետ պապի կրպակում՝ հենց իր աշխատասեղանի  
դիմացի պատին, 1980 թ.-ից մինչև հիմա դեռ փակցված է  
կախարդական հայացքի տեր և ադրբեջանական ժողովրդական  
երաժշտության վարպետ այդ կնոջ սև ու սպիտակ լուսանկարը: Ու  
մինչև հիմա շաբաթ օրվա վերջին կրպակի ներսից կարող ես լսել  
ակորդեոնի մինորներն ու մաժորները, օդու բաժակների վրա գդալով  
ու պատառաքաղով չխկչխկացնող Միհրան պապի ռիթմերն ու  
Ռազմիկ պապի խոպոտ ձայնը՝ ծիծաղը հագիվ զսպելով՝ Չեյնեփի  
նուրբ ձայնին նմանակելիս:

Ինչևէ, անցնենք բուն նյութին: Նախևառաջ ցանկանում եմ պատասխանել քո հարցերին, որոնք իրականում ինձ մի փոքր հռետորական թվացին: Այո, ես անկեղծորեն կիսում եմ կարծիքդ, որ ոչինչ աշխարհում ավելի ցավոտ չէ, քան զավակի կողմից ծնողների կորուստը և ոչինչ ավելի սարսափելի չէ, քան բնակավայրի կարոտը, որտեղ ծնվել ես ու մեծացել: Մեր երկուսի ազգից էլ բազում մարդիկ կգտնվեն, որ նմանատիպ պատմություններ ու ծանր հիշողություններ կունենան իրենց անցյալից: Երկու կողմն էլ տուժած է: Պատերազմից ոչ ոք չի շահում: Եվ յուրաքանչյուր ազգի մեջ էլ կան սրիկաներ, որոնց համար փողն արյունից թանկ է:

Շատ կուզեի, որ մեր երկուսի ձեռքում լինեիր ամեն ինչ: Հաստատ կկարողանայիր կրկին բարեկամություն ու վստահություն հաստատել մեր ժողովուրդների միջև: Բայց եթե ռոմանտիկ սրտաբացությունն ու ներողամտությունը մի կողմ թողնենք, ապա իրականում դա շատ դժվար է իրականացնել: Համոզված եմ՝ դու էլ ես դա շատ լավ հասկանում: Փոխադարձ թշնամանքն ու իրական կամ խեղաթյուրված պատմությունը, որ մեր մեջ տարիներ շարունակ սերմանել են մեր պետությունները, մեծ վերք է առաջացրել երկու ազգերի սրտում: Ներողություն խնդրելը, քո ինքնության մի մասը դարձած գիտելիքը ժխտելն ու սահմանից քեզ վրա կրակողին ընդունելը, առհասարակ, հեշտ բան չէ, հատկապես, երբ ներողություն են խնդրելու երկու բազմամարդ, հպարտ ու տաքարյուն ազգ:

Համալսարանում մեր լրագրության դասախոսները միշտ ասում են, «Եթե դու ինքդ չես տեսել կամ չես լսել որևէ բան, ուրեմն երբեք չես կարող համոզված լինել դրա ճշմարտացիության մեջ: Ուստի, պետք է ստացածդ տեղեկությունը ստուգես առնվազն երեք հավաստի աղբյուրից»: Հիմա ի՞նչ ունենք մենք: Ունենք հսկայածավալ մեկ իրական պատմություն՝ սև ու սպիտակ էջերով և երկու ազգերի՝ իրարից խիստ տարբեր վերապատումներ, որոնցից յուրաքանչյուրը իր նախընտրած երանգի սևով է ամեն ինչ ներկայացնում: Ես էլ, ու

վատահ եմ, դու էլ ծնված օրվանից լսում ենք իրար հակասող շատ պատմություններ. մի կողմից իրար հետ հարևանություն ու բարեկամություն անող ժողովուրդներ, մյուս կողմից՝ իրար ոչնչացնող բանակներ, և որ գլխավորն է՝ պետություններ, կառավարություններ, որոնք հոգ են տանում կողպված ու անհաշտ հարաբերությունների մասին: Ամեն ինչ հենց վերևից է գալիս: Բայց կարծում եմ՝ կարելի է հարաբերությունների ու իրականության ձևավորման անիվի ընթացքը փոփոխել այնպես, որ ժողովուրդները տնօրինեն դրա ճակատագիրը: Մենք երկուսով հատորներով էլ սիրառատ ու բարեկամական նամակներ գրենք իրար, մեր երկրների միջև բան չի փոխվի: Բայց մեր միջև կփոխվի: Եվ դա էլ հենց կլինի առաջին քայլը: Չէ՞ որ երկուսս էլ մեր ժողովուրդների մի մասն ենք: Պատկերացրո՛ւ իմ ու քո նման ինչքան անհատներ կլինեն, որ կշփվեն իրար հետ տարիների ընթացքում: Ու գուցե վերջապես գա մի օր, որ այդ անհատների թիվը հավասար լինի ժողովրդի թվին:

Երդվում եմ՝ քո դեմ ոչինչ չունեմ, ոչ էլ քո ազգի, ոչ էլ էն զինվորի, որ 18 տարեկանում խրամատում կանգնած, ծաղկուն երիտասարդությունը թողած՝ ավերիչ հրամաններ է կատարում: Խնդրում եմ՝ ինչ-որ ձևով պատասխանիր իմ այս նամակին: Նամակիս կից՝ կգտնես իմ էլեկտրոնային փոստի հասցեն ու Ֆեյսբուքյան էջը: Իմացիր՝ Հայաստանում մի լավ ընկեր ունես: Մեծագույն ցանկությունս է քեզ տեսնել այստեղ ու կարողանալ քեզ ցույց տալ այն բոլոր բնակավայրերը, որոնց մասին, ինչպես նշել էիր նամակումդ, շատ ես լսել, բայց երբևէ չես տեսել: Կգաս, Հայաստանով կճամփորդենք, երկուսով տոլմա կսարքենք: Ումը ավելի քիչ անհամ լինի՝ նա էլ կասի՝ իմն է: Կուտենք ու կծիծաղենք: Ճանապարհին մեքենայի մեջ մեկ «Սարի աղջիկը» կմիացնենք, մեկ «Sari gelin»-ը ու կվայելենք: Հետո մի անձանոթի հարսանիքի կգնանք: Երկուսս էլ թևերս վեր կպարզենք ու գունճա-դիռլի տակ ձեռքի պտույտներով կպարենք, ինչպես թե՛ մենք ենք անում, թե՛ դուք: Իզուր չէ, որ հարևաններ ենք:

Երբ մեր հարևան Գյուլո տոտայից, որն ի միջի այլոց ժամանակին Բաքվից է Հայաստան եկել իր հայազգի ամուսնու հետ, նույնիսկ մեկ անգամ սուրճ եմ «պարտքով» վերցնում, մեր տան սուրճի համն ու բույրը նմանվում է իրենց տան սուրճի համուհոտին: Էնպես որ հարևան ենք էլի... կկովենք էլ, կբարիշենք էլ:

Անհամբերությամբ սպասում եմ պատասխանիդ:

Քո հայ բարեկամ՝

Աննա

## Համիդա – Դիանա

Բարև՝

Անունս Համիդա է: Ինչպես գիտես, գրում եմ հակառակ կողմից, մի երկրից, որը ծննդյանդ օրվանից որպես թշնամի ես ճանաչում: Սակայն եթե ես այս նամակը գրում եմ, իսկ դու ընթերցում ես այն, նշանակում է, որ մենք այն մարդիկ ենք, որոնք քայլեր են ձեռնարկում՝ առկա իրավիճակը փոխելու համար:

Նախկինում ես ևս մտածել եմ, որ բոլոր հայերը չէ, որ վատն են, և այս տեղահանություններից միայն մենք չէ, որ դժվարություն ենք կրում: Առաջին անգամ դա հասկացա, երբ կարդում էի Գարագանի (ադրբեջանցի գրող) «Ա վեպը»: Այնտեղ մի ադրբեջանցի ամբողջ ուժով ասում էր Հայաստանն ու հայերին, հավատում էր, որ բոլոր հայերը՝ մանուկից մինչև տարեց, դաժան, վատ ու արնախում են: Մինչև նա մի օր իմանում է, որ ինքն իրականում հայ է և պատերազմի ժամանակ պատահամա՞ր հայտնվել է Ադրբեջանում ու մեծացել այստեղ: Այստեղից պարզ է դառնում, որ այս ստեղծությունն ու վրեժխնդրությունը մեզ ուղղակի սնուցել են: Ո՞վ կուզի թողնել իր տունը, բակն ու այգին ու մեկընդմիշտ հեռանալ: Մենք այստեղ՝ Բաքվում, սովորական ուսանողներ ենք: Չնայած հնարավորություն ունենալուն պես գնում ենք մեր շրջաններ՝ միևնույն է, կարոտում ենք մեր հայրենի ծննդավայր: Այժմ ե՛կ պատկերացնենք, որ ինչ–որ մեկը թողնում է իր հիշողությունների վայրը ու հեռանում: Նման դաժան դեպքեր երկու կողմի քաղաքացիների հետ էլ տեղի են ունեցել:

Երկրորդ անգամ ինքս ինձ մտածեցի, թե այդ ինչպե՞ս է պատահում, որ դեռևս երեկ հարևանի պես միմյանց հետ հաց կիսող, միմյանց հետ ամուսնացող մարդիկ հաջորդ օրը կանանց ու ծերերին սպանեցին՝ առանց գթալու ու կտտանքներով: Իհարկե, նախ և առաջ չեմ կարծում, որ այդ ամենը խաղաղ բնակչությունն է արել: Հավանաբար, այդ ամենն անելու համար հատուկ անգութ մարդիկ են ընտրել: Դրանից հետո երկու կողմն էլ ինքնապաշտպանության նպատակով որոշակի տեղեր դեպքեր են իրականացրել:

Ճիշտ է, մեր միջև վերջին 30 տարում տեղի ունեցող այս հակամարտությունն ավելի վաղ ժամանակներից է գալիս, սակայն կարծում եմ, որ այդ ամենում միայն դուք չե, որ մեղավոր եք: Մենք՝ որպես երիտասարդներ, նպատակ ունենք ոչնչացնել ոչ մեկին օգուտ չբերող այս ատելությունը, և մեր երեխաներին մեծացնել՝ առանց ասելու, թե հայը կամ ադրբեջանցին քո թշնամին է:

Բարի մաղթանքներով՝

Համիդա

\* \* \*

Ողջու՛յն Համի՛դա,

Ես Դիանան եմ Երևանից: Ինձ հետաքրքիր էր, թե ինչ նամակ կստանամ, և քո նամակն ինձ անչափ ոգևորեց:

Նախ կցանկանայի կիսվել իմ մտքերով: Դու ճիշտ ես, երբ ասում ես, որ գրում ես մյուս կողմից, որին մենք սովոր ենք թշնամի համարել: Այնուամենայնիվ, ուզում եմ ասել, որ ես անձամբ ադրբեջանցիներին երբեք թշնամի չեմ համարել, գուցե հարևան, որի հետ մեր հարաբերություններն այնքան էլ լավ չեն, բայց ոչ՝ թշնամի:

Հավանաբար, սա կապված է այն փաստի հետ, որ ընտանիքս երբեք ռազմականացված չի եղել, ոչ էլ ունեմ կորուստներ կամ անձնական պատմություններ՝ կապված պատերազմի հետ: Սա ինձ միշտ մտորելու տեղիք է տվել, թե ինչ են մտածում մարդիկ սահմանից այն կողմ: Մեր հավաքական մտածողությունը միշտ ստիպել է առել միմյանց, սակայն ծագումով հայ, ադրբեջանցի գրողի օրինակը, որը դու բերում ես քո նամակում, ապացուցում է, թե ինչպես են ատելությունն ու տարբեր լինելու զգացումները սերմանվում մեր մեջ մանկությունից: Մենք սահմաններ ենք գծել ոչ միայն մեր տարածքների և մարդկանց միջև, այլև՝ մշակույթների, մտածողության և ավանդույթների, սակայն դա ճիշտ չէ:

Ես ցանկանում եմ կիսվել իմ փորձառությամբ, երբ առաջին անգամ Ուկրաինայում՝ միջազգային մի ծրագրի շրջանակներում, հանդիպեցի ադրբեջանցիների: Մեզանից պահանջվում էր ներկայացնել մեր մշակույթը՝ խոհանոցը, պարերը: Ինձ հիացրեց այն փաստը, թե որքան նմանություններ ունենք մենք երգերի, խոհանոցի և նույնիսկ պարերի մեջ: Վերջում պարզվեց, որ թե՛ հայերը, թե՛ ադրբեջանցիները նույն երգն էին պատրաստել իրենց մշակույթը ներկայացնելու համար՝ «Սարի աղջիկ»-ը կամ «Սարի գեղին»-ը ինչպես դուք եք այն անվանում: Այդ պահին մենք, պարզապես, միավորեցինք մեր մշակույթները և մեր երեկոն կոչեցինք «Հայ-ադրբեջանական մշակույթային երեկո»: Ես ջերմություն և խանդավառություն զգացի նույն երգը երկու լեզվով էլ երգելիս:

Ես հավատացած եմ, որ եթե ավելի շատ կենտրոնանք մեր նմանությունների վրա տարբերությունների փոխարեն, մենք ի վիճակի կլինենք լսել միմյանց՝ ի վերջո հարթակ ստեղծելով երկխոսության համար: Ես, իհարկե, միամիտ չեմ և հասկանում եմ, որ մեր ժողովուրդները դժգոհություններ ունեն միմյանց նկատմամբ մեր նախնիների կատարած գործողությունների պատճառով. իրականությունն այն է, որ միշտ էլ կլինեն ծայրահեղականներ, որ

կփորձեն ռազմական գործողություններ սկսել հոգուտ իրենց, սակայն մենք՝ երիտասարդներս, որ հավատում ենք երիտասարդության ուժին, պետք է գիտակցենք պատերազմի ավերիչ հետևանքները և անենք ամեն բան՝ այն կանխարգելելու համար:

Ուզում եմ ասել, որ Հայաստանում շատ են այն երիտասարդները, որ այս կոնֆլիկտի փոխակերպումը տեսնում են երկխոսության և բանակցությունների մեջ: Հավատացած եմ, որ նույնը Ադրբեջանում է, քանի որ մենք հիմա գրում ենք միմյանց: Դա անհնարին չէ: Դա արդեն պատահել է: Ինձ շատ ոգեշնչեց այն պատմությունը, որը հիմա ընթերցում եմ: Գիրքը պատմում է 1980–ականների մասին, երբ Լեոնային Ղարաբաղում հայ–ադրբեջանական ռազմական էսկալացիայի ժամանակ Կիզիլ–Շաֆազի (գյուղ Հայաստանի հյուսիսում) ադրբեջանցի բնակիչները և Քերքենջի (գյուղ Ադրբեջանի կենտրոնում) հայ բնակիչները հանդիպում են սեփական նախաձեռնությամբ՝ բանակցելու իրենց գյուղերի խաղաղ փոխանակման շուրջ: Պատմությունն ինձ համար ապաքաղաքական է: Սա պատմություն է մարդկանց մասին, որոնք հասկացան, թե ինչպես պատասխանատվությունն իրենց ձեռքը վերցնեն՝ առանց զոհերի:

Մինչ մեր կառավարությունները զոհերն են հաշվում սահմանից այն կողմ և պարծենում դրանց թվով, երկու ժողովուրդները հայտնվել են անդադար վախի, կորստի և ցավի թակարդում:

Մենք մեր պատմության կրողներն ենք, բայց նաև՝ նոր պատմություն կերտողները, և ես հավատացած եմ, որ մենք ենք այն փոփոխությունը, որի կարիքը մեր հասարակություններն այնքան շատ ունեն:

Հ.Գ.

Եթե դու, նույնպես, ցանկանում ես կարդալ գիրքը և իմանալ ավելին գյուղերի խաղաղ փոխանակման վերաբերյալ, այն կոչվում է «Ղարաբաղյան կոնֆլիկտից այն կողմ. գյուղերի փոխանակման պատմությունը». այն ստեղծվել է հայ և ադրբեջանցի հետազոտողների համագործակցության արդյունքում:

Անկեղծորեն՝

Դիանա

## Ֆուադ Մ – Լուսինե

Ողջուն՛ցն, սիրելի՛ ընկեր,

Անունս Ֆուադ է։ Ես ուսանող եմ և ներկայումս ապրում եմ Բաքվում։ Կյանքով լեցուն ու դրական երիտասարդ եմ։ Ինձ համար «պատերազմում հաղթողներ չեն լինում, լինում են կորցնողներ և ավելի շատ կորցնողներ»։ Այդ պատճառով էլ կարծում եմ, որ խաղաղությունը միակ ուղին է մարդկանց՝ համատեղ ու բարեկեցիկ կյանքով ապրելու համար։ Մեր երկրների հարաբերությունները բացասական ազդեցություն ունեն մի շարք ոլորտների վրա, այդ թվում՝ ազգամիջյան երկխոսություն, տնտեսական ու քաղաքական ոլորտների։

Ռազմական ոլորտին հատկացվող ծախսերը կարող էին հատկացվել կրթությանը։ Եթե սահմանները բացվեն, իրենց բնօրրանը լքած աղրբեջանցիները կկարողանան ազատ այցելել իրենց բնակավայրերը, իսկ տնտեսական տեսանկյունից կգարգանա երկրների միջև առևտուրը։ Դեռ մանկությունից դպրոցում, ընտանիքում, հասարակության մեջ հակահայկական մտքեր են մեզ մատուցվել և դեռ շարունակվում են մատուցվել։ Դրա հետևանքով առաջանում են մի շարք կարծրատիպեր ու ներքին արհեստական ատելություն։ Ուրեմն նախ և առաջ պետք է փոխենք մեր հայացքներն ու տեսակետերը, գտնենք ու վերացնենք այս ատելության ու անհամաձայնությունների պատճառները։ Հաճախ դրական եմ տրամադրվում այս ամենը հաղթահարելու ուղղությամբ, քանի որ «Նամակներ հանուն խաղաղության» ծրագրի նման ծրագրեր կան։ Բոլորին խաղաղության ու ընկերության հրավեր եմ ուղարկում ոչ թե

ատելության: Այլևս չեմ ուզում խուսափել խոսելուց որևէ մեկի հետ նրա հայ լինելու պատճառով, չեմ ուզում, որ նրա ազգությունը ստվեր գցի իմ մտքերի վրա: Իրականում, իմ կողմից երբեք նման բան տեղի չի ունեցել: Ինձ համար ազգությունը, կրոնը, ռասան ու տարբերությունները երբեք խնդիր չեն եղել: Ես շատ երկրներում ծանոթներ ունեմ:

Մարդկանց պետք է սիրել իրենց մտքերի համար, մնացած բաները արգելք չեն: Կարծում եմ՝ դու էլ ես ինձ պես մտածում: Իսկ քո կարծիքով ի՞նչ է խաղաղությունը: Քեզ համար մարդկանց ազգությունը կարո՞ղ է խոչնդոտ հանդիսանալ, որպեսզի նրանք գրչակից ընկերներ դառնան: Կցանկանայի՞ր հետազայում նույնպես մասնակից լինել Խաղաղության կառուցմանը (որը դու հենց հիմա անում ես):

Հանուն ապագայի, լեցուն խաղաղությամբ:

Ամենամիլիրական մաղթանքներով՝

Ֆուադ

\* \* \*

Բարև՝, հարգելի՛ Ֆուադ,

Իմ անունը Լուսինե է: Ես Երևանից եմ և քեզ պես մի ուսանող եմ: Համալսարանական տարիներից հետաքրքրված լինելով հակամարտություններով և դրանց կարգավորմամբ (մասնավորապես Լեռնային Ղարաբաղի հակամարտությամբ և դրա շուրջ ընթացող բանակցային գործընթացով)՝ հասկացել եմ, որ Լեռնային Ղարաբաղի դեպքում հակամարտությունը կառավարությունների միջև է, այլ ոչ թե՝ ժողովուրդների: Ինձ համար այս հակամարտությունը դասվում է

այն հակամարտությունների շարքին, որոնք արհեստական ճանապարհով ստեղծվել են այս կամ այն գերտերության կողմից՝ ելնելով սեփական շահից: Թերևս, խնդիրը նրանում է, որ կառավարությունները շարունակում են ճնշված մնալ գերտերությունների կողմից, իսկ ժողովուրդները՝ կառավարությունների: Սա է պատճառը, որ կառավարությունները շարունակում են ատելություն քարոզել միմյանց նկատմամբ իրենց պետության ներսում: Իսկ իրենց պետությունից դուրս միջազգային հանրության համար ժամանակ առ ժամանակ խոսում են խաղաղության և խաղաղ կարգավորման մասին: Սակայն, խնդիրը նրանում է, որ մի կողմը խաղաղ կարգավորման վերջնարդյունքը պատկերացնում է ազգի ինքնորոշման սահմաններում, իսկ մյուս կողմը՝ տարածքային ամբողջականության վերականգման սահմաններում: Մինչդեռ ինձ համար խաղաղությունը վեր է այս սահմաններից: Խաղաղություն ասելով՝ նախ և առաջ պատկերացնում եմ ներդաշնակություն փոխհարաբերություններում: Եթե տեղափոխենք սա հակամարտության ոլորտ, ապա խաղաղ կարգավորումն ինձ համար բանակցային ճանապարհով համատեղ ընդունելի փոխզիջման հասնելն է, որի արդյունքում կարգավորվում է ոչ միայն հակամարտությունը, այլև՝ կողմերի միջև դժվանագիտական հարաբերությունները: Այլ կերպ ասած՝ կարևորվում է համագործակցությունը կողմերի միջև, չէ՞ որ խաղաղության հաստատման համար անհրաժեշտ են երկկողմանի ջանքեր: Թերևս Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորումը կնպաստի Հարավային Կովկասի թե՛ տնտեսական, թե՛ քաղաքական բարգավաճմանը:

Կարդալով նամակդ՝ մեծ մասամբ կիսում եմ խաղաղության վերաբերյալ քո պատկերացումները, ինչպես նաև հակամարտության բացասական ազդեցությունը մեր երկրների փոխհարաբերությունների վրա: Ուրախ եմ, որ քեզ պես գիտակից մարդու նամակին եմ պատասխան գրում, չէ՞ որ գիտակցությունն է խաղաղության հասնելու կարևոր գործիքը: Ցավոք, մեր հասարակություններում ոչ բոլորն են ձեռք բերել այն գիտակցությունը, որի պատճառով առկա է

ոչ միայն զինված, այլև՝ տեղեկատվական հակամարտություն:  
Միգրացիոն պայմանավորված է նաև նրանով, որ որքան մարդիկ  
հեռու են ապրում հակամարտության գոտուց, այնքան ավելի  
հանդուրժող են այլ ազգերի նկատմամբ՝ ի տարբերություն  
հակամարտության գոտուն մոտ ապրող մարդկանց: Մեկ այլ ցավալի  
փաստ է այն, որ կառավարությունները, ձգտելով պահպանել  
ազգայինը, իրականում զբաղվում են ազգայնամոլությամբ, ինչը այլ  
ազգերի նկատմամբ ձևավորում է ատելություն և  
անհանդուրժողականություն: Բայց չէ՞ որ մեր պետությունների միջև  
կան մշակութային նմանություններ: Այս տարի հնարավորություն  
ունեցա շփվելու ադրբեջանցի երիտասարդների հետ Վրաստանում  
կայացած աշխատաժողովի ընթացքում և իմ օրինակով կարող եմ  
ասել, որ մարդկանց ազգությունը չի կարող խոչընդոտ հանդիսանալ  
շփվելու կամ ընկերանալու համար և պատմության մեջ տեղ գտած  
օրինակները նույնպես կարող են փաստել դա: Այդպես, հայերն ու  
ադրբեջանցիները կողք կողքի խաղաղ ապրել են թե՛ Խորհրդային  
Միության ժամանակ և թե՛ ներկայումս Վրաստանի Քվեմո Զարթի  
մարզի Մառնեուլի շրջանի՝ Միրզոկա, Ծոփ, Խոժոռնի գյուղերում և  
այլն:

Թերևս իմ և քո նամակները կարող են նյութական ապացույց  
հանդիսանալ այն բանի, որ կան խաղաղասեր մարդիկ, որոնք ձգտում  
են հասնել ազգերի միջև ներդաշնակության:

Հ.Գ. Եթե ցանկանաս շարունակել մեր խոսակցությունը այս  
նամակներից դուրս ձևաչափում, ապա կից ուղարկում եմ իմ  
ֆեյսբուքյան էջի հասցեն՝

Հանուն կարծրատիպերի ու ատելության վերացման,

Խաղաղասեր մաղթանքներով՝

Լուսինե

## Ռոյա – Նեկի

Բարև՛, սիրելի՛ ընկեր,

Ես Ռոյան եմ: Այս պահին կյանքում առաջին անգամ նամակ եմ գրում մի մարդու, որին երբեք չեմ տեսել ու չեմ ճանաչում: Ես դա կարող եմ անել մի քանի անգամ, սակայն հնարավոր է նաև հնարավորություն ունենամ հանդիպելու, գրուցելու ու կապերը խորացնելու այն մարդու հետ, որին նամակ եմ գրում, բայց չեմ ճանաչում: Ցավոք, այս պահին իմ և քո միջև դա հնարավոր չէ: Պետք է խոստովանեմ, որ դա ինձ շատ է վշտացնում: Ես երբեք, անգամ վիրտուալ տիրություն, հայի հետ չեմ խոսել, հայ չեմ տեսել: Ձեզ հետ հանդիպելու, գրուցելու հնարավորություն ունեցած ծանոթներս միշտ դրական կարծիք են հայտնել: Հեզնական չի՞ հնչում արդյոք այսքան մոտ լինելը, բայց երբեք հայ չտեսնելը: Ընկերներս հաճախ են ինձ բողոքում, թե ես ուսուպիայի մեջ եմ ապրում: Այո՛, ես սիրում եմ երազանքներ հորինել: Միշտ երազել եմ այնպիսի մի աշխարհի մասին, որտեղ բոլորը կապրեն խաղաղության ու անդորրի մեջ, որտեղ չեն լինի պատերազմներ ու սահմաններ, որտեղ չեն ոտնահարվի մարդու իրավունքները, որտեղ երեխաների դեմքին միշտ ժպիտ կլինի, որտեղ բոլորը կլինեն ազատ: Սակայն միայն երազելով չեմ սահմանափակվել և թվարկածս ամեն ինչին ամբողջ սրտով հավատացել եմ ու շարունակում եմ հավատալ: Գուցե թվարկածներս երբեք չլինեն, սակայն վստահ եմ՝ որքան շատ լինի այդ ամենին հավատացող մարդկանց թիվը, այնքան կնվազի բռնությունը, վայրենությունը, անգրագիտությունն ու ատելությունը: Ամեն ինչ սկսում է հավատքով և ավարտվում՝ հավատքով: Ինչին հավատում ենք, այն էլ իրական է: Այդ պատճառով էլ, բարեկամս, քեզ

կոչ եմ անում խթանել խաղաղությունը, որքան հնարավորություն կունենաս: Մենք դա պետք է անենք ոչ միայն մեր հարազատների, ընկերների, ընտանիքի ու հայրենիքի անվտանգության, այլև՝ ամբողջ աշխարհի բարօրության համար:

Ծիշտ է, մենք չենք կարող ստիպել պատերազմ տեսած, կորուստներ կրած, ցավ տեսած մարդկանց մոռանալ այդ ամենը: Եվ պետք էլ չէ ստիպել մոռանալ: Չպետք է ստիպենք, այլ այդ ամենը նորից չվերապրելու համար պետք է անենք հնարավոր ամեն բան: Ամեն ինչ մեր ձեռքերում է, բարեկամ:

Անհամբերությամբ կսպասեմ քո նամակին,

Ռոյա

\* \* \*

Ռոջու՛յն, սիրելի՛ Ռոյա,

Ես Նելլին եմ՝ 20 տարեկան: Շնորհակալ եմ բարի նամակիդ համար:

Նամակը կարդալիս փորձում էի պատկերել քեզ իմ մտքում: Ուրեմն հիմա, եթե դու փորձում ես նույնն անել, պատկերացրո՛ւ երիտասարդ աղջկա՝ մի փոքր թուխ մաշկով և սև, զանգուր մազերով: Ես նույնպես առաջին անգամ եմ նամակ գրում մեկին, ում չեմ ճանաչում: Հույս ունեմ մի օր անձամբ հանդիպել և գրուցել քեզ հետ գուցե Վրաստանում, Ուկրաինայում կամ որևէ այլ երկրում կամ գուցե Հայաստանում կամ Ադրբեջանում, ո՛վ գիտի: Նախկինում ես հանդիպել եմ ադրբեջանցի երիտասարդների և նրանց հետ անձամբ խոսելու հնարավորություն ունեցել: Թու՛յլ տուր քեզ մի բան ասել. ես միայն լավ և դրական տպավորություններ եմ ստացել:

Ծիշտ քեզ նման ես նույնպես հավատացած եմ, որ մի օր ամեն բան ավարտվելու է, աշխարհը դառնալու է ավելի խաղաղ վայր, ես ավելի շատ աղոթեջանցի ընկերներ եմ ունենալու, և մենք երկուսս էլ կարողանալու ենք այցելել միմյանց մեր երկրներում: Վերջերս Ուկրաինայում մի կոնֆերանսի ժամանակ, ես մասնակցում էի մշակութային երեկոյի: Մասնակիցները պետք է խառնեին բոլոր մասնակից երկրների անունները և յուրաքանչյուրը վերցներ միայն մեկ թղթի կտոր: Թղթի վրա գրված էր այն երկրի անունը, որի պարը պետք է սովորեր մասնակիցը: Իմ թղթի վրա գրված էր «Աղոթեջան»:

Իրականում ես շատ հետաքրքրված և խանդավառված էի, որ պետք է սովորեմ ձեր ավանդական պարերից մեկը: Այն կոչվում էր «Նազ Էլամա»: Մենք պետք է պարեինք զուգընկերոջ հետ, և իմ զուգընկերը վրացի ընկերներիցս մեկն էր: Մենք նկատեցինք, թե որքան նման էին մեր երեքի ավանդական պարերի շարժումները. աղջիկների ձեռքերի նույր շարժումները և տղաների ծափերը: Հայր և վրացին աղոթեջանական պար են պարում, ծիծաղելի է, այնպես չէ՞: Այդ օրը ես նկատեցի, թե որքան շատ են մեր ազգերի, մշակույթների և պարերի նմանությունները: Ես ջերմ ու ծանոթ զգացողություններ ունեցա այն պարելիս: Ես մտածեցի, որ եթե մի օր կարողանանք կենտրոնանալ մեր նմանությունների վրա տարբերությունների փոխարեն, մենք ավելի կատարյալ և խաղաղ աշխարհում կապրենք: Եթե խաղաղությունն օվկիանոս է, ապա ես ցանկանում եմ իմ կաթիլն ունենալ դրանում:

Ընկե՛րս, ես համաձայն եմ, որ մենք՝ դու և ես, պետք է անենք ամեն բան կանխարգելելու անցյալի կրկնությունը: Ես ցանկանում եմ, որ մենք շարունակենք հավատալ, որ իմ և քո սերունդները դառնալու են խաղաղության դեսպաններ:

Շնորհակալ եմ՝ ժամանակ տրամադրելու համար: Հույս ունեմ մի օր անձամբ հանդիպել և ավելի լավ ճանաչել քեզ: Իսկ մինչ այդ այս նամակին եմ կցում իմ էլ. փոստի հասցեն: Ուրախ կլինեմ լուր ստանալ քեզանից :):

Սիրով՝

Քո առաջին հայ ընկեր

Նելլի

## Սայադ – Նինա

Բարև՛,

Անունս Սայադ է: 20 տարեկան եմ: Այս նամակը քեզ գրում եմ մեծ հույսով, քանի որ գիտեմ, որ դու էլ ես խաղաղության կողմնակից: Քեզ չեմ ճանաչում: Սակայն գիտեմ, եթե դու իմ նամակը կարդալու ես, ուրեմն՝ դու էլ ես խաղաղություն ուզում: Ուզում եմ քեզ հետ անկեղծ լինել: Մեր հասարակության մեջ, երբ ասում են հայ, թշնամուն են հիշում: Վստահ եմ, որ ձեզ մոտ էլ է այդպես: Սակայն ես այդպես չեմ մտածում: Պատերազմական իրավիճակում ապրելը մեզ միայն վնաս է հասցրել: Ես քո հանդեպ աստելության զգացմունք չունեմ:

Պատերազմական իրավիճակում գտնվելը ո՛չ իմ մեղքն է, ո՛չ քո: Կարծում եմ, որ Լեռնային Ղարաբաղի և հարակից շրջանների օկուպացիան, մեր հազարավոր քաղաքացիների սպանությունը, այն, որ ավելի քան մեկ միլիոն բնակչություն չի կարողանում վերադառնալ իր հարազատ բնակավայրեր, քո մեղքը չէ: Ինձ շատ է տխրեցնում, որ այս հակամարտությունը դեռևս շարունակվում է, որովհետև այս վիճակը երկու կողմին էլ վնասում է: Վստահ եմ, որ դուք էլ եք վշտանում, երբ առաջնագծում սպանվում է ձեր զինվորը, այնպես ինչպես մենք ենք տխրում, երբ սպանվում է մեր զինվորը: Ախր, այնտեղ սպանվող զինվորը մի մոր զավակ է, մի երեխայի հայր: Ախր, անտրամաբանական է, որ մենք կարող ենք ապրել խաղաղության մեջ, սակայն ապրում ենք պատերազմական իրավիճակում: Ախր, այս հակամարտությունը երկու ժողովուրդներին, երկու պետություններին միայն ու միայն վնաս է հասցնում: Այս հակամարտությունը պատճառ է դառնում, որպեսզի երկու երկրները թե՛ տնտեսական, թե՛ սոցիալական առումով ետ մնան: Կարծում եմ՝ դու ինձ շատ լավ ես

հասկանում: Մեր տարածաշրջանում խաղաղության հաստատումը երկու կողմի համար էլ զարգացման հիմնաքար կդառնա:

Խաղաղության հաստատման մաղթանքով:

Առողջ եղիք,

Սայադ

\* \* \*

Բարև, Սայադ,

Ես Նինան եմ՝ 17 տարեկան: Չգիտեմ՝ քանի Նինա ես ճանաչում, քանի անգամ ես առհասարակ այս անունը լսել, բայց վստահ եմ, որ առաջին Նինան եմ, որը հայ է ու քեզ նամակ է գրում:

Ես միշտ եղել եմ այն համոզմունքին, որ խաղաղությունը ստեղծում են ժողովուրդները: Խնդրում եմ ուշադրություն դարձրու, ժողովուրդը չէ, ժողովուրդները: Ու Հայաստանի, Ադրբեջանի հարաբերություններն ու Ղարաբաղի հարցն էլ պետք է մենք լուծենք: Մենքը դա ես եմ, դու, իմ փոքր եղբայրը, որը դեռ բանակ չի գնացել, քո ընկերները, որ բանակում արդեն ծառայել են ու գուցե մեր ծանոթները կամ հարազատները, իմ ու քո, որ արդեն զոհվել են: Ես վստահ եմ, ավելի քան վստահ եմ, որ թե՛ հայերը, թե՛ ադրբեջանցիները արդեն շատ են լացել ու արցունք թափել, շատ–շատ. հերիք է:

Գիտե՞ս, երբ ապրիլյան քառօրյայի ժամանակ մենք լսում էինք հարյուրավոր 18–19 տարեկան քաջ երիտասարդների պատմություններ, անավարտ պատմություններ, ամբողջ ազգով սգում էինք, որովհետև կորուստն անդառնալի էր: Երբ ես տեսնում էի իմ հարազատների, ընկերների կամ թեկուզ անծանոթների ցավը, ինքս էլ

ցավում էի ու զգում, որ էստեղ ինչ–որ բան այն չի: Որ մենք՝ թե՛ հայերը, թե՛ ադրբեջանցիները, ինչ–որ բան սխալ ենք անում: Դու նշեցիր հազարավոր զոհերի, հիմա պատկերացրու, որ մի այդքան մատղաշ կյանք էլ մենք ենք կորցրել: Ուրեմն քանի՛–քանի՛ հազարավոր մարդիկ են զոհվել երկու կողմից էլ, ուղղակի մարդիկ, առանց ազգությամբ նայելու: Իսկ ինչե՛ր դեռ կարող էին անել այդ երիտասարդները, ինչքա՛ն լավ ու բարի բաներ, որ եղպես էլ չարեցին...

Ճիշտ ես, մեզ մոտ էլ են ձեզ թշնամի համարում: Համամիտ եմ, որ անտրամաբանական է այս ամենը շարունակելն ու վստահ եմ, որ եթե մեր սերունդը խաղաղության գաղափարը տարածի, մի օր գուցե իմ ու քո երեխաները միասին քննարկեն ինչ–որ տնտեսական համագործակցություն:

Ես չեմ ուզում, որ եղբորս, ապագա ամուսնուս, որդուս, մտերիմ ընկերներիս կամ ինչ–որ ուրիշ մեկի պատմությունն անավարտ մնա: Չեմ ուզում, որ որևէ մեկին ՀԵՏՄԱՀՈՒ հերոսի կոչում տան՝ պատերազմից հետո: Արդեն շատ ունենք հերոսներ, ավելի շատ՝ մահացած հերոսներ: Չեմ ուզում՝ ոչ մի մայր որդեկորույս համարվի, ոչ մի կին այրի մնա, ոչ մի երեխա՝ որբ: Տեսնո՞ւ՜ ես, չեմ ասում հայ մայր, հայ երեխա: Չէ՛, թող ձերոնք էլ չզոհվեն, թող ձերոնք էլ խաղաղ ապրեն, թող ժպտան:

Մի քիչ շատ բան եմ չէ՞ ուզում կամակոր երեխայի պես: Բայց մենք պիտի երեխաների պես մտածենք: Եթե հայ ու ադրբեջանցի երեխաներին իրար կողք նստեցնենք, չեն էլ հարցնի՝ դու ո՞վ ես, ի՞նչ ես, չեն ասի՝ դու ուզում ես մեր հողը գրավել կամ հե՛տ տուր մեր տարածքները: Հաստատ չէ, ուղղակի կխաղան իրար հետ ու կծիծաղեն: Հետո գուցե վիճեն, մեկը մյուսի խաղալիքը խլի, բայց վերջում հո՞ կհաշտվեն: Իսկ մենք մի երեխայի պես էլ հաշտվել չենք կարողանում: Ու միմյանց երեսից ժպիտներ ենք խլում...

Երևի պետք է ուղղակի հաճախ խոսենք իրար հետ, իրար երեսի նայենք ու այդ ժամանակ մենք՝ հայերս, կտեսնենք, որ աղբբեջանցին հայից վատ չի ժպտում, իսկ դուք էլ կտեսնեք, որ հայն էլ ամեն դեպքում ժպտալ գիտի: Երբ գնահատենք այդ ժպիտները, արժևորենք ու կարևորենք, էլ չենք համարձակվի ուրիշից խելե...:

Ու՛ֆֆ, չգիտեմ, չգիտեմ, շատ եմ չե՛ խոսում, Սայա՛դ: Եթե դեռ չես ձանձրացել ու կարդում ես, ուրեմն երևի հասկացար, որ այս երկա՛ր–բարա՛կ տեքստով ուզում էի քեզ ասել, որ համաձայն եմ մտքերիդ հետ, համարյա բոլորի: Միշտ չեմ կարողացել կարճ կապել, կներես, որ գլուխդ տանում եմ :D :

Լավ, ինչևէ, երևի էսքանը: Կուզեի՝ դու էլ պատասխանեիր, կուզեի դեռ երկար ինչ–որ բան քննարկել քեզ հետ, բայց եթե նույնիսկ էլ իրար հետ չխոսենք, եթե էդպես էլ իրար չտեսնենք, ուզում եմ՝ հիշես, որ Երևանում երկար–բարակ խոսող, գլուխ տանող, կամակոր, բայց շատ սիրուն ժպիտով մի ծանոթ (կամ ընկեր, ոնց կուզես) ունես, որը քո գաղափարները կխոսում ու քեզ պես խաղաղության է սպասում:

Սիրով ու ժպիտով՝

Նինա ^\_^

Հ.Գ. Դու էլ ժպտա ☺

## Ամելիա – Պանդա

Բարև՛, իմ գրչակի՛ց ընկեր,

Ես Ամելիան եմ, 19 տարեկան: Առաջին անգամ է, որ նամակ եմ գրում հային: Ճիշտն ասած, մտածում էի՝ ինչ եմ գրելու, անգամ չգիտեմ՝ որտեղից սկսել: Երբ որևէ պատմվածք կամ գիրք եմ կարդում, սիրում եմ մտովի պատկերացնել դրա հերոսներին: Շատ կուզեի, որ դու էլ կարողանաս պատկերացնել այս նամակը գրող մարդուն, երբ այն ձեռքդ առնես: Ես գանգուր մազերով, շատախոս, ծիծաղկոտ, միջահասակ մի աղջնակ եմ: Ընտանիքս Չանգիլանից է, սակայն, ցավոք, ես այնտեղ չեմ ծնվել: Նրանք ասում են, որ ձեզ հետ շատ մոտ են եղել: Զեղիս ասում է, որ նա շատ հայ ընկերներ է ունեցել, միասին շատ ժամանակ են անցկացրել և հետաքրքիր հուշեր ունեն: Իսկ մայրս պատմում է, որ առևտուր անելու նպատակով հաճախ էին Ղափան գնում–գալիս: Թեև ես այնտեղ չեմ ծնվել–մեծացել, բայց ինձ միշտ հետաքրքիր է եղել, թե ինչպիսին է այդ տարածքը:

Գիտե՞ս, ամռանը իմ բաքվեցի ընկերները գնում են իրենց շրջաններ ու քաղաքներ, ափսոս, ես չեմ կարողանում գնալ, որովհետև օկուպացվել է: Գուցե դու բազմիցս եղել ես այն վայրերում, որոնք ես շատ կցանկանայի տեսնել: Ո՞վ գիտե, գուցե ինչ–որ մի ժամանակ կհանդիպենք ու սոսիների անտառներում կգրոսնենք: Կամ պատկերացրու՝ նստած ենք Արաքսի ափին ու խոսում ենք այն հույզերի մասին, որ ապրել ենք միմյանց նամակ գրելիս: Ճիշտ է, գուցե դա լինի շատ տարիներ անց: Այդ գործընթացը արագացնելու համար մենք խաղաղությունը ավելի շատ մարդկանց մեջ պետք է տարածենք:

Կարծում եմ, եթե այս նամակը կարդում ես, ուրեմն դու էլ ես ընտրում խաղաղությունը, այլ ոչ թե պատերազմը:

Ամենաբարի մաղթանքներով՝

Ամելիա

\* \* \*

Բարև՝ սիրելի՛ Ամելիա,

Ծնորհակալ եմ խաղաղության նամակիդ համար: Ես համակարծիք եմ քեզ հետ. կիսում եմ խաղաղությունը մարդկանց մեջ տարածելու գաղափարդ: Հաճելի է իմանալ, որ հարազատներդ շփվել են հայերի հետ եւ լավ հիշողություններ ունեն:

Ես Մելանյան եմ: Ընկերներս հաճախ ինձ պանդա են ասում՝ պատճառաբանելով, թե «փափուկ» եմ ու «փոքրիկ» (երևի հասակս նկատի ունեն): Ուստի ներկայանամ. Պանդա, 19 տարեկան, երազկոտ մի աղջնակ: Այնքան շատ երազանքներ ունեմ՝ կապված ընտանիքիս, ինձ, հարազատներիս հետ: Երազում եմ հիմնել իմ սեփական դպրոցը եւ այն ծառայեցնել երեխաների որակյալ կրթություն ստանալուն: Երազում եմ բարեգործություններ կատարել՝ օգնելով մանկատներին, ծերանոցներին եւ կարիքավոր ընտանիքներին: Երազանքներիս մեջ իր անփոխարինելի տեղն ունի խաղաղությունն իր բոլոր դրսևորումներով՝ տանը, մարդկանց փոխհարաբերություններում եւ ամենակարևորը՝ սահմանին:

Գիտե՞ս՝ ես ևս նախկինում չեմ շփվել աղբբեջանցու հետ եւ ուրախ եմ, որ այժմ նման հնարավորություն ունեմ: Գրում եմ քեզ՝ մեծ հույով, որ մի օր կհանդիպենք: Կհանդիպենք արդեն պատերազմի հակառակ կողմում՝ խաղաղության մեջ: Գուցե այդ հանդիպումը տեղի ունենա

քո՞ երկրում, կամ գուցե ի՞մ երկրում. երկու դեպքում էլ ես շատ ուրախ կլինեմ: Խաղաղության մասին երազանքս կիսով չափ իրականացած կհամարեմ, եթե այդ հանդիպումը տեղի ունենա:

Ամեն ի՞նչ, սիրելի՛ս, ես էլ քեզ պես խաղաղության կողմնակից եմ:

Խաղաղությունն աշխարհի ամենագեղեցիկ երևույթներից է: Այն հոգու ներդաշնակության գրավականն է: Խաղաղությունն է, որ մարդկանց համախմբում է նույն գաղափարի շուրջ եւ նրանց ի գործ է դարձնում կերտել մշակույթի գոհարներ: Խաղաղությունն անհնար է պատկերացնել առանց բանակցության, շփումի եւ կապի շրջակա միջավայրի հետ:

Մեր երկրները, թեև հարևաններ են, սակայն, ցավոք, խաղաղության մեջ չեն: Ժամանակի ընթացքում մեր ժողովուրդները թշնամացել են միմյանց դեմ եւ սկսել են պայքար մղել հողի համար: Նրանք պատգամել են իրենց սերունդներին կռվել հակառակորդի դեմ եւ նույնիսկ սպանել նրան: Հայացք նետելով պատմությանը՝ տեսնում ենք, որ ոչ մի պատերազմ բարիք չի ծնել: Չոհեր, վիրավորներ, երիտասարդ կյանքեր... Ահա թե ինչ է ծնում պատերազմը:

Ժամանակն է հրաժարվել այս դաժան իրականությունից, դադարել ապրել վախը սրտներումս, որ մի օր կլսենք այս խոսքերը՝ «Սահմանին լարված իրավիճակ է. կան զոհեր»:

Իրականում պատերազմում են պետությունները, ժողովուրդները մեծ մասամբ խաղաղ են: Ուսուցիչս, որը կռվել է Արցախյան պատերազմում, պատմում էր, որ հայ եւ ադրբեջանցի զինվորները հրադադարի ժամանակ պարանով սնունդ եւ ջուր էին փոխանցում իրար:

Թե՛ քո եւ թե՛ իմ ժողովուրդը մեծ կորուստներ են ունեցել թշնամանքի օրվանից մինչ այսօր: Ուստի մենք, լինելով մեր երկրների ապագան,

պետք է խաղաղության կոչ անենք մեր ժողովուրդներին, որ ոչ մի ընտանիք այլևս կորուստ չունենա:

Ասում են՝ հայերը եւ աղբրեջանցիները ժամանակին ապրել են նույն տարածքում, խոսել միևնույն լեզվով, նրանց երեխաները սովորել են նույն դպրոցում: Եթե այդ բարեկամությունը եղել է տարիներ առաջ, ինչո՞ւ չի կարող լինել նաև հիմա: Ինչո՞ւ պատերազմել, եթե կա խաղաղությունը:

Քեռակինս Կապանից է: Խորհրդային տարիներին իր ընտանիքը ապրել է Երևան–Բաքու գնացքի կայարանի հարևանությամբ: Պատմում է, որ կայարանի աշխատողների մեծամասնությունը աղբրեջանցիներ էին, որոնք շատ սիրալիր և հարգալից էին տեղացիների նկատմամբ: Հիշում է, որ կայարանում աղբրեջանցի վաճառականներից գնում էին թեյ, վաֆլիներ: Ասում է՝ նրանք ևս շատ բարի մարդիկ էին:

Հայրս Մոսկվայում աշխատելու տարիներին ծանոթացել է մի աղբրեջանցու հետ եւ ասում է, որ շատ մարդամոտ, հարգանքի արժանի մարդ է եղել:

Այսպիսով՝ իմ խաղաղասե՛ր բարեկամ, ե՛կ մեր խաղաղության կոչով դառնանք մի մասնիկը խաղաղության հաստատման երկար սպասված գործընթացում:

Շնորհակալ եմ նամակս ընթերցելու համար:

Խաղաղատենչ մաղթանքներով՝

Հայաստանաբնակ Պանդա:

Հ.Գ. Շատ գեղեցիկ անուն ունես, Ամե՛լիա:

## Նառա – Մանե

Բարև՛, նույն գաղափարախոսությունն ինձ հետ կիսող մա՛րդ,

Իմ անունը Նառա է։ Մենք, գուցե, հասակակիցներ ենք։ Գուցե, մեր մտածելակերպն ու մտքերը նույնպես նույնն են։ Այս նամակը քեզ գրելու նպատակս հայտնի է. այն միայն մեկ անուն ունի՝ «Խաղաղություն»։ Մենք քեզ հետ նույն գաղափարի շուրջ ենք միավորվում։ Արդյոք չի՞ կարող լինել, որ միլիոնավոր մարդիկ այդ գաղափարի շուրջ միավորվեն։ Դու դա չե՞ս ցանկանա։ Ես ամենից շատ ու բոլորից շատ դա եմ ցանկանում։ Չէի ցանկանա անդրադառնալ անցյալին, կցանկանայի ավելի շատ նայել դեպի առաջ ու դեպի ապագա, սակայն դա մոռանալ հնարավոր չէ։ Երկուսիս հիշողությունների մեջ էլ դառը հուշեր և հետքեր կան։ Սակայն մենք կարող ենք գործել, որ մեր ապագան այդպիսին չլինի։ Քո կարծիքով այդպես չ՛է։ Արդյո՞ք դա մեր ձեռքերում չէ։ Կարո՞ղ ենք արդյոք միլիոնավոր մարդկանց գրթության, մարդասիրության, խիզախության ու քաջության կոչ անել։ Զանի այդ հավատը կա մեր մեջ, մենք ամեն ինչ կարող ենք։ Խաղաղություն բառը բոլորի համար 10 տառից է բաղկացած, սակայն շատ քիչ մարդ գիտի, թե որքան դժվար է այն, և որն է դրա նպատակը։ Դու չեի՞ր ցանկանա ապրել երջանիկ, բարեկեցիկ, խաղաղ ու հանգիստ մի աշխարհում։

Հոսող արցունքներ, հառաչանք ու կսկիծ, կորուստ, թախիծ ու ատելություն, սա՞ ես ցանկանում, թե՞ ծիծաղաշատ դեմքեր, փայլող աչքեր ու սեր։ Ես հրավիրում եմ քեզ դեպի այս գեղեցիկ զգացմունքները և, որ ամենակարևորն է, խաղաղության կոչ եմ

անում: Մենք խաղաղությամբ կգեղեցկացնենք մեր աշխարհը, ես վստահ եմ:

Հարգանքներով՝

Խաղաղություն կամեցող մի աղջիկ

Նառա

\* \* \*

Սիրելի՛ Նառա,

Ես Մանեն եմ՝ 17 տարեկան: Նախ, ուզում եմ շնորհակալություն հայտնել նամակիդ համար: Երբևէ չեմ մտածել, որ կխոսեմ ադրբեջանցու հետ, բայց շատ ուրախ եմ ընձեռված հնարավորության համար, քանի որ հավատացած եմ, որ այս խնդիրը լուծելու միակ ճանապարհը խոսելն է ու միմյանց հասկանալ փորձելը: Սա նաև կարող է մեր հրաշալի ընկերության սկիզբը դառնալ: Ինձ դուր են գալիս քո գաղափարները խաղաղության վերաբերյալ, և ես հավատում եմ, որ վաղ թե ուշ միլիոնավոր մարդիկ կհամախմբվեն միևնույն գաղափարի շուրջ՝ հասկանալով, որ դրանից ավելի կարևոր բան գոյություն չունի:

Ճիշտ քեզ նման ես միշտ երագել եմ, որ մեր երկրների միջև խաղաղություն լինի, քանի որ կար ժամանակ, երբ մենք ապրում էինք միասին, կողք–կողքի: Երբ երեխա էի, ես կարծում էի, որ եթե երկրները հարևաններ են, ապա նրանց միջև հարաբերությունները պետք է շատ խաղաղ և ամուր լինեն: Այդ էր պատճառը, որ ատելությունը մեր երկրների միջև միշտ զարմացրել է ինձ: Միշտ հարցրել եմ ինքս ինձ՝ ինչու՞ չենք կարող, պարզապես, դադարեցնել միմյանց սպանելն ու ուղղակի ապրել խաղաղ:

Երբևէ մտածե՞լ ես, թե ինչպիսին կլինեին մեր երկրները, եթե թշնամիներ չլինեինք, եթե չլինեի պատերազմ և բոլոր այդ մարդիկ չսպանվեին: Ես վստահ եմ, որ մեր երկրները շատ ավելի լավ վիճակում կլինեին, քան ներկայումս են, որովհետև պատերազմը երբեք ոչ մի լավ բանի չի հանգեցնում: Ես, նույնպես, չեմ ցանկանում հիշել անցյալը: Այն, իհարկե, մոռանալ հնարավոր չէ, սակայն կարծում եմ, որ մենք երբեք չենք կարողանա մտածել ապագայի մասին, եթե միշտ անցյալի մասին մտածենք:

Այո՛, մենք բոլորս ունենք մեր անձնական պատմություններն ու դառը հիշողությունները, մենք բոլորս սիրելի մարդիկ ենք կորցրել, մենք բոլորս սգացել ենք: Կարծում եմ՝ երկուսիս համար էլ եղել են պահեր, երբ լի ենք եղել ասելությամբ միմյանց հանդեպ՝ կարծելով, որ միակ ճանապարհը վրեժխնդրությունն է: Բայց դա այդպես չէ, իսկապես այդպես չէ: Մեր ժողովուրդներից ոչ մեկը՝ ո՛չ մերոնք, ո՛չ ձերոնք, չեն ցանկանում, որ սա շարունակվի, նույնիսկ այն մարդիկ, որոնք ասում են, թե երբեք չեն համաձայնի ապրել խաղաղ, երբեք չեն մոռանա անցյալն ու չեն ների: Բայց խոսքը ներելու մասին չէ, ոչ է՛լ անցյալն անտեսելու, այլ՝ հասկանալու, որ այն, ինչ եղել է, փոխել հնարավոր չէ: Մենք երբեք չենք կարող փոխել անցյալը, բայց ինչպես դու ես ասում, ապագան կերտելը մեր ձեռքերում է: Մենք կարող ենք միավորվել և անել ամեն բան, որպեսզի մեր ապագան միանգամայն տարբեր լինի անցյալից, լեցուն լինի սիրով և ուրախությամբ: Մենք կարող ենք անել դա միասին: Միասին մենք կարող ենք փոփոխություն բերել:

Անկեղծորեն՝

Մանե

Հ.Գ. Նամակին կցում եմ իմ էլ. փոստի հասցեն՝ հույսով, որ կգրես ինձ:

## Ումիդ – Սյուզաննա

Բարև՛, սիրելի՛ մարդ,

Անունս Ումիդ է, ես Բաքվից եմ: Ինչպե՞ս ես: Կարծում եմ՝ քեզ մոտ ամեն ինչ կարգին է:

Այս նամակը գրելու նպատակս քեզ խաղաղության կոչ անելն է: Գիտեմ, որ տարիներով մեր երկրները պատերազմական իրավիճակում են գտնվում: Երկու երկրներն էլ կորուստներ են կրել: Քեզ մի հարց տամ. այսքան կորուստ, այսքան մահ հանուն ինչի՞ էր պետք: Այս աշխարհն ամբողջ մարդկության համար է, ինչո՞ւ պետք է մարդիկ թշնամու պես ապրեն, այլ ոչ թե եղբայրների: Կյանքը շատ կարճ է, սիրելի՛ հարևան, կգա ժամանակ, երբ մենք այս աշխարհում այլևս չենք լինի: Կարծում եմ՝ այս սառը հարաբերությունները պետք է մի կողմ դնենք ու ամբողջ աշխարհին հղենք խաղաղության ու հանգստության ուղերձ: Այս աշխարհը մեզ բոլորիս համար է: Նապոլեոնի, Ալեքսանդր Մակեդոնացու, Սուլթան Սուլեյմանի նման հանճարները նույնպես մահկանացուներ են եղել: Ինչո՞ւ մենք պետք է մի բուռ հողի համար միմյանց թշնամի լինենք: Կարծում եմ՝ մարդկությանը կփրկի խաղաղությունը:

Ես կարծում եմ, որ դու համամիտ ես իմ մտքերի հետ: Չնայած մենք տարբեր ազգեր ու մշակույթներ ենք ներկայացնում՝ ըստ իս՝ երկուսս էլ կարծում ենք, որ խաղաղությունն է կարգավորման միակ ուղին: Ճիշտ է, տարիներ ի վեր մեզ ասում են, որ դուք մեր թշնամին եք, ձեզ էլ ասում են, որ մենք ձեր թշնամին ենք: Սակայն, իմ կարծիքով, մենք այս կարծրատիպերը պետք է կոտրենք: Ես իմ կյանքում միայն մեկ անգամ

եմ հայ տեսել, այդ ժամանակ Ռումինիայում էի, նրա հետ շատ զրուցելու հնարավորություն չեմ ունեցել: Ուզում եմ՝ մի օր քեզ հետ զրուցել, հասկանալ, թե ինչն ինչպես է: Շատ եմ ուզում իմանալ, թե դու մեր հանդեպ ինչ վերաբերմունք ունես: Եթե ստացվի, կարծում եմ մենք այս ծրագրի շրջանակում կհանդիպենք և երկար–երկար զրուցելու ժամանակ կունենանք: Անհամբեր սպասում եմ, թե երբ այս նամակը կհասնի քեզ: Կարծում եմ, որ ոչ միայն մեզ երկուսիս, այլև երկու ժողովրդի համար էլ ամեն ինչ իր լուծումը կգտնի:

Հարգանքներով՝

Խաղաղասեր աղբրեջանցի Ումիդ

\* \* \*

Մտերիմ ընկերներիցս մեկին.

Ռոջու՛յն, իմ սիրելի՛ ընկեր,

Մենք երբեք չենք հանդիպել ու չենք խոսել, բայց կարծում եմ՝ մենք ընկերներ ենք: Ինչպե՞ս ես: Կարծում եմ՝ քեզ հետ ամեն ինչ լավ է: Ես կիսում եմ քո մտքերն ու մտածելակերպը: Կարծես՝ մենք մոտ ընկերներ ենք նույն երկնքի տակ, բայց միևնույն ժամանակ շատ հեռու: Այսօր քնելիս ես երազանք կպահեմ: Դա կլինի մեր գաղտնիքը, այն է՝ մի օր տեսնել քեզ: Ես շատ բան ունեմ քեզ պատմելու, քեզ հետ զրուցելու:

Ես Մյուզաննան եմ Գավառից՝ մի շատ փոքրիկ քաղաք Հայաստանում: Ես ուսանող եմ և ցանկանում եմ հայտնի դեսպան դառնալ: Ես սիրում եմ լողալ, և ընկերներս ինձ լողորդ Մյուզան են անվանում: Ես օր ու գիշեր քո նամակի մասին եմ մտածում և ուզում եմ իմ մասին քեզ պատմել ամեն բան և ճանաչել քեզ:

Տատիկս ինձ պատմել է մեր երկու ազգերի նմանությունների մասին:  
Նա ինձ պատմել է, որ մեր երգերը, երաժշտությունը, պարը և նույնիսկ  
ճաշատեսակներն են շատ նման... ուրեմն ինչպե՞ս կարող ենք մենք  
թշնամիներ լինել:

Մենք բարեկամներ ենք եղել և բարեկամներ կմնանք անգամ եթե մեր  
միջև տարաձայնություններ կան: Բայց հավատա՜ կգա մի օր, երբ ես  
կկարողանամ տեսնել քեզ, դու էլ՝ ինձ, մենք սեղանի շուրջ կնստենք և  
կգրուցենք: Ես քեզ համար կերակուր կպատրաստեմ, իսկ դու  
կփորձես այն: Հույս ունեմ, որ ես լավ խոհարար եմ, հաիա... կատակ  
էր: Արի՛ մի կողմ թողնենք ամեն բան և լավ ընկերներ լինենք՝ ողջ  
տխրությունն ու արցունքները թողնելով անցյալում: Հրաշալի ապագա  
եմ մաղթում բոլորիս:

Լավագույն մաղթանքներով՝

Սյուզաննա

# ՆԱՄԱԿՆԵՐ 2018

## Տաթև – Բյամբան

Բարև՛, իմ սիրելի՛ բարեկամ,

Ես հայ եմ: Մեծ հպարտությամբ ու ոգևորությամբ եմ գրում նամակս, քանի որ գիտեմ կարդալու ես հենց դու՝ նույն երկնքի տակ ապրող, սակայն այլ աշխարհայացք ունեցող, հարևան Ադրբեջանի իմ հասակակից քաղաքացի:

Ես Տաթևն եմ: Ապրում եմ Հայաստանում. քեզնից ոչ այնքան հեռու երկրում, սակայն գաղափարների և աշխարհընկալումների տարբեր բևեռներում: Տարիներով ձգվող հակամարտությունը մեր 2 երկրների միջև ձևավորել է թշնամի հասկացությունը, պատերազմ բառի բացատրությունը՝ Ղարաբաղ և Ադրբեջան:

Ես ու դու, իմ և քո ծնողները, հարազատները, ընկերները լույս աշխարհ են եկել՝ ստեղծելու, միմյանց սիրելու, միմյանց ժպտալու և աշխարհում միասին խաղաղ ապրելու համար:

Իսկ ի՞նչու ենք անընդհատ պատերազմում. միգուցե նրա համար, որ այդ տարածքները մե՞րն են կամ ձե՞րը կամ ա՞յլ պատճառով: Սակայն մեկ հիմնավորում շատ հստակ է՝ խաղաղության համար մարդկանց շատ ավելի քաջություն է հարկավոր, քան պատերազմի: Ես հավատում եմ, որ մի օր մեր ժողովուրդները կունենան այդ քաջությունը խոսելու խաղաղության մասին ոչ միայն

փաստաթղթերով, այլև իրենց մտքերով, գաղափարներով և խաղաղ գործողություններով:

Ասում են, որ նախկինում հայերն ու աղբրեջանցիները ապրել են հարևանությամբ, օգնել են միմյանց ցանկացած հարցում: Պապիկս և տատիկս շատ էին պատմում իրենց աղբրեջանցի ընկերների մասին. պատմում էին, որ իրենք ամեն տարի գնում էին Աղբրեջանի Նաֆթալան քաղաք հանգստանալու: Այնտեղ շփվում էին շատ աղբրեջանցիների հետ: Այնքան էին մտերմացել, որ նույնիսկ նրանցից մի քանիսին հրավիրել էին հորաքրոջս հարսանիքին և միասին լավ ուրախացել ու գիշերն անցկացրել մեր տանը: Նրանք այդ ամենը պատմում էին քաղցր և կարոտած ժպիտով:

Մյուս տատիկս ծնվել և մեծացել է Աղբրեջանի ներկայիս տարածք հանդիսացող Կիրովաբադ քաղաքում: Նրա ամբողջ հուշերը, մանկության լավագույն տարիները կապված են այդ քաղաքի մարդկանց և պատմության հետ: Պատմում է, որ ապրել են աղբրեջանցիների հետ, հաց կերել միասին, դպրոց գնացել, խաղացել, մեծացել որպես մեկ ընտանիքի անդամներ: Իսկ տատիկի եղբայրը դեռևս շարունակում է կապերը պահպանել այնտեղ ապրող իր հասակակից աղբրեջանցի ընկերների հետ: Տատիկի համար շատ դժվար է համակերպվել այն իրողության հետ, որ այլևս չի կարող վերադառնալ իր մանկության բնակավայրը, որ Հայաստանի և Աղբրեջանի միջև կան երկայնյա փակ դարպասներ:

Դե իսկ ես, ես երբեք չեմ եղել Աղբրեջանում, երբեք չեմ տեսել աղբրեջանցի, չեմ խոսել նրանց հետ, ես միայն լսել եմ քո ազգի, ձեր երկրի, ձեր մշակույթի մասին: 3 տարի առաջ, սակայն, առիթ ունեցա լինել Ղարաբաղում և 2 օր ապրել սահմանին շատ մոտ և որ ամենահետաքրքիրն է՝ աղբրեջանցու տանը: Այդ տանն արդեն աղբրեջանցիներ չէին ապրում, իսկ հարևանները չէին դադարում պատմել իրենց սիրելի նախկին հարևանների մասին, որոնք ստիպված

թողել էին ամեն ինչ ու հեռացել: Գիտե՞ս, չկար վախ, չկար ատելություն, չկար և ոչ մի տարբերություն հայկական և ադրբեջանական տների միջև: Այդ 2 օրը ապրեցի սովորական տան մեջ, բայց հետո հասկացա, որ սովորական չէր կարող լինել, որովհետև քարե տունը, այգին, ջրի ծորակը շինել էին հայերն ու ադրբեջանցիները միասին, ու իրար հետ կիսել էին ամեն–ամեն ինչ:

Հայաստանում և աշխարհի որևէ երկրում, եթե հանդիպես մի հայի և հարցնես, թե ի՞նչ է ամենաշատը ցանկանում, կպատասխանի. խաղաղություն մեր սահմաններին և մեր զինվորներին:

Հայաստանում եթե կենաց են խմում հայ զինվորի համար, չեն մոռանում նաև սահմանին կանգնած քո եղբայրներին, չեն մոռանում քաջություն և խաղաղություն մաղթել նաև ձեր զինվորներին:

Իմ սիրելի՛ բարեկամ, ես հույս եմ հայտնում, որ մի օր հայերն ու ադրբեջանցիները դուրս կգան ձևավորված կարծրատիպերից և կդառնան բարեկամ ժողովուրդներ, ամեն մի նոր փորձություն կհաղթահարեն սիրո և համերաշխության մթնոլորտում:

Մենք պետք է հասկանանք, որ մեր ազգերը միանման մտածել չեն կարող, որ մենք միևնույն ճշմարտությանը նայում ենք տարբեր անկյուններից, ու թերևս չկարողանանք էլ նայել նույն անկյունից, բայց համերաշխ և խաղաղ ապրելու համար պետք է պատրաստ լինենք հանդուրժել միմյանց:

Հայն ու ադրբեջանցին միմյանց ներելու արիություն պետք է ունենան: Ատելությունը, որը տարիներ շարունակ ձևավորվել է մեր ժողովուրդների մոտ պետք է փոխարինենք սիրով և ջերմությամբ:

Ես գիտեմ, Խաղաղությունը ո՛չ քարոզում են, ո՛չ պարտադրում, ո՛չ խնդրում, ո՛չ պահանջում, ո՛չ էլ համոզում, Խաղաղությունը ստեղծում

է կամ ավելի շուտ վերագտնում է ամեն մարդ ինքն իր մեջ: Ներքուստ խաղաղ մարդուն և ազգին ոչ այլ ինչ, քան խաղաղություն է սպասում:

Սիրելի՛ իմ ծանոթ և միաժամանակ անծանոթ բարեկամ, մաղթում եմ իմ և քո ժողովրդին գիտակցված խաղաղություն:

Շնորհակալ եմ նամակս ընթերցելու համար:

Սիրով Հայաստանից՝

Տաթև

\* \* \*

Բարև՛, Տաթև,

Նամակս կցանկանայի սկսել քո իսկ նախադասությամբ: Իրոք, մի բան շատ հստակ է, որ խաղաղության համար մարդկանցից ավելի շատ խելամտություն է պահանջվում, քան թե պատերազմի համար: Կովել, մարտնչել ինչ–որ բանի համար, պատերազմել բոլորն էլ կարող են: Սակայն ոչ բոլորը կարող են համարձակվել լավություն անել, մտածել խաղաղության մասին ու մարդկային վերաբերմունք ցուցաբերել: Պատմության ընթացքում ոմանց կատարած սխալների պատճառով այսօր երկու ազգ թշնամի են դարձել: Սակայն, իհարկե, այսօր Ղարաբաղի օկուպացիայի, պատերազմի ժամանակ մահացած հազարավոր անմեղ աղբրեջանցիների մահվան մեջ դու մեղք չունես: Ախր, ո՞վ կցանկանար, որ նման բան տեղի ունենար:

Եթե Խոջալուում գազանաբար սպանված մանուկների նկարները տեսնես, նայես տեսանյութերը, չես կարողանա զսպել արցունքներդ և դու ինքդ կցանկանայիր, որ այդ միջադեպերի մեղավորները պատժվեն: Այո՛, այսօր ինչպես ձեզ մոտ (թարգ. – նկատի ունի

աղբբեջանցիներին կամ թուրքերին), այնպես էլ մեզ մոտ մեծամասնությունը հայ ազգին թշնամի է համարում: Սակայն իրականությունն այն է, որ միմյանց թշնամի անհատ մարդիկ չկան: Կան մարդիկ, որոնց միմյանց նկատմամբ դաստիարակել են որպես թշնամիներ:

Հավատա՛, կիսում եմ խաղաղության մասին քո գրած բոլոր մտքերը: Ես էլ եմ խաղաղություն ուզում, ես էլ եմ դեմ, որ այս պատերազմից մարդիկ տուժեն, ես էլ եմ հաշտություն ուզում: Ես էլ եմ մեր երկրների զարգացումը խաղաղության մեջ տեսնում: Ես էլ կցանկանայի, եթե երբևէ գամ Երևան խանութում կամ տաքսիում ինձ նայեն ոչ թե որպես թշնամու, այլ՝ հարևան երկրի մի բարեկամի: Կցանկանայի, որ նույն վերաբերմունքը դու զգաս Բաքվում քո հանդեպ: Ինչպես քո տատիկն է պատմել, ինչպես Ղարաբաղում ապրածներն են պատմում, մենք թե՛ Աղբբեջանում, թե՛ Հայաստանում ապրել ենք համերաշխ: Եվ հույս ունեմ, որ նորից այդպես կլինի:

Խաղաղության ամենահաճելի մաղթանքներով՝

Քյամրան

## Անախ – Թոֆիկ

Միրելի՛ ընկեր,

Տարօրինակ է մտածել, որ գրում եմ մի մարդու, որին հնարավոր է, երբեք չհանդիպեմ իր հայրենիքում: Որ չեմ կարող ինքնաթիռով կամ գնացքով կամ ավտոբուսով հասնել մեկին, ում այսքան մոտ եմ աշխարհագրորեն: Որ եթե մենք ցանկանայինք հանդիպել, ամենահեշտ տարբերակը կլիներ հանդիպել Վրաստանում, մի վայր, որտեղ դու չես կարող ցույց տալ քո տունն ու ասել. «Ես այնտեղ եմ ապրում, արի նե՛րս գնանք ու թեյ խմենք. ես այնքա՛ն բան ունեմ քեզ պատմելու»:

Այն, ինչը բաժանում է մեզ, ֆիզիկական սահմաններ են, բայց հոգեբանական սահմանն է, որ ստեղծել է այս ֆիզիկական սահմանը: Մենք բաժանված ենք պատերով, որ մեր մտքերում կառուցել են մեր կառավարություններն ու քաղաքական գործիչները, ուսուցիչներն ու հարևաններն ու բարեկամները: Պատեր, որ կառուցված են պատմության և ինքնության շփոթեցնող, հորինված տարբերակներից ու ընկալումներից: *Պատեր, որ մեզ հետ են պահում հարցեր տալուց*, որովհետև մեզ նման ժողովուրդների համար, ում պատմությունն ու ինքնությունն արդեն իսկ շփոթեցնող են ու հեռահար ու բարդ, այլ տարբերակների մասին մտածելը կարող է վախեցնող և ճնշող լինել:

Տարբերակներ, որտեղ մենք, գուցե, միշտ չէ, որ հաղթողներ կամ զոհեր ենք: Տարբերակներ, որտեղ մենք, գուցե, միշտ չէ, որ ճիշտ ենք վարվում: Տարբերակներ, որտեղ մենք.... *վախեցնող աստիճանի մարդկային ենք*: Որովհետև մարդիկ ներքուստ և՛ լավն են և՛ վատը...մարդիկ սխալներ են գործում, նրանք և՛ ճիշտ, և՛ սխալ բաներ են անում...

Տարօրինակ է մտածել, որ դու և ես, որ երբեք չենք հանդիպել, վարժեցվել ենք զգուշանալ միմյանցից: Դու և ես, որ այսքան շատ ընդհանուր արժեքներ և ավանդույթներ ունենք: Մենք, որ հյուրընկալության, հավատարմության, բարոյականության և եղբայրության նույն մշակույթն ունենք:

Մենք բոլորս ուզում ենք անել այն, ինչ ճիշտ է ոչ միայն մեր, այլև մեր հարևանների ու ընկերների համար: Մենք եսասեր ժողովուրդ չենք: Մենք մտածում ենք ուրիշների մասին:

Եթե ես փողոցում հանդիպելի քեզ, դու ընկնելի ու քերծելի ծունկդ, ես պայուսակիցս վիրակապ կհանեի ու օգնություն կառաջարկեի քեզ և վստահ եմ, որ դու նույնը կանելի ինձ համար: Որովհետև երբ մենք արնահոսում ենք, երկուսիս արյունն էլ կարմիր է: Որովհետև երբ մեր ընկերները ծիծաղում են մեզ վրա ընկնելու ու ոտքը քերծելու համար, մենք երկուսս էլ պտտեցնում ենք մեր աչքերը, հանդուգն պատասխան ենք տալիս ու շարունակում տան ճամփան: Եվ երբ ավելի ուշ այդ օրը տուն ենք հասնում ու տեսնում փոստային նամակը, որ մեր եղբայրներին ու ընկերներին ծառայության է կանչում, մենք երկուսս էլ վախի նույն զգացողությունն ենք ունենում մեր սրտերում:

Ու երբ մեր մայրերը լաց են լինում մեր եղբայրների մեկնելու օրը կամ այն օրը, երբ նրանք վերադառնում են դազադում, նրանք նույն արցունքն են թափում: Ու երբ նրանք այս աշխարհի ցավից, վրդովմունքից կամ կատաղությունից աղաղակում են, նրանք նույն բառերն են բղավում:

Գուցե, ի՛մ ընկեր, դու մտածում ես, որ ես իդեալականացնում եմ կամ էլ պարզեցնում: Բայց դու հարց տվե՞լ ես, թե ինչու պետք է այսքան հեշտ լինեի իդեալականացնել: Ինչու՞ երբ մենք կանգնում ու մի կողմ ենք դնում թշնամության, սահմանների, տարբեր ժողովուրդների ու հողերի

այս գաղափարները, այնքան հեշտ է դառնում տեսնել մարդկայինը մյուս կողմում, մյուս անձի մեջ: Ու երբ մենք կանգ ենք առնում ու ինքներս մեզ հարցեր տալիս, մենք հասկանում ենք, որ այնքան բան կա, որի շուրջ մենք երբևէ կանգ չենք առել ու չենք մտորել:

Եվ իհարկե սա նույնպես շատ հեշտ է հնչում: Եվ ես, իհարկե, այնքան միամիտ չեմ, որ մտածեմ, թե մի քանի նամակ ու մի քանի մարդ, որ մեզ պես են մտածում, կարող են որևէ բան փոխել այսօր, վաղը կամ եկող շաբաթ:

Բայց ես հավատում եմ, որ մեր օրինակը ունի փոփոխություն բերելու այդ ուժը: Որովհետև այս աշխատարաններին հաճախելու միայն մեր պատրաստակամությամբ, ստատուս քվոն հարցականի տակ դնելով, մեզ պատմածներին հավատալուց հրաժարվելով, վեր կենալով ու «Ո՛չ» ասելով կոնֆլիկտին, թշնամությանն ու տարբերություններին՝ մենք արդեն իսկ փոփոխություն ենք բերում:

Պարզապես լինելով այն, ինչ կանք և խոսելով այս հարցերի մասին մեզ շրջապատող մարդկանց հետ՝ մենք փոփոխություն ենք մտցնում այսօրվա ու վաղվա մեջ:

Իմ շուրջը ես տեսնում եմ մարդկանց, որոնք հետաքրքրված են: Մարդկանց, որոնք հոգնել են: Մարդկանց, որոնք հարցնում են. «Ինչու՞ պետք է այսպես լինի»: Ու այստեղ է, որ մենք գալիս ենք ու ասում. «Պետք չէ, որ այսպես լինի»:

Իմ սիրելի՛ ընկեր, տարօրինակ չէ՞ մտածել, որ դու և ես, ու մեր հասակակիցները, երբեք չենք հանդիպել, ու եթե ոչինչ չփոխվի, չենք էլ հանդիպի: Որ մեր ծնողներն ու պապերը, հնարավոր է, մի ժամանակ ծիծաղով են քայլել նույն փողոցով: Որ նրանք, գուցե, նստել են կողք կողքի ու վերջին կարդացած գիրքը քննարկել: Բայց մենք ու մեր հասակակիցները, գուցե, երբեք այս մարդկայնացնող փորձառությունը չունենանք:

Ես հույս ունեմ, որ այն աշխատանքը, որը դու և ես անում ենք, մի օր հնարավոր կդարձնի, որ սա մեզ համար նույնպես իրականություն դառնա: Ես հույս ունեմ, որ մի օր դու ցույց կտաս քո տունը, ինձ ներս կհրավիրես ու կասես. «Արի՛ թեյ խմենք, ես այնքա՛ն բան ունեմ քեզ պատմելու»:

Ջերմորեն քո՝

Անաիս

\* \* \*

Սիրելի՛ ընկեր,

Ես այս նամակը գրում եմ մեկին, ում գուցե երբեք չեմ հանդիպելու, սակայն նաև հավատում եմ, որ չնայած մեր միջև կատարվածներին՝ մենք մի օր կկարողանանք հանդիպել, նաև հավատում եմ, որ խաղաղություն կլինի: Քո գրած նամակում տեղ գտած մտքերի հետ համաձայն եմ և հակամարտության կարգավորումը միայն խաղաղ ճանապարհով ու բանակցությունների միջոցով եմ տեսնում: Ուրախ եմ, որ ինձ պես մտածող երիտասարդներ կան, և դա իմ մեջ արթնացրեց խաղաղության զգացողություն: Քո նամակում նշել ես, որ ես չեմ կարող իմ տունը ցույց տալ և ասել. «Ես այստեղ եմ ապրում, ներս արի, զնա՛նք, թե՛յ խմենք, քեզ պատմելու շատ բան ունեմ»:

Իրականում այդպես չէ, ես էլ եմ առնվազն քո չափ ցանկանում որ այդ օրը գա, մեր նամակներում ընդհանուր մտքերի առկայությունը մեզ խաղաղության կոչ է անում: Ես հավատում եմ, որ մեր օրինակը ապագայում ինչ–որ բան կփոխի և վերջ կդնի ցանկացած տեսակի բռնության, հակամարտության ու ատելության:

Թոֆիկ

## Միլենա – Կունել

Միրելի՛ ընկեր ջան,

Ես Միլենան եմ՝ 16 տարեկան, Դիլիջան անունով գեղեցիկ քաղաքից։ Արդեն մեկ տարի է, ինչ ապրում եմ սահմանամերձ մի գյուղում, որը սահմանակից է Ադրբեջանին։ Իմ գյուղի տարբեր հատվածներից ես պարզորոշ կերպով տեսնում եմ ադրբեջանական գյուղեր և նույնիսկ այդտեղ բնակվող մարդկանց ու կենդանիներին։ Դրանք շատ նման են իմ գյուղին։ Երբեմն ինձ թվում է, որ մենք նույն իրականության տարբեր կողմերում ենք ապրում։ Մենք այնքան մոտ ենք, բայց միևնույն ժամանակ՝ բաժանված սահմաններով։

Բայց գիտե՞ս, կա մի բան, որ կապում է մեզ։ Այստեղով է հոսում միջսահմանային Խնձորուտ կոչվող գետը, որ հոսում է և՛ Ադրբեջանի, և՛ Հայաստանի տարածքով։ Երբ ես գետափ եմ գնում, ես կանգնում եմ գետի մոտ, նայում դրա խորքերը ու փորձում պատկերացնել Ադրբեջանի լանդշաֆտներն ու արտացոլումը այն մարդկանց, որոնք նայել են դրա մեջ։ Ես պատկերացնում եմ, որ սահմանի հակառակ կողմում ընկեր ունեմ, որը կանոնավոր կերպով գնում է գետի իր կողմը ու գետի միջոցով ինձ ողջույններ, նամակներ ու պատմություններ ուղարկում։ Իսկ երբ ես եմ գնում այնտեղ, վայրի ծաղիկներ եմ քաղում ու զգուշորեն դնում գետի վրա ու իմ հերթին ուղարկում գետի իմ ընկերոջը։ Այս գյուղ տեղափոխվելուց հետո, գետափը իմ սիրելի վայրերից մեկն է դարձել, որովհետև ես մտածում էի, որ դա քո երկրի հետ կապը պահելու միակ ձևն է։

Սակայն հիմա ինձ հիանալի հնարավորություն է ընձեռվել դա անելու համար: Ես կցանկանայի քեզ մի քիչ պատմել իմ և իմ երկրի մասին: Հայաստանը տոկուն մարդկանց երկիր է: Թավշյա հեղափոխությունը ապացույցն է այն բանի, որ հայ ժողովուրդը միասնական է, ուժեղ, հուսավառ և ապագային նայում է քաջությամբ ու վճռականությամբ: Հայ մշակույթի առանձնահատկություններից մեկն էլ լեզուն է, հատկապես դրա արտահայտությունները, որ անհնար է թարգմանել: Եթե նկատել ես, նամակի սկզբում ես «ջան» բառն եմ օգտագործել: Սա մի բառ է, որ հնարավոր չէ թարգմանել, բայց այն արտահայտում է մեր ջերմ վերաբերմունքը անձի հանդեպ: Իմ սիրելի արտահայտություններից մեկն էլ «մեռնեմ ջանիդն» է, որի բառացի թարգմանությունը ահավոր կինչի անգլերենով, իսկ իրականում այն ջերմ խոսք է, որ նշանակում է՝ պատրաստ եմ կյանքս տալ քեզ համար:

Իսկ այժմ իմ մասին: Ես, հավանաբար, աշխարհի ամենաերագլուտ անձն եմ, կատուների մեծ սիրահար և կորեական մշակույթի խենթ երկրպագու: Մարդիկ ինձ երբեմն «սմայլիկ» են կոչում, որովհետև ես շատ եմ ժպտում և հավատում եմ, որ խաղաղությունը հենց ժպիտից է սկսում: Երբ ես մեծանամ, ուզում եմ բժիշկ դառնալ ու աշխատել «Բժիշկներ առանց սահմանների» միջազգային կազմակերպությունում, որը շրջում է պատերազմական գոտիներով ու օգնում հակամարտության հետևանքով տուժած մարդկանց:

Իմ ամենամեծ երագանքներից մեկը Միացյալ համաշխարհային 17 քոլեջներից մեկում սովորելն է, դրա առաքելությամբ ապրելն ու այս աշխարհը ավելի լավ ու խաղաղ տեղ դարձնելը: Մի տոն կա, որ ես ավելի շատ եմ սիրում, քան իմ ծննդյան օրը: Դա սեպտեմբերի 21–ն է՝ խաղաղության միջազգային տոնը: Ամեն տարի խաղաղության միջազգային տոնի օրվա առթիվ Դիլիջանի Միացյալ համաշխարհային քոլեջի ուսանողները քայլերթեր և այլ խաղաղարար միջոցառումներ են կազմակերպում քաղաքում, որին մասնակցում են հայեր ու

թուրքեր, իսրայելացիներ ու պաղեստինցիներ՝ տոնելով  
խաղաղությունն ու մշակութային առանձնահատկությունները:

Ինչպես արդեն հասկացար, խաղաղությունը շատ կարևոր է ինձ  
համար և ես ուզում եմ իմ փոքր ներդրումն ունենալ դրանում: Ինձ  
համար խաղաղությունը կոնֆլիկտի ժամանակ կարեկցանք, ոչ բռնի և  
ստեղծագործական մոտեցում ցուցաբերելու կարողությունն է: Ինձ  
համար խաղաղությունը մարդու իրավունք է, խաղաղությունը  
միջավայր է, որ հնարավորություն է ընձեռում անձի կենտրոնացման,  
աճի ու զարգացման համար: Հնարավոր է չափազանց լավատես թվա՞ն  
կամ էլ վարդագույն ակնոց եմ կրում, բայց ես հավատում եմ, որ մեր  
նամակները փոփոխություն կբերեն: Եթե 1 ուսանողը 1 նամակ է  
գրում, 100 ուսանողը 100 նամակ կգրի, 1000 ուսանողը՝ 1000, և մի օր  
մեր դեկավարներն ու ազգերը կստանան մեր ուղերձը ու  
կհանգուցալուծեն կոնֆլիկտը խաղաղ ճանապարհով:

Միրոս կոտրվում է ամեն անգամ, երբ լսում եմ սահմանին զինվորի  
մահվան մասին՝ առանց որևէ պատերազմի, և ես ավելի եմ  
հիասթափվում, որ սա սովորական է դառնում: Ես ընկճվում եմ  
իմանալով, որ մարդիկ, որոնք բռնություն են կիրառում կամ սպանում,  
խրախուսվում են և նույնիսկ՝ «ազգային հերոս» համարվում: Ես  
տխրում եմ՝ նայելով հոլովակներ և տեսնելով, թե ինչպես են  
ուսուցիչները անմեղ երեխաներին սովորեցնում մեզ համարել ձեր  
թշնամիները ու ատել միմյանց: Մի ժամանակ մենք ապրել ենք նույն  
երկնքի տակ՝ միավորված Սովետական Միության կողմից: Ի՞նչը  
փոխվեց հիմա:

Ես գիտեմ, որ շատ քաղաքական պատճառներ ու շահեր կան  
կոնֆլիկտի ետևում, բայց ես գիտեմ, որ ոչ մի քաղաքական շահ չպիտի  
գերակայի մարդկային կյանքերի դիմաց: Հարյուրավոր զինվորներ  
գոհվեցին երկու կողմից էլ, հարյուրավոր ընտանիքներ քանդվեցին,  
հարյուրավոր սիրահարներ կորցրին իրենց սիրեցյալներին: Բավական

Է: Այս կոնֆլիկտում հաղթողներ երբեք չեն լինի: Մենք բոլորս պարտվում ենք, երբ անմեղ մարդիկ են զոհվում: Ասացվածքը պնդում է. «Միասին մենք ուժեղ ենք, բաժանված՝ պարտվում ենք»: Մենք պետք է հասկանանք սա և միասնական ջանքերով պայքարենք կլիմայական փոփոխությունների և աղքատության պես լրջագույն խնդիրների դեմ:

Ի վերջո՝ մենք բոլորս զարմանահրաշ մարդկային արարածներ ենք, որոնք արժանի են երջանիկ ապրելու: Ինչպես աղբբեջանցի իմ ընկերներից մեկն ասաց. «Շատ երկրներ խնդիրներ ունեն իրար հետ, բայց յուրաքանչյուր խնդիր լուծում ունի: Մեր նախնիները չեն կարողացել լուծում գտնել:

Բայց այսօրվա երիտասարդությունը շատ ոգևորված է և հնարավոր ամեն բան կանի հանուն արդարության, համաշխարհային խաղաղության և բարեկամության իր պայքարում: Յուրաքանչյուր երկրի երիտասարդություն կարող է ամբողջությամբ փոխել այդ երկրի հայացքները: Այսօրվա երիտասարդությունը ներկայացնում է նոր սկիզբ, լայն մտահորիզոն ունեցող մարդկանց մի նոր սերունդ, ում համար անհնար ոչինչ չկա: Այդպիսին ես նաև դու, գրչի իմ սիրելի՝ ընկեր: Շնորհակալ եմ լայնախոհ ու ընդունող լինելու համար: Այն, որ կարողում ես խաղաղության մեր նամակները, նշանակում է, որ դու մի քայլ առաջ ես: Անհամբեր կսպասեմ քո պատասխանին:

Անկեղծորեն քո՝

Միլենա

Միրելի՛ Միլենա,

Նամակդ ընթերցել ու տարբեր զգացմունքներ եմ ապրել: Այդ զգացմունքներից էր ուրախությունը, որ 16-ամյա երիտասարդն այդքան խաղաղասեր է, մյուս կողմից ավստոսացի, որ գովերգում ես քո ազգին ու ժողովրդին: Այժմ այս նամակի մեջ կբացատրեմ քեզ իմ զգացմունքները:

Միլենա, ես ապրում եմ Բաքվում, ադրբեջանցի եմ: Սակայն եթե իմ ինքնությանն ուզենաս կարգավիճակ տալ, ես բռնի տեղահանված (թարգ. – ներքին տեղահանված) եմ: Ժամանակին ընտանիքս բռնի կերպով վտարվել է իր հողերից: Չեմ ցանկանում խոսել այդ միջադեպի և ոչ մի պատճառի մասին: Որովհետև ես այդ կարգավիճակից ու քո հայ լինելուց առաջ, որպես Աստծո կողմից արարված էակ՝ ցանկանում եմ խոսել խաղաղությունից ու մարդկային արժեքներից: Նամակների մեջ ինձ հատկապես գրավել է քո նամակը, որովհետև 16 տարեկանում խաղաղություն երազելն ու ապագայում առանց որևէ տարբերություն դնելու՝ ցանկացած վիրավորի օգնելու պատրաստակամությունդ ինձ շատ է ուրախացրել: Քեզ խնդրում եմ, եթե խաղաղություն ես ցանկանում, այն ամբողջ սրտով ցանկացիր: Երբ զգաս խաղաղությունը, եղի՛ր ուղղակի Միլենա, ոչ թե հայ ազգի ներկայացուցիչ: Ես էլ եմ դա անում: Երբ մեր պետություններին, ամբողջ աշխարհին խաղաղություն եմ մաղթում, դառնում եմ ուղղակի մի աղջնակ, որը ցանկանում է տեսնել խաղաղություն ու օգնել, որպեսզի խաղաղություն լինի: Այդ ժամանակ արդեն փորձում եմ մոռանալ ազգային ինքնությունն ու տեղի ունեցած դեպքերը:

Շատ ուրախալի է, որ նույն կապույտ երկնքի տակ ես ու դու երկու կողմերի համար նույնիսկ ամբողջ մարդկության համար երջանիկ և խաղաղ կյանք ենք մաղթում: Արի՛ երկուսս ուղղակի որպես Մենք,

որպես Ես ու Դու, ձգտենք դեպի խաղաղություն: Ամբողջ մարդկային արժեքները, արդարությունը, մարդասիրությունը, ստեղծված եսերից, ազգային ինքնությունից վրեժխնդրությունից ու ատելությունից ավելի կարևոր են: Այս նամակը ողջ պատասխանատվությամբ եմ գրում և մաղթում, որ երկուսս ընդմիշտ մեր սրտերում պահենք խաղաղություն արժեքը: Կա մեկ բան, որ ցանկանում եմ չմոռանա: Դու ինձ համար հայ Միլենան չես: Դու ինձ համար 16 տարեկան խաղաղության ջատագով, բարի նպատակներ ունեցող, գթասիրտ Միլենան ես, և մաղթում եմ, որ միշտ մնաս այդպիսին:

Հարգանքներով՝

Խաղաղության ձգտող երիտասարդ մի աղջնակ՝ Կունել

## Արայիկ – Թողրուլ

Բարև՛, սիրելի՛ և հարգարժան՛ ընկեր,

Ես էլ քեզ նման բարի և խաղաղասեր երիտասարդ եմ և կուզեի քեզ ծանոթացնել իմ պատմությանն ու իմ կարծիքը հայտնել մեր երկրների հարաբերությունների և խնդրի լուծման վերաբերյալ:

Ես ծնվել եմ արցախցու ընտանիքում, և իմ հայրը մասնակցել է Արցախյան կռիվին: Մեր ընտանիքում միշտ հակաադրբեջանական տրամադրություն էր և մթնոլորտ: Այդ ամենը ավելի խորացավ ապրիլյան դեպքերի ժամանակ, երբ ես գինվորական ծառայության մեջ էի: Ծառայությունից հետո ես պետք է գնայի Մոսկվա՝ հորեղբորս մոտ, և այդ այցը իմ մտածելակերպի վրա շատ ազդեց: Այնտեղ ես ծանոթացա իմ եղբոր ընկերոջ հետ, որն Ադրբեջանցի էր: Նրա հետ շփվելով և ճանաչելով նրան՝ ես հասկացա և գիտակցեցի, որ մեր երկրները իրար չեն սիրում միայն պետական մակարդակով և կատարում են ամեն տեսակ քարոզչություն, որ թշնամանք սերմանեն հասարակ ժողովրդի մեջ:

Բայց չե՞ որ ոչ մեկիս էլ պետք չէ, որ մեր ընտանիքներում զոհեր լինեն, հակառակը՝ դու, ինչպես և ես, մեր կյանքի ծաղկուն տարիքում ենք. մեր ապագան մեր ձեռքերում է, և ոչ մեկիս խաղաղությունից բացի ոչինչ պետք չէ, և եթե այդպես է, ինչու՞ չպայքարենք հանուն խաղաղության: Մի պահ պատկերացրու, որ մենք բարեկամ երկրներ ենք, ինչպես եղել է տարիներ առաջ, երբ մենք դեռ չէինք ծնվել: Այն ժամանակ ամեն ինչ հրաշալի էր, համերաշխ և խաղաղ, որովհետև մեզ

չէր բաժանում ոչ մի փշալար, և դա է այն պատճառը, որ մենք նորից ձգտենք դրան ու պայքարենք բոլոր հնարավոր խաղաղ եղանակներով:

Ես իմ բոլոր ընկերներին հորդորում և համոզում եմ, որ նրանք նույնպես պայքարեն խաղաղ եղանակով և համոզված եմ, որ դու էլ կանես նույնը և կանես ևս մի քայլ դեպի խաղաղ ապագան:

Միտով և հարգանքով՝

Հայ երիտասարդ՝

Արայիկ

\* \* \*

Ողջուն, Արայիկ,

Ինչպե՞ս ես: Ինչպե՞ս է անցնում կյանքը:

Կարդացել եմ խաղաղության քո մեսիջը. չնայած որոշակի նրբություններ կան՝ դա չի նշանակում, որ ես խաղաղություն չեմ ուզում, ընդհանրապես յուրաքանչյուր մարդ ցանկանում է, որ իր երկրում խաղաղություն ու անդորր լինի: Ո՞ր մի քույրը կցանկանա, որ իր եղբայրը գոհվի: Կամ ո՞ր մի մայրը կցանկանա տեսնել իր որդու անշունչ մարմինը: Ցանկացած երկիր, որը ցանկանում է, որ խաղաղություն հաստատվի, առաջին հերթին պետք է իր հարևանների հետ խաղաղության մեջ ապրի: Երկիրը կառուցողը նրա ժողովուրդն է, ժողովուրդը առաջին հերթին սկսում է ապրել երկրի ներսում առկա փոքրաթիվ ժողովուրդների հետ, այնուհետև հարևանների և մնացած երկրների հետ: Քեզ հետ անկեղծ կխոսեմ, ես էլ եմ խաղաղություն սիրում: Չեմ ուզում, որ ոչ մի կողմում մարդիկ արտասուք թափեն, ախր ես կոսմոպոլիտ մտածելակերպ ունեցող աշխարհաքաղաքացի

եմ: Քեզ մի գաղտնիք ևս ասեմ (ճիշտ է, մինչև այս գաղտնիքը քեզ հասնելը շատերը կընթերցեն). ես իմ կյանքը մի հայ աղջկա եմ պարտական:

Նա գիտեր, որ ես ադրբեջանցի եմ, իսկ նա՝ հայ, սակայն ինձ դուրս է բերել Սև ծովից, որտեղ ես խեղդվում էի, և շունչ է տվել ինձ: Ռեժիմի և մի շարք մարդկանց պատճառով ազգին չի կարելի ընդհանուր գնահատական տալ:

Հավիտենական խաղաղության մաղթանքով՝

Թողորուլ

## Դիանա – Գրող

Ողջուն՝ իմ սիրելի՛ ընկեր,

Ես Դիանան եմ, գրում եմ քեզ քո հարևան երկիր Հայաստանից: Ես 20 տարեկան եմ, սովորում եմ լեզվաբանական համալսարանում և ցանկանում եմ դառնալ անգլերենի մասնագետ: Ինչպես յուրաքանչյուր ոք, ես նույնպես լի եմ շատ մտքերով, ցանկություններով և նպատակներով, բայց այդ ամենից գատ՝ ես ունեմ մի մեծ և կարևոր երազանք. դա խաղաղությունն է: Յուրաքանչյուր ոք տարբեր կերպ է պատկերացնում այն, ամեն մեկի համար այն տարբեր արժեք ունի, բայց մի բան հաստատ է, անկախ տարիքից, սեռից և ազգային պատկանելությունից՝ ամեն մարդ էլ ուզում է խաղաղ երկնքի տակ ապրել: Ինձ համար խաղաղությունը իմ և քո բարեկամությունն ու մեր երկրների համերաշխությունն է: Թե՛ ես, թե՛ դու դպրոցական տարիներին անցել ենք մեր երկրների պատմությունները և երկուսս էլ լավ գիտենք, որ թշնամանքից և պատերազմից գատ՝ մենք նաև սիրով և եղբայրությամբ լի տարիներ ենք ունեցել:

Ճիշտ է, մենք մեր պատմության կրողներն ենք, մեր պատմությունն է ձևավորել և ձևավորում մեզ, մեր ազգությունները և կենցաղը: Ես, դու կամ այլ ոք չի կարող ջնջել այն կամ մոռացության մատնել շատ ցավալի դեպքեր, որոնք, ըստ իս, ոչ ոքի ոչինչ չեն տվել, այլ իսկ են բազմաթիվ մարդկային կյանքեր: Հողի համար պայքարում, տարածքներ գրավելով կամ կորցնելով, այսինքն՝ այդ ամենի մեջ հաղթանակներ կամ պարտություններ տանելուց բացի՝ կա մեկ կարևոր հարց. դա մարդկանց կյանքերն են, որոնք լեցուն լինելով նպատակներով, կյանքով և ապրելու ցանկությամբ, հանկարծ

ոչնչանում են և հեռանում մեզանից անվերադարձ: Հիմա իմ և քո, այսինքն՝ մեր սերնդի հերթն է պայքարելու, բայց ես ցանկանում եմ, որ մեր պայքարը տարբերվի մնացածից, ես ուզում եմ, որ մեր զենքը լինի մեր երկրների անցյալի սխալները և մեր սերնդի լավատեսությունը:

Անշուշտ, հեշտ չէ հարցը լուծել հակառակ կողմից՝ առանց զենքի և հակամարտության, բայց մեր սերունդը, ով ապրում է տեխնիկայի դարում, ուր ամեն ինչ արագ փոփոխվում է և տեղեկատվությունը՝ շատ արագ տարածվում, հնարավոր և կարևոր է, որ այս հարցը բանակցային, խաղաղ ճանապարհով լուծենք: Ես ուզում եմ, որ իմ, քո, մեր բոլորիս նպատակներն ու խաղաղ ապրելու ցանկությունը դառնան հիմք մեր պետությունների և կառավարությունների միջև բարիդրացիական հարաբերություններ հաստատելու համար: Մեր երկրներն ունեն տնտեսություն, կրթական համակարգ, մշակույթ և այլ ճյուղեր, որոնք կարևոր են յուրաքանչյուր երկրի զարգացման համար, բայց դրանք տուժում և ետին պլան են մղվում բանակի լարված վիճակի պատճառով: Գումարները, որոնք ծախսվում են զինամթերքի վրա, կարող են ծախսվել տնտեսության զարգացման համար, Ղարաբաղը կարող է լինել կապող օղակ մեր երկրների համար, որի միջոցով մենք կզարգացնենք առևտուրը, զբոսաշրջությունը և երկու երկրների ռեսուրսները կծառայեն իրենց նպատակներին: Մենք հարևան պետություններ ենք, մենք չենք կարող միմյանցից անկախ ապրել, բայց կարող ենք միմյանց վրա հենվելով՝ ավելի առաջ գնալ և զարգացնել մեր երկրների վիճակը: Լավ դաշնակից ունենալը լավագույն հիմքն է հզոր և բարեկեցիկ պետություն ունենալու համար. եկել է այդ պահը և մենք քայլ առ քայլ կարող ենք դառնալ միմյանց համար դաշնակից երկրներ: Հերթը մերն է պայքարելու. արի՛ անենք դա՝ հիմք ընդունելով խաղաղությունն ու համերաշխությունը: Անհամբերությամբ կսպասեմ քո նամակին:

Սիրով՝

Դիանա

Բարև՝ սիրելի՛ Դիանա,

Քեզ գրում եմ Բաքվից, այն Բաքվից, որին դուք ճանաչում եք իբրև նավթի երկիր ու հարստությունների թագավորություն: Կցանկանայի եթե քո շրջապատում երբևէ Բաքվում եղած ծանոթ լինի, նրան հայտնես, որ Բաքուն շատ փոխվել ու գեղեցկացել է... հույս ունեմ, որ Բաքվի ներկայիս վիճակը թեկուզ մի քիչ կարողացա ներկայացնել քեզ: Ես էլ քեզ պես 20 տարեկան եմ: Իրավաբան եմ դառնալու: Ինչպես դու, ես էլ ունեմ արժեքներ, որոնցով առաջնորդվում եմ: Դրանց մեջ ամենագլխավորը մարդն է: Ես ամեն ինչ անում եմ, որպեսզի իմ նպաստն ունենամ այն միջավայրի ստեղծմանը, որտեղ մարդը կապրի հանգիստ, խաղաղության մեջ և կապաշտպանվեն մարդու իրավունքները: Քո նամակում պատմել էիր նախկինում մեր ժողովուրդների բարեկամական ու եղբայրական կապերի մասին: Իրականում հաճելի է դա լսելը: Ճիշտ է: Ծնողներիցս և ուսուցիչներիցս լսել եմ, որ կար մի ժամանակ, երբ կայինք միայն «մենք», դա մինչև 1988 թվականն էր: Սակայն այժմ կանք մենք և դուք: Մենքը ոչնչացնողը, մեզ ու ձեզ ստեղծողը եղել է պատերազմը: Պատերազմն այնպիսի սարսափելի երևույթ է, որ մեր հիշողությունների մեջ անջնջելի հետքեր է թողել: Էժանացրել է մարդու կյանքի արժեքը: Սովորական է դարձրել մահը:

Չնայած այս ամենին՝ շատ ուրախալի է, որ ժողովուրդների մեջ, հատկապես երիտասարդների մեջ կա հույս, որ հակամարտությունը խաղաղ ճանապարհով կկարգավորվի: Իհարկե, այնպիսի խաղաղություն, որը կլինի արդար: Մեր ժողովուրդները դատապարտված են մոտ ժամանակներում և ապագայում համատեղ հարևանական հարաբերություններով ապրելու խաղաղ պայմաններում, և սա անխուսափելի է: Կարծում եմ, որ

տարածաշրջանում խաղաղության ձեռքբերումը երկու երկրների համար կարող է լինել առաջընթացի ու զարգացման մեկնարկ:

Պատերազմը գրկում է մեզ հաջողություններ գրանցելուց և մեր ընտանիքներին թախիծ ու մահվան բոթերի ցավ է բերում: Որպես քո ուղարկած նամակում խաղաղության կոչի պատասխան՝ ես էլ եմ միանում քեզ և առաջնորդվում խաղաղության ու արդարության վերականգնման ուղղությամբ աշխատելու սկզբունքով:

Ամենահաճելի մաղթանքներով, միշտ արդարություն փնտրող,  
իրավաբանության ուսանող՝

Գրող

## Լիդիա – Գյուլշան

Բարև՛, սիրելի՛ հարևան,

Ես Լիդիան եմ: Նամակս սկսեմ հարցով. «Ի՞նչ ես հասկանում խաղաղությունն ասելով»: «Ի՞նչ է խաղաղությունը» հարցին կարելի է բազում պատասխաններ տալ, բայց կուզեմ քեզ նաև իմ տեսակետը ներկայացնել: Մեզ այժմ բաժանում են հարյուրավոր կիլոմետրեր, տարբեր կրոնական դավանանքներ, հակադիր քաղաքական հայացքներ, բայց մի բան հստակ է. խաղաղության լեզուն ամբողջ աշխարհում նույնն է: Չնայած մեր այսքան տարբերություններին՝ մենք ունենք մի մեծ նմանություն. մենք բոլորս էլ ՄԱՐԴ ենք: Մենք բոլորս էլ մարդիկ ենք, որոնք ցանկանում են ապրել առանց տագնապի, թշնամանքի, իրենց առօրյա կյանքով: Մարդ լինելը հեշտ է, բարդ է մարդկային կամք դրսևորել միջազգային այսպիսի կոնֆլիկտների լուծման համար:

Մի հետաքրքիր հանգամանք պատմեմ հայ իրականության մասին: Բոլոր հայ երեխաները իրենց ամանորյա մաղթանքներում պարտադիր խաղաղություն են մաղթում ամբողջ աշխարհին: Ես ինքս այդպիսի նամակներ գրել եմ: Հետաքրքիր է, որ երեխաները խաղաղությունը դիտարկում են որպես անիրականա՜նալի բաղձանք, բայց հենց ամենամեծ խաղաբարները մեր փոքրիկներն են:

Հեղափոխությունը շատ բան փոխեց մեր մեջ՝ մեր մտածելակերպը, աշխարհայացքը: Ավելի քան երկու ամիս համառ պայքարից հետո մեր երիտասարդները կարողացան ապացուցել, թե ում ձեռքում է

գտնվում երկրի ապագան: Այժմ այդ նույն երիտասարդները պատրաստ են շրջանցել ատելության ցանկապատը և տարածել խաղաղության իրենց ալիքը:

Գիտեմ՝ մեկ նամակով հայ-ադրբեջանական հակամարտությունը դժվար թե լուծում ստանա, սակայն մենք կարող ենք դրական մթնոլորտ ստեղծել իրավիճակի հետագա լուծման համար: Մենք կարող ենք լինել այն մարդիկ, որոնք վերջ կդնեն ատելության և բռնության քարոզամեքենային: Քաղաքական շահերը չպետք է գերադասվեն մարդկային հարաբերություններից:

Եթե փորձենք ժամանակի մեքենայով մի քանի տասնամյակ հետ գնալ, մենք կտեսնենք, թե ինչպես էին մեր ազգերը բարեկամաբար բնակվում միմյանց հարևանությամբ: Շատերը մինչև այժմ հիշում են իրենց ադրբեջանցի ընկերներին: Ամեն ինչ փոխվեց պատերազմից հետո: Կարելի է ասել, որ միայն պատերազմն է մարդկանց համար ամեն ինչ տարանջատում սև և սպիտակ գույների: Մենք կարող ենք լինել այն մարդիկ, որոնք կփոխեն այս կարծրատիպերը: Մենք պետք է իրավիճակը դիտարկենք ոչ միայն մեզ համար ճիշտ եռանկյունու դիտակետից, այլ պետք է դուրս գանք այդ եռանկյունուց և նայենք ավելի հեռուն քան մենք կարող ենք: Մենք կարող ենք կերտել մեր խաղաղության ուղին, չէ՞ որ աշխարհը փոխվում է մեզանով:

Հարգանքներով՝

Լիդիա

Ողջուն, Լիդիա,

Շնորհակալ եմ նամակիդ համար: Ես խաղաղության ջատագով եմ: Դու էլ, ես էլ գիտենք, թե ինչ է խաղաղությունը: Այսպես ձևակերպենք. խաղաղությունն այն ուղին է, որը մեզ տանում է դեպի բարեկեցություն: Իսկ ո՞վ խաղաղություն չի ցանկանա: Կարծում եմ, բոլորը համաձայն են խաղաղությանը: *Խնդիրը դեպի դրան տանող ճանապարհի մեջ է:*

Ես շատ եմ սիրում իմ Ադրբեջանը: Սակայն նաև հասկանում եմ, որ մեր խաղաղության ուղին շատ խճճված է: Չգիտեմ, լսե՞լ ես արդյոք թիթեռի էֆեկտի մասին. թե ոչ, եթե կարճ ասեմ, դա փոքր քայլերով մեծ էֆֆեկտ ստեղծելն է: Ես հավատում եմ, որ մենք երբևիցե կհասնենք խաղաղության: Ինքս ինձ եմ հավատում: Ես կանեմ ինձնից կախվածը: Առողջ խաղաղություն կառուցելու համար երկու կողմերն էլ պետք է աշխատեն: Գիտե՞ք, անցել է ավելի քան 30 տարի, սակայն իմ բարեկամները այն սարսափը, հողերի գրավումը չեն կարողանում մոռանալ: Չեն կարողանում մոռանալ ոչ թե նրա համար, որ այնտեղից ինչ–որ մեկը պետք է դուրս գա, այլ նրա համար, որ նրանք այնտեղ հիշողություններ և հողին տված խոստումներ ունեն: Չմոռանանք նաև, որ մեր ժողովուրդները համատեղ ապրել են բարեկեցիկ կյանքով, դա միշտ չէ, որ եղել է: Սակայն ցուցիչն այն է, որ եղել են կայծեր:

Էմպատիա եմ ապրում, երբ սահմանում երկու կողմից էլ մահվան մասին լուր եմ կարդում, երբ լսում եմ երազանքները չիրականացած երիտասարդների մասին, երբ գիտեմ, որ չեմ կարող վերադարձնել արտասովոր մորը իր նահատակված որդուն: Քեզ ու ընկերներիդ այնպիսի ԱՐԴԱՐՈՒԹՅԱՆ եմ կոչ անում, որը չի նեղացնի և ոչ մի

կողմի: Այնպիսի արդարություն, որ իմ համերկրացիները  
կարողանան իրենց հողի հոտը շնչել այնուհետև հեռանալ կյանքից:  
Գիտե՞ս թե որքան տարիքով մարդիկ են մահացել, առանց  
Ղարաբաղը տեսնելու, բայց ի՞նչ արած: Չեմ կարծում, որ  
խաղաղության հասնելը ուտոպիա է... Մենք կրկին մեր հարազատ  
Ղարաբաղում միասին և երջանիկ կարող ենք ապրել: Երբեմն պետք  
է մեր ցանկություններին խորությամբ մոտենանք և հավատանք:

Մինչ խաղաղության վերահաստատում և Ղարաբաղում շղթայված  
սահմանների բացում:

Ցտեսություն,

Գյուլշան

## **Ջեմմա – Թուրան**

Միրելի՛ ընկեր,

Ես քեզ գրում եմ մեծ հույսով, որ մի օր կհանդիպենք, և քո դիմաց կանգնած՝ կասեմ այն, ինչ հիմա գրում եմ քեզ: Նախ ասեմ՝ Ջեմման եմ՝ 19 տարեկան:

Երբ կարդաս նամակս և փորձես նկարել ինձ քո մտքում, պարզապես պատկերացրու ինձ զանգուր մազերով: Հենց ես եմ՝ խուճուճ Ջեմման:

Ուզում եմ, որ իմանաս մի բան: Ես աղբբեջանցի հրաշալի ընկերներ ունեմ և ո՛չ կրոնը, ո՛չ ազգային պատկանելությունը և ո՛չ էլ հարյուրավոր կիրմետքերը երբևէ չեն խանգարել մեզ մնալ լավ ընկերներ:

Գիտեմ, որ ինձ պես դու էլ հավատում ես, որ մենք կարող ենք խաղաղ ապրել: Մեր ապագան կախված է իմ, քո ու մեզ նման շատ երիտասարդներից:

Գիտե՞ս, գիտակցական կյանքումս միշտ ցանկացել եմ նման մի ծրագրի մասնակցել և հիմա, երբ ունեմ այս հնարավորությունը, հույսով և մեծ սիրով եմ քեզ գրում: Ես քեզ նման երիտասարդ եմ՝ լի խաղաղություն հաստատելու ցանկությամբ:

Երկար եմ կարդացել, փորձիրել պատմության էջերը՝ հասկանալու համար խնդրի սկիզբը, պատճառները: Մի պարզ բան եմ հասկացել, այս կոնիլը ուժով երբեք ավարտ չի ունենա: Մեզ պետք են մարդկային

պարզ զգացմունքներ՝ սեր, խիղճ, կարեկցանք, հասկանալու և լսելու կարողություն: Ահա խնդրի լուծումը: Սրանք մարդկային զգացմունքներ ու հատկություններ են, որ կան յուրաքանչյուրիս մեջ: Ինչպես արդեն ասացի, ես մեծ հավատ ունեմ իմ, քո ու մյուս բոլոր երիտասարդների խաղաղ ապրելու ցանկության հանդեպ: Ես հավատում եմ, ճիշտ քեզ նման: Շնորհակալ եմ ցանկություններս կիսելու համար: Մի օր, համոզված եմ, մենք կծաղկեցնենք մեր միջև կանգնած փշալարերը...

Ջեմմա

\* \* \*

Բարև, սիրելի՛ Ջեմմա,

Նախ շնորհակալություն եմ հայտնում ուղարկածդ նամակի ու խաղաղության ուղերձի համար: Անունս Թուրան է: Ապագա տնտեսագետ եմ: Քո և մյուս նամակները ընթերցել եմ և ուրախ եմ, որ թեկուզ հեռվից ծանոթացել եմ ձեզ պես ինտելեկտուալ երիտասարդների հետ: Իսկ այժմ անցնենք հիմնական թեմային: Նախ այս հակամարտության ժամանակ երկու կողմից կորուստները չափից շատ են եղել, և դրա կարիքը ամենևին էլ չկար: Հորեղբորս որդին՝ Սամիր Ադաևը, այս հակամարտության հետևանքով նահատակվել է 2010 թ. մարտի 23–ին, և դա ինձ ու իմ ընտանիքի համար մեծ հարված էր: Իհարկե, սկզբնական շրջանում ինձ մոտ ձեր հանդեպ ահռելի ագրեսիա էր առաջացել, այնուհետև տեսա, որ և՛ հայ երիտասարդի, և՛ աղլրբեջանցի երիտասարդի մահը անտեղի է: Եթե այդ երիտասարդները ապրեին, գուցե այժմ ավելի լավ գաղափարներ կստեղծեին, ինչ–որ բան կհայտնագործեին, իրենց նպաստը կբերեին գիտությանն ու հասարակությանը: Ցավոք, եղածն արդեն եղել է, սակայն թող այլևս չլինի, վստահ եմ, որ ո՛չ դուք, ո՛չ էլ մենք չենք ցանկանում, որ պատերազմ ու մարդկային կորուստ լինի: Երկրորդ

խնդիրն այն է, որ այս հակամարտությունը երկու երկրների համար չափազանց մեծ ծախսերի պատճառ է դարձել: Եթե բանակին հատկացված միջոցները տրամադրվեին կենսամակարդակի բարձրացմանը, կրթությանը, բժշկությանը, մեր քաղաքացիներն ավելի բարձր կենսամակարդակ կունենային: Ես էլ ձեզ պես խաղաղություն եմ ուզում, և ուզում եմ, որ արդեն վերջ դրվի երկու երկրների համար ստեղծված այս խաղին: Այս խաղը շատ զոհ ու ահռելի միջոցներ է տարել, սակայն բավական է արդեն:

Ժամանակն է՝ կանգնեցնենք այն, մենք պետք է ի չիք դարձնենք այս խաղը շարունակել տվող բարձրաստիճան պաշտոնյաների պլանները, նրանց նպատակն է այս կերպ լցնել իրենց գրպանները:

Ինձ համար քո ազգությունը կարևոր չէ: Ես քեզ ճանաչել եմ ոչ թե որպես 19-ամյա հայ երիտասարդ Ջեմմայի, այլև ճանաչել եմ որպես խաղաղասեր, մարդասեր և անկեղծ սրտով Ջեմմայի: Հույս ունեմ՝ մի օր կհանդիպենք ու այս մտքերը փոխադարձաբար կքննարկենք միմյանց հետ:

Հարգանքով՝

Խաղաղություն կամեցող երիտասարդ՝ Թուրան

## Շուշանիկ – Ֆաթիմա

Բարև՛, իմ սիրելի՛ ընկեր,

Կցանկանայի կիսվել քեզ հետ խաղաղության հետ կապված իմ պատկերացումներով: Խաղաղությունը կյանքի շարժիչ ուժն է. այն հիմնված է երջանկության և ներդաշնակության վրա: Աշխարհում խաղաղություն տարածելու համար առաջին հերթին պետք է խաղաղություն լինի մարդկանց մտքերում: Եթե միտքը լի է գայրություն, ապա շատ դժվար է խաղաղության հասնել: Ես կարծում եմ, որ մեզանից յուրաքանչյուրը պետք է ձերբագատվի իր ներսի ատելությունից: Քանի որ պատերազմը մեր մեջ է, ոչ թե դրսում: Մենք երբեք չենք կարող խաղաղություն գտնել արտաքին աշխարհում, քանի դեռ խաղաղություն չենք հաստատել մեր իսկ ներսում: Մեզ պետք չի գա խաղաղություն տարածող ոչ մի կազմակերպություն, եթե մենք չենք կարող խաղաղ լինել մեր սեփական Ես–ի հետ: Աշխարհում գոյություն ունի նույնիսկ Խաղաղության Նոբելյան մրցանակ սակայն մինչ օրս խաղաղություն չի տիրում աշխարհում: Ոչ մի նյութական արժեք չարժե նրան, որ մարդ կորցնի իր խաղաղությունը: Մայր Թերեզան ասել է «Ես երբեք չեմ միանա պատերազմի դեմ կազմավորված շարժմանը: Ինձ կանչեք խաղաղության շարժման ժամանակ»: Ուստի եկեք կազմակերպենք մեր շարժումը, որը տանում է դեպի խաղաղություն: Յուրաքանչյուրը խաղաղությունը տեսնում է իր աչքերով: Ես կարծում եմ, որ այս փոքր նամակն իրականում ունի մեծ նշանակություն: Ասում եմ, պատերազմ սկսելը հեշտ է, ավարտելը՝ բարդ: Եկեք կոտրենք միասին այս կարծրատիպը և ցույց տանք աշխարհին, որ մենք կողմ ենք միայն ու միայն խաղաղությանը: Ես

Շուշին եմ և ես հայ եմ: Ես որոշոցի վստահել ու հավատալ միայն  
խաղաղությանը: Դու էլ փորձիր:

Շուշանիկ

\* \* \*

Բարև, Շուշանի՛կ,

Ինչպե՛ս ես: Խաղաղության վերաբերյալ Ձեր ուղարկած նամակն  
ընթերցեցի և կարող եմ ասել, որ մեր մտքերն ու մի շարք  
արտահայտություններ համընկնում են: Այո՛, խաղաղությունը  
հակամարտությունների՝ առանց բռնության կարգավորումն ու կյանքի  
որակի բարելավվումն է, և ինչպես գիտեք, խաղաղ իրավիճակը  
խախտվում է պատերազմի հետևանքով: Օրինակ՝ խաղաղությունը մի  
շրջան է, երբ բոլորը երջանիկ են և մարդիկ միմյանց հետ չեն  
պատերազմում: Սիրտը միշտ կուզի, որ խաղաղություն ու անդորր  
լինի, որ ավարտվեն պատերազմները, որ մայրերի սրտերը տազնապի  
մեջ չլինեն, որ սահմանամերձ շրջաններում բնակվողները գիշերը  
կարողանան հանգստություն գտնել: Ես կողմ եմ, որ ապագայի  
սերունդները խուսափեն ասելուց, թե նա քո թշնամին է, այլ ասեն՝ նա  
քո ընկերն է, կիսվի՛ր նրա հետ: Ինձ ուրախացրեց այն, որ դուք էլ ինձ  
հետ համակարծիք եք:

Խաղաղությամբ լեցուն աշխարհում ապրելու հույսով լի՝ քո սիրելի  
ընկերոջից՝

Ֆաթմա

# AZƏRBAYCAN DİLİ

## BÖLMƏSİ



## TƏSİSÇİNİN ÖN SÖZÜ

*Əgər sürətlə getmək istəyirsənsə, tək get,  
uzağa getmək istəyirsənsə, birlikdə get.*

Afrikalıların atalar sözü

Körpələr dünyaya qəlblərində nifrətlə gəlmirlər. Nifrəti öyrənirlər. O, öyrədilir. Nifrət alətdir ki, ondan iqtidara malik olanlar tərəfindən qorxu saçmaq üçün istifadə edilir. Qorxmuş insanlar daha asan idarə olunurlar, sülh isə təhrif olunaraq səmərəsiz laqeydlilik kimi qələmə verilir, hərçənd, əslində o, cəmiyyətin sağlam bünövrəsidir. Beləliklə, sülh təcrübəsi, müəyyən kontekstlərdə inanılmaz cəsarət tələb edə bilər. Münaqişənin səs-küyü o qədər güclənir ki, transformasiyanın addımlarını qarşımızda görə bilmirik, sülh nitqləri istənilən bombadan daha bərk səslənə bilər.

2018 və 2019-cu illərdə Sülh Naminə Məktublar proqramının qrupları, Ermənistan ilə Azərbaycanda 52 gənc, bağlı sərhədlərin hər iki tərəfində fəvqəladə addım atıblar. Hər iki tərəfdə militarizasiya və nifrət ifadələrinə baxmayaraq, bu fərdlər, alternativ yol cızıblar. Onlar sükutdansa dialoqu tərcih ediblər. Onlar nifrətdənsə ümidi seçiblər. Müharibə vəhşiliyindənə, humanizimi seçdilər. Məktublar Ermənistan və Azərbaycan hökumətləri arasındakı münasibətləri gərginləşdirən problemləri həll etməyəcəkdir. Çağrışlar çoxtərəflidir. Dağlıq Qarabağın (DQ) statusu aysberqin görünən tərəfidir, hansı ki, ərəzi mübahisəsi, və hərbi döyüşlərə çevrilməmişdir və ən pisi, hər tərəfdən günahsız mülki şəxslərin ölümünə səbəb olmuşdur. Nəzərə alanda ki, xarici güclər bu nifrətdən öz mənafeləri üçün istifadə edirlər, kin sarsıdıcıdır.

Həm Ermənistan, həm Azərbaycan nəinki birlikdə qalib gəlməyə əksinə kiməsə qarşı nəysə yaratmağa səy göstərirlər. Bu dinamikayla, kompromisə getmək imkanımızı itiririk: hər iki tərəf bir az itirməklə qarşılıqlı əməkdaşlıq əldə edir. Kompromis olmayınca münaqişə böyüyür, və hər iki tərəfdə itkiləri artır. Bununla birlikdə, məktublar hökumətlərin və hərbiçilərin təmin edə bilmədiklərinə nail ola bilər, bu, – münaqişənin transformasiyası yolunda ilk addımdır. Ermənistan və Azərbaycan əhalisinin, eyni zamanda Dağlıq Qarabağın erməni və azərbaycanlı icmasının bir–biri ilə ünsiyyət qurmağa haqqı vardır. Özlərini müharibəyə həqiqi hərbi xidmət vasitəsi ilə həsr etməyə məcbur etməyi kimi, onların sülhə töhfə verməyə ixtiyarı da vardır. Onlar elə bir həyata layiqdirlər ki, miras qalmış düşmənçiliklə və bir–biri ilə mübahisə edən hökumətlər tərəfindən formalaşdırılmamışdır. Onlar ahəngli bölgədə yaşamağa layiqdir. Vahidlikdən qaynaqlanan hər şeyi birləşdirə biləcək imkanları olmalıdır.

Məndə cavablar yoxdur. Lakin Sülh Naminə Məktublar proqramı işirakçıları tərəfindən yazılan gözəl səhifələrdə transformasiya toxumları əkilib. Mən bu gənclərdən çox şey öyrənmişəm, əminəm ki, kitabı oxumaq üçün özündə yetərincə cəsarət tapan hər kəs anlayacaq ki, niyə başqa, daha yaxşı yol mövcuddur. Əziz oxucu, ümidvaram ki, bu səhifələr mənə maarifləndirici olduğu qədər sənə üçün də olacaq.

*Raffi Coy Vartanian*

## ÖN SÖZ (AZƏRBAYCAN DİLİ)

*“Göy qurşağının sonunda bir qazan qızıl” və ya  
“Çalışmaq, axtarmaq, tapmaq və təslim olmamaq”.*  
Lord Alfred Tennyson, “Ulysses”

Bu yaxınlarda sülh konsepsiyası üzrə işləmişəm, çalışanda çox məyus oldum. Mən istədim öyrənəm – erməni və azərbaycan cəmiyyətlərində mövcud olan həddindən artıq yüksək səviyyədə düşmənçilik propaqandasını nəzərə alaraq, biz haradayıq. Öz cəmiyyətlərimizdə bir-birimizi rədd etməyimizin yüksək səviyyəsini etdiyimizdə, müharibə böhtanı nə qədər uğurlu olub. Məhdud resurslarla buna müqavimət göstərmək mümkündürmü? Buna görə də, başlıqda aşağıdakı düsturu aldım: münaqişənin sülh yolu ilə həlli – gerçəkləşməyəcək xəyaldır, yoxsa – Mübarizə aparmaq, axtarmaq, tapmaq və təslim olmamaq! Odur ki, sülh naminə mübarizə məqsədyönlü və yaxşı təşkil olunmuş olmalıdır.

Suala səmimi cavab vermək lazımdır: sülh istəyənlər zəifdirmi? Müharibə edənlərdən zəifdirmi? Səhvlərimiz haradadır? Nə etmək olar? Bizdən nə asılıdır və beynəlxalq təşkilatlardan və dünya siyasətçilərindən nə asılıdır? Haraya gedəcəyimizi bilmək üçün cavabı tapılmalı olan bir necə sual var idi.

«Камо грядеши» (tərcüməsi: «Hara gedirsən?»). «Quo vadis?» (latınca). Məşhur polyak yazıçısı Henrik Senkeviçin şöhrət qazanmış kitabı belə adlanır. Həmin kitaba görə ədəbiyyat üzrə Nobel mükafatına layiq görülmüşdür. Bu kitab əsasında üç ekranlaşdırma mövcuddur. İstərdim ki, ədalətin zəfəri uğrunda mübarizə aparan hər kəs bu kitabı oxusun və ya heç olmasa filmi izləsin (2001–ci il). Orada Romada xristianlığın yaranma dövrü təsvir edilir, insanların imanlarına və idealları uğrunda

mübarizədə cəsarətli dözümlərinə görə dəhşətli təqibləri göstərilir. Kami Griadeshi, Quo vadis, hara gedirsən? Müqəddəs Kitaba görə, həvari Pyotr İsadan soruşdu. «Камо грядеши», «Quo vadis?», «Hara gedirsən?»

*Qurani-Kərimdə (ən-Nisa 4/114) deyilir: “Onların gizli söhbətlərinin çoxunda xeyir yoxdur. Xeyir ancaq sədəqə verməyi, yaxud yaxşılıq etməyi və ya insanlar arasında sülh yaratmağı əmr edən kimsənin söhbətindədir. Allahın razılığını qazanmaq üçün belə işlər görən kimsəyə (axirətdə) böyük mükafat verəcəyik!”*

Və mən Ermənistan və Azərbaycan gənclərinin iştirakı elədiyi Sülh Naminə Məktublar layihəsində azərbaycanlı iştirakçılarla görüşməyə və danışmağa dəvət edirlər. Təkcə müsbət mənada təəccübləndiyimi demək, heç nə söyləməmək deməkdir. O qədər səmimiyyət, bir-birimizi daha yaxşı tanımaq, bir-birimizə çatmaq, xalqları barışdırmaq üçün birlikdə işləmək istəyi!

Bizi – dünya fəalları adətən sadələvh romantik idealistlər adlandırırlar. Ölkələrini qəddarlığa və məhv olmağa, qaçqın, ölüm, yaralar, əlillik, girov, əsirlik, itkiyə aparən siyasi oyunlarda təcrübəli oyunçu olmaqdan daha yaxşı deyilmi?!

Təhlükələrə, inandırmalara, təhdidlərə baxmayaraq öz yolundan, münaqişənin sülh yolu ilə həllini tapmaqdan dönməyən dünya fəalları deyilmi?! Əgər az sayda və məhdud imkanları ilə müharibə tərəfinin saysız-hesabsız mənbələri ilə nəhəng sənayesinə qarşı çıxı bilirlərsə, ağıllı deyillərmi?!

Qarşılıqlı məqbul bir həll əsasında sülh yolu ilə münaqişənin ədalətli həlli üçün yorulmaz və tutarlı işlərinə sülhməramlılar qarşı çıxırdılar.

Əminik: Münaqişəni hərbi yolla həll etmək mümkün deyil. Müharibədə bir dəfə qazanmaq olar. İtirən tərəf həmişə qisas almaq istəyəcək.

Qarşılıqlı anlaşmaya əsaslanan ortaq bir həll münaqişənin son həlli ola bilər. Xalqların barışıqı zəruri bir əsasdır.

Sülhməramlılar münaqişənin həlli üçün qarşılıqlı məqbul bir variant hazırlamaq üçün intellektual potensiala malikdirlər. Qarabağ münaqişəsinin birgə razılaşdırılmış nizamlanması modelinin hazırlanması üçün nümunə kimi götürülə biləcək sevimli dünya örnəkləri də var. Bunun üçün gənc sülhməramlılar və tanınmış mütəxəssislər, beynəlxalq hökumətlərarası təşkilatlar və beynəlxalq QHT–lərlə birlikdə Azərbaycan və Ermənistan cəmiyyətlərinin səylərinin birləşdirilməsi tələb olunur. Biz hər kəsə müraciət edirik: Bir zamanlar silahlı, indi isə dondurulmuş Qarabağ münaqişəsinin sülh yolu ilə nizamlanması üçün bir prezident yaratmağımıza kömək edin.

Fürsətdən istifadə edərək, Sülh Naminə Məktublar layihəsinin müəlliflərinə və koordinatorlarına – İlkin Əliyevə və Raffi Vartanyana, Avrasiya Əməkdaşlıq Fondu, digər qurumlara və donor təşkilatlara belə bir yaxşı layihəni dəstəklədiklərinə görə və əlbəttə ki, bütün gənc iştirakçılara gözəl məktublar yazmaqla səmimilik, açıqürəklik və cəsarət göstərdikləri üçün təşəkkür edirəm. Onlar, şübhəsiz ki, azərbaycanlılar və ermənilər arasında sülhün bərqərar olmasına öz töhfələrini verəcəklər... bir–birinə həqiqətən çox yaxındırlar.

*Arzu Abdullayeva*

Arzu Abdullayeva – Helsinki Vətəndaş Assambleyasının Azərbaycan Milli Komitəsinin sədri, Olof Palme adına sülh mükafatı laureatı, Avropa Birliyi və ABŞ hökumətinin Demokratiyanın və Vətəndaş Cəmiyyətinin qurulucunu uğrunda səylərə görə Marşall mükafatı, Niderland Krallığının İnsan Haqqları və Sülh qurulucunu sahəsində səylərə görə Vətəndaş Cəmiyyəti mükafatı laureatı

## ÖN SÖZÜ (ERMƏNİSTAN)

*Sülhün qiyməti var*

Ermənistan–Azərbaycan dövlət sərhədi və təmas xətti boyunca 1994–cü ildən davam edən “nə sülh, nə müharibə” vəziyyətinin qiyməti var və bu qiyməti 18–20 yaşlı erməni və azərbaycanlı oğlanlar ödəyirlər. 1994–cü ildən bəri minlərlə erməni və azərbaycanlı gənc snayper atəşləri və diversiya əməliyyatlarının qurbanı olublar. “Nə sülh, nə müharibə” vəziyyəti üçün bax belə bir bahalı qiyməti ödəyirik.

Əslində, bu əsl mənada qiymət deyil, bu talesiz ailələr, oğullarını itirmiş analar, həyatın son nəfəsinədək oğullarını gözləyən atalar, bacılar, qardaşlardır. Faciə öz ailələrimizə gəlmədikcə sərhəddə həlak olanlara biz kədərli bir infoqrafika kimi baxırıq, onların ölümü üçün acıyıırıq, amma qısa bir müddət sonra unudub yenə “nə sülh, nə müharibə” vəziyyətinə qayıdırıq. O vaxta qədər ki, media bir sətirlə növbəti əsgərin qurban olduğunu bildirir.

“Dondurulmuş” Qarabağ münaqişəsinin, dünyadakı digər silahlı toqquşmalar kimi, öz həlli yolları vardır. Buna nail olmaq üçün məsələnin həllini eyni zamanda üç müstəvidə tapmaq lazımdır.

*Birinci:* Böyük güclər – ABŞ, Rusiya və Fransa kimi ölkələr ATƏT–in Minsk qrupu həmsədrləri kimi buna maraqlı olmalıdır. Düzdür, onlar sadəcə vasitəçilərdir, lakin, əslində münaqişəyə cəlb olunmuş hökumətlər istəsələr böyük güclər sülh quruculuğunun çətin yolunda çox şey edə bilər.

Lakin ABŞ, Rusiya və Fransa həkimlər deyillər ki, bizi müalicə etsinlər. Ən yaxşı halda onlar bizə müalicənin acı həbi və reseptini verə bilərlər. Biz – ermənilər və azərbaycanlılar istəməliyik ki, münafişənin yaralarından müalicə olaq, münafişəni müşayət edən nifrət təbliğatından, müharibə təhdidindən, hər b yönümlü ritorikadan qurtulaq.

*İkinci:* Bu həll münafişəyə cəlb edilmiş bütün hökumətləri maraqlandırmalıdır. Şübhəsiz ki, istənilən həll həmin iqtidar üçün risklidir, çünki nizamlanma prosesi ağır kompromislərdən keçir. Hökumətlər və onların nəzarətində olan medialar hər b yönümlü ritorikaya, müharibə təbliğatına, nifrət nitqinə son qoymalıdır. Çünki həll tapmaq istəyəndə məhz sənin tərəfindən aşılana antiermənçilik və ya antiazərbaycançılıq sənə qarşı işləyir. Ona görə ki, sən öz xalqına öz camaatına nifrət bəslətmisən, sülhə və dözümlülyə isə yer qoymamısən.

*Üçüncü:* Münafişəyə cəlb edilmiş xalqlar, icmalar üçün həll məqbul olmalıdır.

Bax bu üç səviyyədə (üstəlik eyni zamanda olması labüddür) həllə və harmoniyaya nail olmaq lazımdır.

Amma dördüncü səviyyə də mövcuddur ki, bu görünən deyil. Ermənilər və azərbaycanlılar öncə öz ürəklərində, öz fikirlərində sülhə nail olmalıdır. Onlar dərk etməlidir ki, sülh əlverişli və faydalıdır. Onlar anlamalıdır ki, sülhün alternativini bəlli olmayan nəticələrə gətirib çıxara biləcək müharibədir.

Ermənilər və azərbaycanlılar dünyada digər qonşu xalqlar kimi sülh istəyirlər. Lakin sülhün də öz qiyməti var ki, onu ödəmək istəmirlər, ya da ödəməyə hazır deyillər. Sən isə qiyməti ödəmək istəmədiyində, yaxud ödəməyə hazır olmayanda həmin qiyməti 18–20 yaşlı erməni və azərbaycanlı oğullar ödəyir.

Ermənilər və azərbaycanlılar əmindirlər ki, coğrafiya məsələsində bəxtləri gətirməyib. Coğrafiya isə seçim deyil. Buna görə də ermənilərin və azərbaycanlıların xoşagəlməz coğrafiya ilə razılaşmaqdan savayı başqa seçimi yoxdur. Gec–tez ermənilər və azərbaycanlılar reallıqla barışacaq ki, onlar qonşudur, qonşular isə bir il, on il, bəlkə də daha çox müharibə edə bilərlər, amma əbədi savaşa bilməzlər.

Ermənilər hind–avropalı və xristiandır. Azərbaycanlılar türk dil ailəsinin bir hissəsidir və müsəlmandır. Əgər qonşu xalqlar sülh istəyirsə və onun qiymətini ödəməyə hazırdırlarsa, din, dil ya da mənşə maneələr ola bilməz. Bədəl ödəmək olar, amma bu, 18–20 yaşlı oğulların həyatı bahasına olmamalıdır.

Müharibənin ən qızgın dövründə, 1992–1994–cü illərdə ermənilərlə azərbaycanlılar arasında təmaslar qorunmuşdu. Erməni kəndliləri əsir düşəndə insanlar Qırmızı Xaç və öz yüksək vəzifəli məmurlarından əlavə qonşu Azərbaycan kəndlərindən olan birgə çörək kəsdiyi tanışlarına da müraciət edirdilər. Eyni qayda ilə azərbaycanlılar da dara düşəndə öz erməni tanışlarına müraciət edirdilər. Yüzlərcə belə hadisələr vardır ki, qonşu kəndlər məsələləri öz aralarında həll edə bilib bir–birinə yardım göstərib.

Bu gün həmin kəndlərdə əvvəllər öz qonşusu ilə ünsiyyət qurmuş nəsil dünyadan köçür. Həmin kəndlərdə elə bir nəsil yetişir ki, ermənisi azərbaycanlı, azərbaycanlısı isə erməni görməyib. Onlar yeni müharibə təhdidi və qonşu xalqa qarşı nifrət təbliğatı altında böyüyürlər.

Erməni–azərbaycanlı dialoqu ya da ünsiyyəti bu gün daha çox rəsmi xarakter daşıyır. Vaxtaşırı dünyanın müxtəlif şəhərlərində Ermənistan və Azərbaycan rəhbərləri, Xarici İşlər Nazirləri danışıqlar aparırlar. Erməni və azərbaycanlı vətəndaş cəmiyyətlərinin nümayəndələri isə daha sıx tezlikdə görüşüb təmas qururlar.

Qarabağ münaqişəsinin həlli bir–biri ilə danışmaqdan başlamalıdır. Əgər biz birinci addımı atmırıqsa, bir–birimizlə danışmırıqsa, həlli mümkün görünməyən məsələni necə nizamlaya bilərik? Bir–birinə məktub yazan erməni və azərbaycanlı gənclər doğru yerdən başlayıblar. Onlar deyirlər ki, bir–birimizlə ilə danışmaq lazımdır və artıq danışmağa başlayıblar.

Bəlkə onların işlətdikləri dillər və sözlər hələ də bütövlüklə bir–birinə aydın deyil, amma bir–birinə məktub yazıb danışmaq lazımdır. Onların məktubları və xüsusi ilə də məktubların mətnləri erməni və azərbaycanlı cəmiyyətlərinin böyük bir hissəsinin tənqidlərinə düşər ola bilər, lakin tənqidlərdən qorxmaq lazım deyil.

Şübhəsizdir ki, tək məktublar yazmaqla, yaxud da vətəndaş cəmiyyətinin nümayəndələrinin dialoqu ilə Qarabağ münaqişəsinin həllini tapıb layiqli və tərəflər üçün məqbul sayılan nizamlanmaya nail olmaq mümkün deyildir. Amma dövlət səviyyəsində nifrət, müharibə təbliğatı və hər b yönümlü ritorika təbliğ olunduğu, sərhədlərin bağlı, torpaqların minalanmış olduğu bir zamanda məktublar və dialoq məxsusi məna və əhəmiyyətə sahib olur.

Bunu da bir–birinə məktub yazan erməni və azərbaycanlı gənclərə ünvanlanmış məktubum olaraq qəbul edin.

*Tatul Hakobyan*

Tatul Hakobyan jurnalistdir və iki kitabın müəllifidir: “Yaşıl və qara. Artsax gündəliyi” və “Araratdan görüntü. Ermənilər və türklər”. CivilNet–də işləyir və ANI Erməni Tədqiqatları Mərkəzinin yaradıcısıdır.

# **SÜLH NAMİNƏ LAYİHƏSİNİN MİSSİYASI VƏ DƏYƏRLƏRİ**

## **MİSSİYASI**

